

Հ. Կ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

A stylized illustration of a mountain range. The mountains are depicted with white peaks and dark blue and red slopes, set against a dark blue background. The foreground is a solid orange color.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ  
ՀՐԱԲԻՍԱՅԻՆ  
ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ  
ՀՈՂՄՆԱՀԱՐՄԱՆ  
ՊՐՈՑԵՍՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

Հր. Կ. ԳՍԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ՀՐԱԲԵԱՅԻՆ  
ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ՀՈԴՄՆԱՀԱՐՄԱՆ  
ՊՐՈՑԵՍՆԵՐԸ

18024



**ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

Սույն աշխատության մեջ հեղինակը մեկնաբանում է Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակում տարածված ապարների մեխանիկական ու ֆիզիմիական հողմնահարման պրոցեսները:

Գրքույկը կարող է օգտակար լինել աշխարհագրության, երկրաբանության, հողագիտության հարցերով զբաղվողների և հետաքրքրվողների համար:

**Հրատարակվում է  
Երևանի Պետական համալսարանի  
Խմբագրական-հրատարակչական խորհրդի  
որոշմամբ**

**Г А Б Р И Е Л Я Н**  
Грация Карапетович

**ПРОЦЕССЫ ВЫВЕТРИВАНИЯ ВУЛКАНИЧЕСКОГО  
НАГОРЬЯ АРМЯНСКОЙ ССР**

(На армянском языке)

Издательство Ереванского государственного  
университета

19 \* Ереван \* 62

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

«Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի հողմնահարման պրոցեսները» աշխատության նպատակն է ցույց տալ այն հիմնական պրոցեսները, որոնք քայքայում են երկրրի մակերևույթը և ռելիեֆագոյացման արտաժին (էկզոզին) ամենահիմնական ազդակն են հանդիսանում: Մինչև վերջին ժամանակներս Հայկական ՍՍՌ ռելիեֆի ստեղծման ազդակների մեջ ամենամեծ ուշադրությունը նվիրվել է տեկտոնական պրոցեսներին, որոնք ստեղծում են ռելիեֆի մակրոձևեր, իսկ արտաժին բնույթի ազդակները, որոնք առաջնային ռելիեֆի վերակերտման միջոցն են, շատ քիչ ուշադրության են արժանացել: Ելնելով սրանից, վերջին տարիներս դաշտային ուսումնասիրությունների ընթացքում մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել ապարների քայքայման ու տեղատարման-դենուդացիայի վրա: Սույն գրքույկում շոշափվում են միայն հողմնահարման հարցերը. ինչ վերաբերում է դենուդացիոն պրոցեսներին և նրանց հետ կապված ռելիեֆագոյացմանը, ապա դրանք հատուկ ուսումնասիրության կարիք ունեն և կհրապարակվեն մեր կողմից հետագայում:

Աշխատությունը կազմելիս օգտագործել ենք ոչ միայն մեր դաշտային դիտումների արդյունքները, այլև գիտական բազմաթիվ աղբյուրներ ու մի շարք գիտահետազոտական հիմնարկների փորձերի ու դիտողությունների արդյունքները: Հեղինակը խորապես գիտակցում է, որ հողմնահարման պրոցեսների ուսումնասիրմանը նվիրված սույն ոչ ծավալուն աշխատությունը չի կարող սպառիչ լինել հողմնահարման բարդ պրոբլեմի ուսումնասիրման մեջ և որպես առաջին փորձ կարող է ունենալ թերություններ: Ուստի սիրով կընդունվեն բո-

լոր կարգի քննադատական գիտողութիւնները՝ հետազայում  
նրանք վերացնելու համար:

Վերջում հարկ ենք համարում հայտնել մեր երախտագի-  
տութիւնը Ա. Ի. Աղամյանին, Գ. Զ. Քրիգորյանին, Խ. Ծ.  
Նազարյանին, Է. Գ. Մալխասյանին, որոնց գիտողութիւննե-  
րը նպաստեցին աշխատութեան բարելավմանը:

## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Հայկական ՍՍՌ-ն տեղագրված է մերձարևադարձային և բարեխառն գոտիների սահմանում և ունի համեմատաբար ցամաքային կլիմայական պայմաններ, որոնք նպաստում են հրկրի կեղևը կազմող ապարների հողմնահարմանը: Սույն աշխատությունը նվիրված է ռեսպուբլիկայի տերիտորիայում ընդարձակ տարածություն գրավող (մոտ 45 % -ը) հրաբխոյին շրջանների արտաժայթուկ (էֆֆուզիվ) ապարների հողմնահարման պրոցեսների ուսումնասիրմանը:

Հողմնահարում բառի տակ հասկանում ենք արտածին (էկզոգեն) մի շարք ազդակների բարդ կոմպլեքսի ներգործությունը լիթոսֆերայի մակերևույթային շերտերը կազմող ապարների վրա, որի հետևանքով խախտվում է նրանց նախկինում ունեցած հավասարակշիռ վիճակը, փոխվում են ֆիզիկա-քիմիական հատկանիշները:

Մինչև այժմ լույս ընծայված դասակարգերում ու ձևաարկներում, որտեղ այս կամ այն առիթով շոշափվում են հողմնահարման հարցերը, հողմնահարման միասնական պրոցեսը բաժանում են երեք մասի, անջատելով երեք տարբեր տիպեր՝ մեխանիկական (ֆիզիկական), քիմիական և օրգանական: Այս կարգի բաժանումը գալիս է XVIII դարի գերմանական կաբինետային բնա-փիլիսոփաներից, որոնք մեխանիկական, քիմիական և օրգանական հողմնահարմաները ըստ էության դիտում էին որպես առանձին-առանձին տեղի ունեցող պրոցեսներ: Տրադիցիոն կարգով դեռևս շարունակվում է հողմնահարման տիպերի նման ստորաբաժանումը, սակայն այժմ նրանց տրվում է այլ մեկնաբանություն:

Հողմնահարումը միասնական բարդ պրոցես է, որտեղ

մեխանիկական, քիմիական կամ օրգանական հողմնահարումները հանդես են գալիս միաժամանակ: Նրանք չեն կարող գործել առանձին-առանձին՝ ստերիլ ձևով: Ապարի մեխանիկական հողմնահարման պրոցեսը սովորաբար ուղեկցվում է քիմիական վերափոխմամբ, և շի կարելի պատկերացնել մեխանիկական հողմնահարում ընդհանրապես, առանց քիմիական վերափոխման, առավել ևս՝ հակառակը: Ինչ վերաբերում է օրգանական հողմնահարմանը, ապա ըստ էության նա ձևավորվում է մեխանիկական և քիմիական հողմնահարման բաղադրիչներից և նրանց միասնություն լավագույն կոմպլեքսն է: Խոնավ արեադարձային երկրներում առաջնայինը քիմիական պրոցեսներն են, մեծ է նրանց տեսակարար կշիռը, իսկ մեխանիկական քայքայումը միայն ուղեկցողի դերում է: Չոր, անապատային երկրներում հակառակ պատկերն է նկատվում: Այսպիսով, հողմնահարման մեջ պետք է որոնել մի միասնական պրոցեսի տարբեր բաղադրիչները: Ի դեպ՝ պետք է նշել, որ իրավացի են այն հեղինակները, որոնք օրգանական հողմնահարումը չեն առանձնացնում որպես առանձին տիպ: Օրգանիզմները, լինեն դրանք վիթխարի սեկվոյաներ, թև մանրագույն միկրոբներ, ապարների վրա ներգործում են ինչպես մեխանիկական ճանապարհով, այնպես էլ՝ քիմիական: Մենք հարմար ենք համարում օրգանական հողմնահարումը դիտել քիմիականի հետ՝ որպես բիոքիմիական հողմնահարում: Այսպիսով, կարելի է պնդել, որ երկրի մակերևույթի վրա աբիոտիկ հողմնահարում չկա, ապարների մեխանիկական և բիոքիմիական փոխակերպումները բնության մեջ տեղի են ունենում միաժամանակ:

Հողմնահարման ինտենսիվությունը հակադարձ կախվածություն ունի մեջ է էլյուվիալ շերտի հզորությունից և նրանով է կարգավորվում: Էլյուվիալ նստվածքների որոշակի հզորության դեպքում վրա է հասնում դինամիկ հավասարակշռություն հողմնահարման ու դենուդացիայի միջև՝ հողմնահարվում է այնքան նյութ, որքան հեռանում է դենուդացիայի միջոցով: Այստեղից առաջ է գալիս դենուդացիոն հաշվեկշռի բալանսի գաղափարը: Լեռնային երկրներում, ինչպիսին Հայ-

կական ՍՍՌ-ն է, հաշվեկշիռը դրական է, այսինքն գենուգացիան ավելի շատ է, քան կուտակումը: Այս կարգի դատողությունը կարող է ոչ ճիշտ թվալ լեռնալանջերի այն հատվածների համար, որտեղ տեղի է ունենում դելյուվիալ մատերիալի կուտակում: Հզոր դելյուվին կարող է հանգեցնել այն եզրակացության, որ հողմնահարման ինտենսիվությունը մեծ է, մինչդեռ հողմնահարման կեղևը այդ լանջերում ոչ թե մնացորդային է, այլ ստեղծվել է կուտակմամբ, ուստի անհրաժեշտ է բոլոր դեպքերում հաշվի առնել վայրի գեոմորֆոլոգիական պայմանները, որոնք խոշոր նշանակություն ունեն հողմնահարման ինտենսիվությունը պարզելիս:

Հողմնահարման հարցերը խոր ուսումնասիրման են ենթարկվել հատկապես ռուս գիտնականների կողմից: Ա. կադ. Բ. Բ. Պոլինովը տեսականորեն մշակեց այն սկզբունքները, որոնցով պետք է կատարել հողմնահարման պրոցեսների ուսումնասիրությունը: Բ. Բ. Պոլինովը (1956) նշում է, որ՝

1. Մեր տրամադրության տակ ունենալով ապարների քիմիական բաղադրությունը, նրանց միջով քամվող ջրի քիմիական բաղադրությունն ու մնացորդային պրոդուկտների քիմիական բաղադրությունը, կարող ենք գաղափար կազմել ապարների միգրացիոն հատկանիշների մասին՝ տեղական հիպերգենետիկ ցիկլում:

2. Ունենալով տվյալներ տեղական հիպերգենետիկ ցիկլի էլեմենտների միգրացիայի մասին, կարող ենք գաղափար կազմել աշխարհագրական լանդշաֆտի մասին:

XX դարի սկզբին ա. կադ. Վ. Ի. Վերնադսկին հանգեց այն եզրակացության, որ հողմնահարման դեպքում նոր, ավելի կայուն միներալը շատ դեպքում առաջանում է սկզբնական միներալից կամ ապարից հաջորդականությամբ, ստադիաներով, ցույց տալով, որ հողմնահարմամբ ստադիալ պրոցես է: Հետևելով Վ. Ի. Վերնադսկուն, Բ. Բ. Պոլինովը զարգացրեց հողմնահարման ստադիալ տեսությունը, տալով հողմնահարման ընթացքում տարբեր քիմիական էլեմենտների միգրացիոն հատկանիշները, այդ էլեմենտները բաժանելով հինգ խմբի (աղյուսակ 1):

Էլեմենտների միգրացիոն կարգը	Կարգերի կազմը	Միգրացիոն կարգի մեծությունը
1. Էներգիայով հեռացողներ	Cl (Br, I), S	2n · 10
2. Հեշտ հեռացողներ	Ca, Na, Mg, K	n
3. Շարժուններ	SiO <sub>2</sub> (սիլիկատ), P, Mn	n · 10 <sup>-1</sup>
4. Իներտ (թույլ շարժունակ)	Fe, Al, Ti	n · 10 <sup>-10</sup>
5. Պրակտիկորեն անշարժունակ	SiO <sub>2</sub> (կվարց)	n · 10 <sup>-22</sup>

Ելնելով վերոհիշյալից, մեր ուսումնասիրություններում մեծ ուշադրություն ենք դարձրել ապարների ջրային քաշվածքների քիմիական բաղադրությանն ու տարբեր էլեմենտների միգրացիային:

Մերձբևեռային, ինչպես նաև ցամաքային կլիմա ունեցող երկրներում, ինչպիսին Հայկական ՍՍՌ-ն է, մեծ տեսակարար կշիռ ունեն հողմնահարման պրոցեսի մեխանիկական բաղադրիչները, քիմիական վերափոխումը համեմատաբար դանդաղ է ընթանում և մինչև մայր ապարի քիմիական քայքայումը՝ այն հեռանում է դենուդացիոն պրոցեսների միջոցով, ուստի ոչ մի տեղ մենք չենք տեսնում ալիտ ստադիային հասած հողմնահարման կեղև: Հողմնահարման պրոցեսում որոշ դեպքում տեղի է ունենում նյութերի սինթեզ, և գոյանում են երկրորդական ծագման նոր միացություններ: Որպես օրինակ կարող ենք նշել կարբոնատային գոյացումների կուտակումը Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի նախալեռնային շրջաններում:

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակը դասվում է այն երկրների շարքը, որոնք ունեն դրական դենուդացիոն հաշվեկշիռ, ուստի հողմնահարման արգասիքները, վերջին հաշվով, հեռանում են բարձրավանդակի սահմաններից: Մնացորդային հողմնահարման կեղևը լայն զարգացում ունի, լավագույն դեպքում հասնում է մի քանի մետրի, իսկ տեղ-տեղ հաշվվում է սանտիմետրներով: Հայկական ՍՍՌ

հրաբխային բարձրավանդակում մայր ապարները մեծ մասամբ ծածկված են հողային շերտով, որի հաստությունը հասնում է 20—50—100 սմ-ի: Հողային շերտի տակ հաճախանմիջապես հանդես են գալիս մայր ապարներ, իսկ լեռնալանջերի ստորոտներում՝ որոշ դեպքում գելյուլիալ կավա-ավազային կուտակումներ: Իսկական էլյուլիալ հողմնահարման կեղև հողային ծածկի տակ քիչ է հանդիպում: Հայկական ՍՍՏ հրաբխային բարձրավանդակում դինամիկ հավասարակշռություն է ստեղծվել հողմնահարման պրոցեսների և դենուդացիայի միջև: Այնպիսի հզոր հողմնահարման կեղև, ինչպիսին հանդես է գալիս Ուրալում, Ղազախական Մալբա-վոր երկրում կամ պենեպլենի ստադիային հասած այլ երկրներում, մենք չենք տեսնում:

Բացի այն, որ հողմնահարման կեղևը Հայկական ՍՍՏ հրաբխային բարձրավանդակում շատ բարակ է և միջին հաշվով տատանվում է 50—200 սմ, այն նաև շատ երիտասարդ է: Այդ ակնհերև է, որովհետև մնացորդային հողմնահարման կեղևից շարունակում են իրենց միգրացիան այնպիսի էլեմենտներ, ինչպիսիք են՝ քլորը, ծծումբը, որոնք օժտված են միգրացիոն ամենաշարժունակ հատկանիշներով: Սա ապացուցում է, որ դեռևս ապարների քիմիական քայքայումը շատ տեղերում նոր է սկսվում. երիտասարդ լավային ծածկոցներում կան թարմ, հողմնահարման գրեթե չենթարկված զանգվածներ, որոնց մեջ քլորը դեռևս պահպանվում է:


Հայկական ՍՍՏ-ում հողմնահարման պրոցեսներում պարզ արտահայտված է ուղղաձիգ զոնայականությունը: Բարձրադիր մասերը գտնվում են օրթոէլյուլիի (հողմնահարման սկզբնական ստադիայի) այս կամ այն ստադիայում, մինչդեռ ստորոտներում ու գոգավորություններում հանդես է գալիս քլորիդա-սուլֆատային կուտակման կեղև՝ իրեն բնորոշ «գորբիական» լանդշաֆտով: Այստեղ Բ. Բ. Պոլինովի տեսությունը գտնում է իր լրիվ արտացոլումը:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՀՐԱՔԵԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ  
ԱՊԱՐՆԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂՄԵԱՀԱՐՄԱՆ  
ՊՐՈՑԵՍՆԵՐԻՆ**

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակում, ինչպես նաև ողջ Հայկական հրաբխային բարձրավանդակում մեծ տարածում ունեն երիտասարդ վերին երրորդական ու շորրորդական ժամանակաշրջանի հրաբխային ծագման ապարները, որոնք առաջացնում են ընդարձակ լավային ծածկոցներ, իրենց տակ թաղելով պալեո-ոելիեֆը: Ակադ. Ֆ. Յու. Լեվինսոն-Լեսսինգը (1928) Հայկական բարձրավանդակը ինչպես հրաբխային երևույթների մեխանիզմի տեսակետից, այնպես էլ հիմքային ու թթու լավաների ասոցիացիաներով նմանեցնում է Իսլանդիային: Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակում ուելիեֆի մակրոձևեր են ստեղծում՝ Խոնավ (Կեչուտի), Ղուկասյանի, Չլդրբի, Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Եղեգիսի, Սյունիքի լեռնաշղթաներն ու զանգվածները, կան նաև պլատոներ ու միջլեռնային գոգավորություններ, որոնք ծածկված են լավային ծածկոցներով: Գրանցից են՝ Վերին Ախուրյանի, Լոռվա, Լենինականի, Ապարանի, Եղվարդի Ծոաբլուրի և այլ պլատոները:

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի հրաբխականությունը սերտորեն կապված է հղել երկրի տեկտոնական զարգացման հետ: Ամեն անգամ, երբ խախտվել է երկրի կեղևի տեկտոնական հավասարակշռությունը, հրակայական տեկտոնական ճեղքերից ժայթքած հրահեղուկ լավան հարթեցրել է պալեո-ոելիեֆի անհարթությունները, առաջացնելով լավային ծածկոցներ ու հոսքեր: Ծեղքային արտավիժումները նշանավոր են նրանով, որ արտավիժման պրոդուկտները հղել են հիմքային, համեմատաբար քիչ մածուցիկ, ջրիկ ու հոսունակ, որի հետևանքով ստեղծել են թույլ թեքություն ուղորկ լեռնալանջեր: Նրանց արտավիժման պրոցեսը հղել է հանգիստ, առանց զազերի նշանակալի անջատման:

Հայկական ՍՍՌ-ում կան մի շարք պոլիգեն հրաբուխներ՝ Արագածը, Արայի լեռը, Կողգաթը, Մեծ Իշխանասարը



- ⎓
 Հիմնական լեռնաշղթաներ  
 Երկրորդական լեռնաշղթաներ
- ⎓
 Հրաբխային շրջաններ

Գծ. 1. Հայկական ՍՍՌ լեռնազրույթյան սխեման

և այլն, որոնց լանջերին տարածված են բազմաթիվ ժայթ-  
քումների լավաներն ու լիթոկլաստիկ նյութերը: Բարձրա-  
վանդակում առկա են նաև էքստրուզիվ կոներ՝ Մեծ Արտե-  
նին, Հադիսը, Մեծ Սպիրտակասարը և այլն, որոնք խառնա-  
րան շունեն, մագման ու թթու լիթոկլաստիկ մատերիայն  
այստեղ դուրս է մղվել առանց լավային հոսքեր առաջաց-  
նելու: Մի շարք բարձրավանդակներում ու զանգվածներում  
մեծ զարգացում ունեն պարազիտային և խարամային կո-  
ները, որոնք դասավորվել են տեկտոնական ճեղքերի երկա-  
րությամբ: Այս տեսակետից ուշագրավ են Գեղամա լեռներն  
ու Ղարաբաղի (Սյունիքի) բարձրավանդակը: Պարազիտա-  
յին ու խարամային կոները շորրորդական հրաբխականու-  
թյան վերջին էտապի՝ վլուրմյան ու հտվլուրմյան ժամանա-  
կաշրջանի գոյացումներ են, որոնց առաջացմանը հավանա-  
բար ականատես է եղել մարդը:

Նեոգենի և շորրորդական հրաբխականության պարոք-  
սիզմի յուրաքանչյուր ցիկլում սկզբում արտավիժել են հա-  
մեմատաբար հիմքային լավաներ՝ բազալտներ, անդեզիտա-  
բազալտներ, այնուհետև՝ աստիճանաբար անցում է կատար-  
վում թթու դացիտներին, ակալային դացիտներին, լիպա-  
րիտներին:

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի արտա-  
ժայթուկների (էֆֆուզիվների) հողմնահարումը կապված է  
ապարների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների, քիմիա-  
կան կազմի, ստրուկտուրայի, տեքստուրայի, անջատման  
ձևերի, շերտերի տեղադրման, մորֆոլոգիայի, դիրքագրման,  
արտավիժման բնույթի և այլ հարցերի հետ: Ապարների  
ներքին հատկանիշներն ու արտածին հողմնահարման ազ-  
դակները փոխադարձաբար կապի մեջ մտնելով պայմանա-  
վորում են հողմնահարման բնույթն ու ինտենսիվությունը:  
Պետք է նշել, որ լավաները քիմիական կազմի տեսակետից  
միմյանցից շատ շեն տարբերվում. այդ ցույց է տալիս, որ  
լավաների սնման օջախը եղել է մեկ բնդհանուր և այդ լա-  
վան տարբեր էտապներում ժայթքելով տվել է խիստ տար-  
բեր ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներ ունեցող արտա-  
ժայթուկ (էֆֆուզիվ) նյութեր: Կախված մագմայի արտա-

վիժման և եփմից՝ նույն քիմիական բազադրույթյան մագման մի դեպքում տվել է խիստ հոծ և մեծ դիմադրողականութ-  
յամբ օժտված դացիտներ, մեկ այլ դեպքում՝ թույլ դիմա-  
դրողականությամբ ազլումերատներ, իզնիմբրիաներ, պեմ-  
զա և այլն: Երբեմն նկատվում է նաև հակառակ երևույթը՝  
երբ համեմատաբար տարբեր քիմիական բազադրույթյան լա-  
վաներ օժտված են նույն դիմադրողականությամբ: Այստե-  
ղից կարելի է հանգել այն եզրակացության, որ հողմնա-  
հարման պրոցեսների մեջ, հատկապես մեխանիկական  
հողմնահարման դեպքում ապարների քիմիական կազմը,  
ունենալով կարևոր նշանակություն, այնուամենայնիվ որո-  
շիչ չէ: Տարբեր ապարների ուսումնասիրությունը ցույց է  
տալիս, որ հողմնահարման նկատմամբ մեծ դիմադրողակա-  
նությունը ուղիղ համեմատական է ապարների ամրությանը,  
այսինքն՝ սեղմման ժամանակավոր դիմադրությունը, ուստի  
վերջինս ամենակարևոր գործոններից է ապարների բնութա-  
գրման մեջ: Սեղմման ժամանակավոր դիմադրությունը իր  
հերթին կախված է ապարի ստրուկտուրայից, տեքստուրա-  
յից, անջատումների բնույթից, ազլումերատների ցեմենտաց-  
ման աստիճանից: Այսպիսով, որպես ամենակարևոր զեկա-  
վարող ազդակներ մնում են՝ սեղմման ժամանակավոր դի-  
մադրությունը և ապարների կառուցվածքը (ստրուկտուրան)  
ու տեքստուրան. մնացած ազդակները որոշիչ չեն, սակայն  
նշանակություն ունեն հողմնահարման ընդհանուր պրոցեսի  
մեջ: Ելնելով սրանից, Հայկական ՍՍՌ կայնոզոյի, հրաբխա-  
կանության նյութերը մենք բաժանում ենք հրեք հիմնական  
խմբի՝

1. Մեծ դիմադրողականությամբ օժտված հոծ ապար-  
ներ,
2. Միջակ դիմադրողականությամբ օժտված ապարներ,
3. Թույլ դիմադրողականությամբ փխրուն ապարներ:

#### 1. ՄԵԾ ԳԻՄԱԳՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՕԺՏՎԱԾ ՀՈԾ ԱՊԱՐՆԵՐ

Այս խմբի մեջ են մտնում այն բոլոր արտաժայթուկ  
ապարները, որոնք ունեն սեղմման ժամանակավոր մեծ

դիմադրություն (ավելի քան 500 կգ/սմ<sup>2</sup>), ծավալային կշիռը անցնում է 1,5-ից, ունեն սովորաբար աֆանիտային և մանր բյուրեղային, երբեմն՝ վիտրոֆիրային ստրուկտուրա: Անզեն աչքով դիտելիս՝ ապարը հոծ է, ծակոտիներ չունի, դժվարությամբ է կտրվում: Այս խմբի հիմքային լավանների տիպիկ ներկայացուցիչը բազալտն է: Տիպիկ բազալտները սովորաբար քիչ են տարածված և հանդիպում են Գեբեղի կանիոնում, Արագածի հյուսիսային լանջին, Կողզաթի զանգվածում, Երևանի շրջակայքում, Ազատ գետի կանիոնում և այլ տեղերում ու պատկանում են շորոք-դական հասակին: Բազալտները սովորաբար մուգ մոխրագույն են, երբեմն՝ սև: Լրիվ բյուրեղացած խոշորահատիկ տարատեսակը՝ դոլերիտը, ավելի բաց գույնի է, շնորհիվ պլազիոկլազների պարունակության: Բազալտային մագման սառչելիս հզոր հոսքերում առաջացնում է մեծ քանակությամբ սյունաձև անջատումներ, իսկ մակերևութային շերտում, որտեղ լավան արագությամբ է սառչում՝ կոշտաբեկորավոր կեղև: Փազերի առատության դեպքում մակերևութային շերտում հաճախ մեծ ծակոտկենություններ խարամային շերտ է ստեղծվում: Ծակոտկենությունը ըստ խորության փոքրանում է, հետևաբար ծավալային կշիռը մեծանում է, մոտենում է տեսակարար կշռին: Ծավալային կշռի տեսակետից Զ. Ա. Հացագործյանը (1961) Հայկական ՍՍԻ բազալտները բաժանում է երկու խմբի՝ թեթև բազալտներ ու ծանր բազալտներ: Առաջին խմբի ներկայացուցիչներն ունեն մինչև 2000—2200 կգ/մ<sup>3</sup> ծավալային կշիռ: Սրանցում դաշտային շպատները շատ են՝ համեմատած երկրորդ խմբի բազալտների հետ: Երկրորդ խմբում ապարի ծավալային կշիռն անցնում է 2200 կգ/մ<sup>3</sup>-ից, սրանց մեջ համեմատաբար շատ են գունավոր՝ երկաթային ու մագնեզիումային միներալները: Այս խմբի բազալտները շատ հոծ են, սովորաբար ինտերսերտալ ստրուկտուրայով, որի շնորհիվ ուշ են հողմնահարվում: Բազալտների միներալոգիական կազմի մեջ են մտնում հիմնականում հիմքային պլազիոկլազներ՝ լաբրադոր, երբեմն բիտովնիտ, մոնոկլինային պիրոքսեններ, մագնետիտ, օլիվին և այլն: Գլխավորները

տառաչին երկուան են՝ պլազիոկլազը և պիրոքսենը: Ապակին սովորաբար քիչ է, սակայն երբեմն հասնում է նշանակալի շափերի և ապարին տալիս է հիալինային ստրուկտուրա: Բազալտները Հայկական ՍՍՌ-ում տարածված ապարների մեջ ամենից մեծ դիմադրողականությունն ունեն: Ճնշման ժամանակավոր դիմադրությունը, այսինքն՝ ամրության սահմանը շոր ապարներում հասնում է միջին հաշվով 1500—2000 կգ/սմ<sup>2</sup>. ջրով հագեցնելու դեպքում, ամրությունը զգալի շափով իջնում է. այն նվազում է նաև սառեցման ցիկլեր անցնելուց հետո:

Բազալտները հաճախ լինում են ծակոտկեն: Մակոտիները լավային հոսքերի մակերևույթին ավելի խոշոր են, երբեմն նույնիսկ՝ խոռոչավոր: Ըստ խորություն ծակոտկենություն փոքրացմանը զուգընթաց մեծանում է ապարի ամրությունը: Ավանի բազալտների էքսպերիմենտալ ուսումնասիրությունը Շինանյութերի և կառուցվածքների ինստիտուտում տվել է հետևյալ արդյունքները (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Բազալտների տեսակը	Մագմա. կշիռը կգ/մ <sup>3</sup>	Տես. կշիռը	Մակոտկենությունը	Ամրությունը կգ/սմ <sup>2</sup>		
				Շոր վրձնակում	Ջրով հագված վրձնակում	50 ցիկլ սառեցումից հետո
Խիտ բազալտներ	2657	2,89	8,05	1830	1320	1290
Մանր ծակոտկեն բազալտներ	2420	2,88	15,90	1120	840	785
Խոշոր ծակոտկեն բազալտներ	2240	2,87	22,14	594	473	469

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, որքան փոքրանում է ապարի ծավալային կշիռը, այնքան փոքրանում է նաև նրա ամրությունը: Նկատելի է նաև այն, որ ամենից ամուր բազալտները խորքային բազալտներն են, որոնք չեն կրել ջերմաստիճանային արագ տատանումների ազդեցությունը: Երկրի մակերևույթին մոտ գտնվող բազալտները տարիների

ընթացքում ենթարկվելով սառեցման, կորցնում են ամրությունը:

Բազալտների հողմնահարումն սկսվում է պլագիոկլազների քայքայումից: Դաշտային շպատը (լաբրադոր, բիտովնիտ, անորթիտ) ենթարկվում է թե՛ ջերմային և թե՛ քիմիական հողմնահարման. որքան պլագիոկլազները խոշորահատիկ են լինում, այնքան քայքայման պրոցեսը ինտենսիվ է ընթանում: Անձրևաջրերի ազդեցության տակ (որի մեջ պարունակվում է որոշ քանակի  $\text{CO}_2$ ) պլագիոկլազը քայքայվում է և վեր է ածվում կավային նյութի, անջատվում են սիլիկահող և կարբոնատներ: Հետագայում կարբոնատների մի մասը լվացվում է, իսկ մյուս մասը կլանվում է միկրոօրգանիզմների կողմից և կուտակվում-բյուրեղանում որպես զրծվար լուծվող կալցիումի կարբոնատ-կարբոնատային կեղև: Սիլիկահողերի լվացման ժամանակ պլագիոկլազը անցնում է հիդրարգիլիտի, օլիվինը՝ լիմոնիտի, և վերջ ի վերջո մնում են տեղում ալյումինի ու երկաթի ջրային օքսիդները: Միներալների նշված վերափոխումների զգալի մասը կատարվում է անմիջապես երկրի մակերևույթին, իսկ մի մասն էլ՝ լավային շերտի խորքում:

Հայկական ՍՍՒ հրաբխային բարձրավանդակի արտաժայթուկների մեջ ամենից մեծ տարածում ունեն անդեզիտաբազալտները: Սրանք տարածվում են Ախալքալաքի բարձրավանդակից մինչև Ղարաբաղի բարձրավանդակը, կազմելով գրեթե բոլոր խոշոր հրաբխային զանգվածների ամուր հիմքը:

Անդեզիտաբազալտները ունեն մոխրագույնից մինչև սև գույն, հանդես են գալիս հիմնականում սալանման, երբեմն նաև սյունաձև, բեկորավոր անջատումներով: Անդեզիտաբազալտների ստրուկտուրան միկրոսկոպի տակ հիմնականում միկրոլիտային է. մեծ մասամբ հիալոպլիտային, որոշ դեպքերում տրախիտային:

Ըստ Ֆ. ՅՈՒ. Լեվինսոն-Լեսսինգի (1929) անդեզիտաբազալտները պակաս են բյուրեղացած, քան զոլերիտային բազալտները. խմբավորվում են վիտրոֆիրային ստրուկտուրային տիպի մեջ, կան աֆիրային, էվպորֆիրային և մասնավոր դեպքերում նաև պորֆիրային ստրուկտուրաներ: Պոր-

Ֆիրային ստրուկտուրայով անդեզիտա-բազալտներ նկարագրում է Բ. Մ. Կուպլետսկին՝ Գեղամա լեռնաշղթայում: Ըստ Ա. Ս. Գինզբերգի (1934) պլագիոկլազների ներփակումները այս ապարներում խորթ են և իրենցից ներկայացնում են կամ ինտրատելուրիկ զոյացումներ, կամ հանդիսանում են բազալտային մագմայի ճանապարհին հանդիպած ավելի հին անդեզիտների, կամ այլ ապարների ասիմիլյացիայի շավարտված պրոցեսի մնացորդ: Պլագիոկլազները սովորաբար միատարր են, արտահայտված են լաբրադորով կամ անդեզինով: Գունավոր միներալներն արտահայտված են մոնոկլինային պիրոքսենով, բացի ավգիտից, հանդիպում է նաև հիպերստեն: Ամֆիբոլներն ու փայլարները քիչ են, ուղեկցում են ավգիտին:

Անդեզիտա-բազալտները բազալտների համեմատությամբ ավելի թույլ են, սեղմման ժամանակավոր դիմադրությունը տատանվում է 400—800 կգ/սմ<sup>2</sup>: Սրանց ծավալային կշիռը տատանվում է 1900—2400 կգ/սմ<sup>3</sup>, ինչպես ցույց է տալիս ներքոհիշյալ աղյուսակը (աղյուսակ 3). ամբուլթյունը նվազում է ջրակլանման ու սառեցման ցիկլեր անցնելուց հետո (ըստ Զ. Ա. Հացագործյանի, 1961):

Աղյուսակ 3

Նմուշը վերցնելու վայրը	Նմուշները քանակը	Ծավալ/կշիռը կգ/մ <sup>3</sup>	Ցեռակ. կշիռը գ/սմ <sup>3</sup>	Ծակոտկ. %	Ջրակլ. ըստ կշռի %	Ամբուլթյան սահմանը սեղմման զեպրում կգ/սմ <sup>2</sup>		
						չոր վիճակում	ջրով հագվիճակում	50 ցիկլ սառեցումից հետո
Բազաբշայ	2	2105	2,79	25,0	5,2	615	673	667
Ջերմուկ	1	2011	2,86	29,6	4,1	432	379	524
Կեչուտ	1	2101	2,79	24,6	4,4	537	313	330
Նորազուգ	1	1957	2,77	29,4	7,2	569	422	547
Սարալի	6	2247	2,74	17,9	3,6	813	698	645
Սիսիան	1	2340	2,81	16,7	4,8	874	1063	716
Շաքի	5	1900	2,81	32,8	5,5	390	851	306

19024

Անդեզիտա-բազալտները ավելի քիչ հոծ են, ուստի ավելի շուտ են քայքայվում, քան բազալտները: Հողմնահարումը սկսվում է պլագիոկլազներից և ընթանում է այնպես, ինչպես բազալտների մոտ, միայն ավելի արագ: Անդեզիտա-բազալտային քարաբեկորները հաճախ մի քանի տարվա ընթացքում դեսիվամացիայի են ենթարկվում:

Միջին թթվության լավաներից Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակում զգալի տեղ են զբաղում անդեզիտներն ու տրախի-անդեզիտները. ստրուկտուրային տեսակետից ու միներալոգիական կազմով այս երկու ապարները միմյանցից քիչ են տարբերվում:

Անդեզիտները տարածված են Արագածի հարավային լանջերում, Գեղամա, Վարդենիսի լեռնաշղթաներում ու այլ հրաբխային զանգվածների վրա: Անդեզիտները լինում են մոխրագույնից մինչև սև գույնի. սովորաբար հոծ են, առաջացնում են թերթավոր, սալանման, բեկորավոր և երբեմն գնդաձև անջատումներ: Հիմնական զանգվածում մեծ տեղ է զբաղում հրաբխային ապակին, որը ցեմենտացնում է պլագիոկլազները. ապարներում գերակշռում է հիալոպիլիտային ստրուկտուրան: Պորֆիրային անջատումներում հանդես են գալիս պլագիոկլազներ ու պիրոքսեններ: Պլագիոկլազները սովորաբար արտահայտված են անդեզիտով, որոնք կազմում են ողջ զանգվածի մինչև 50 %-ը:

Անդեզիտները և տրախի-անդեզիտները հոծ ապարներ լինելով, ունեն բավական մեծ սեղմման դիմադրություն (300—900 կգ/սմ<sup>2</sup>), սակայն սրոշ տարատեսակները բավական արագ են հողմնահարվում և պատկանում են ապարների մեր դասակարգման երկրորդ խմբին, ինչպես, օրինակ՝ Կապուտանի անդեզիտները: Անդեզիտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշները հետևյալ պատկերն են ներկայացնում (ըստ Ձ. Ա. Հացագործյանի, տե՛ս աղյուսակ 4-ը):

Առաջին խմբի մեծ դիմադրողականությամբ օժտված ապարների շարքին են դասվում նաև անդեզիտա-գացիտները, տրախիտները և սրոշ տուֆեր: Անդեզիտա-գացիտներն ու գացիտները արտահայտված են սպիտակամոխրագույն տարատեսակներից մինչև սևը, իսկ ակալային գացիտները՝

Նմուշը վերցնելու վայրը	Նմուշների քանակը	Մագալ. կշիռը կգ/մ³	Տեսակ. կշիռը գ/սմ³	Մակուսի. %	Զրակ. ըստ կշռի %	Ամբուլիայի սահմանը սեզաման ղեպքում կգ/սմ³		
						չոր վիճակում	չոր վիճակում հազ. կգ/սմ³	50 ցիկլ սահմանից հետո
Անդեղակոթ	1	1989	2,81	29,2	6,0	392	325	304
Գորիս	1	2465	2,76	10,7	2,4	965	655	561
Կապուտան	4	2340	3,69	12,7	4,5	892	680	730
Նոր Ամբերգ	1	2171	2,62	17,1	3,8	321	254	169
Խնձորուտ	8	2355	2,70	12,8	3,1	930	733	587

ձյուլիանման սև գույնով: Սրանք հանդիպում են գրեթե բոլոր խոշոր հրաբխային զանգվածների վրա, սակայն ունեն համեմատաբար սահմանափակ տարածում: Քարմ ապարներն ամուր են, ղծվարույթյամբ են ջարդվում, հոծ են: Ստրուկտուրային տեսակետից հանդիպում են խիստ բազմապիսի տարատեսակներ՝ պորֆիրային, ինտերսերտալ, աֆանիտային, տրախիտային, ապակենման և այլն: Ապարների հիմնական զանգվածը միկրոլիտային է, կազմված է պլազիոկլազներից, ինչպես նաև պիրոքսեններից, որոնք շատ ղեպքում թաղված են ապակու մեջ: Պլազիոկլազների ներփակումները երբեմն կազմում են ողջ զանգվածի 40 %-ը: Պեխտեյնային դացիտներում պլազիոկլազների ներփակումները խոշոր են, երբեմն ֆլյուիդալ տեքստուրայով: Ներփակումները արտահայտված են դաշտային շպատներով, որոնք թաղված են սև զանգվածի մեջ, որը և պատճառ է դառնում արագ ջերմային հողմնահարման, այս տեսակետից պելլըտեյնային դացիտները պատկանում են ապարների երկրորդ խմբին: Այս ապարները արեգակի ճառագայթների ազդեցությանը արագությամբ կեղևաթափվում են: Պեխտեյնային մեծ քանակությամբ ջուր է պարունակում, որը նույնպես կարող է նրա արագ քայքայման պատճառ հանդիսանալ: Վերոհիշ-

յալ ապարներն ունեն 2000—2500 կգ/մ<sup>3</sup> ծավալային կշիռ, տեսակարար կշիռը՝ 2,5—2,8, ծակոտկենությունը՝ 4—20 %, ժամանակավոր դիմադրություն գործակիցը տատանվում է 500—1700 կգ/սմ<sup>2</sup>: Ամենից ինտենսիվ հողմնահարվում են այն տարատեսակները, որոնց մեջ ապակու պարունակությունը մեծ է, և դաշտային շպատների ներփակումները խոշոր են:

Հայկական ՍՍՌ-ի հրաբխային թթու արտավիժման նյութերից են տուֆերը, որոնք դացիտային լավաների մի տարբերակն են ներկայացնում: Պետրոգրաֆիների մեծ մասը հետեւելով Ա. Ն. Զավարիցկուն, Արթիկի տուֆերը համարում է իգնիմբրիտներ, որոնք պիրոկլաստիկ մատերիալի կուտակման արդյունք են: Պ. Ի. Լեբեգևը այդ նույն տուֆերը դիտում է որպես տուֆալավաներ և համաձայն չէ Ա. Ն. Զավարիցկու տեսակետին: Տուֆերը ունեն շատ անբերականներ, որոնք ամբուլյան տեսակետից միմյանցից շատ են տարբերվում:

Տուֆերի ամբուլյունն ու դիմադրողականությունը կախված է այն բանից, թե որքան խիտ է այն: Եթե ջերմազոդման պրոցեսը տեղի է ունեցել բարձր ջերմաստիճաններում, ապա ցեմենտացումը կատարյալ է, ծակոտկենությունը՝ փոքր: Սակայն հանդիպում են այնպիսի ազլումերատներ, որոնք թույլ են ցեմենտացած, համասեռ չեն, ծակոտկենությունը մեծ է, ուստի ամբուլյունը փոքր է: Այսպիսով, ամբուլյունը այստեղ ֆունկցիոնալ կապակցության մեջ է գտնվում ծավալային կշռից:

Ամենից մեծ դիմադրողականությամբ օժտված է անիական տիպի տուֆը, որ ջերմազոդվել է հավանաբար ամենից բարձր ջերմաստիճաններում: Նա համասեռ է, գրեթե չի պարունակում միներալների խոշոր բյուրեղներ ու ծանր ապարների բեկորներ: Առավելապես կազմված է հրաբխային ապակուց, սիլիկահեղի քանակը հասնում է 67—70 %-ի (ըստ Զ. Ա. Հացազորժյանի): Արթիկյան տիպի տուֆը ավելի ծակոտկեն է. հիմնական զանգվածի հրաբխային ապակին պարփակում է դաշտային շպատի և այլ միներալների բյուրեղներ: Այս տիպի տուֆերը բավական դիմացկուն են հողմնահարման պրոցեսների նկատմամբ: Ամբուլյունը չոր վիճակում

հասնում է 90—120 կգ/սմ<sup>2</sup>, ցրտադիմացկուն են. օրինակ՝ 35 ցիկլ սառեցումից հետո ամրությունը գրեթե չի փոխվում: Արթիկի տուֆից կառուցած շենքերը զարեր շարունակ պահպանում են իրենց թարմությունը: Այսպես, Ստեփաննոսի (Լմբատավանք) եկեղեցին, որ կառուցվել է VII դարում, հողմնահարման ցայտուն արտահայտված հետքեր չունի. միայն հիմքին մոտ շարքերում տեղ-տեղ նկատվում է կեղևաթափման պրոցես:

Երևանյան տիպի տուֆերը ունեն բյուրեղային-լիթա-վիտրոկլաստիկ ստրուկտուրա: Տեքստուրան մանրածակոտ կեն է. ներփակումները արտահայտված են օլիգոկլադ-անդեզիտով: Քիմիական բաղադրությամբ պատկանում են անդեզիտա-դացիտային և տրախիտային շարքին: Այս տիպի մեջ են մտնում նաև լենինականի տիպի տուֆերը, որոնք ունեն ամրության մեծ դիսպարոն. կան այնպիսիները, որոնք հոծ են, դիմանում են մինչև 500—550 կգ/սմ<sup>2</sup> ճնշման, ուշ են հողմնահարվում: Օրինակ՝ Էջմիածնի Մայր տաճարը կառուցվել է նորակերտի տուֆից, 303 թ. և մինչև այժմ հողմնահարման ցայտուն արտահայտված հետքեր չի կրում: Երևանյան տիպի տուֆերի շատ տարատեսակներ կան, որոնք փրկրուն են և պատկանում են մեր դասակարգման երկրորդ և նույնիսկ երրորդ խմբին: Նույն հանքավայրում տուֆի շերտի մեջ տարբեր ամրության ենթաշերտեր են հանդիպում, որը մեծապես կախված է ջերմազոոման բնույթից: Երևանյան տիպի տուֆերին ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներով շատ նման են բյուրականյան տիպի տուֆերը:

Տուֆերի հողմնահարումը արտահայտվում է կեղևաթափմամբ: Մակերևութային շերտից մի քանի միլիմետր հաստությամբ տուֆի շերտը պոկվիլով, թափվում է ցած: Այս երևույթն ավելի ակնառու է շենքերի գետնամերձ մասերում, որտեղ խոնավությունը շատ է: Դիտումները ցույց են տալիս, որ պրունտային ջրերը բարձրանալով որոշ բարձրության՝ այնտեղ գոլորշիանում են, թողնելով իրենց հետքերած աղերը: Վերջիններս կուտակվելով այդ շերտում, նպաստում են ջերմային ու քիմիական հողմնահարման պրոցեսներին:

Միջակ դիմադրողականությունը օժտված ապարները ունեն համեմատաբար փոքր ծավալային կշիռ (1200—1600 կգ/մ<sup>3</sup>), սեղմման դիմադրողականությունը կազմում է 30—500 կգ/սմ<sup>2</sup>: Այս կարգի ապարների շարքն են դասվում խոշորահատիկ և միջահատիկ պորֆիրային ստրուկտուրա ունեցող դաջիտներ (պեխշտեյնային), անդեզիտների, տուֆերի որոշ տեսակներ, ֆելզիտային տուֆերը, լիպարիտները և այլն: Նույնիսկ մեծ ծավալային կշիռ ու մեծ սեղմման դիմադրողականություն ունեցող որոշ ապարներ շնորհիվ զանգվածի ոչ համասեռ բնույթի և հատիկավորության՝ արագությունը քայքայվում են: Ինչպես նշել ենք, շատ ապարներ կան, որոնց որոշ տարատեսակներ հոծ են, իսկ որոշ տարատեսակներ էլ պատկանում են երկրորդ խմբին, ուստի հաճախ դժվար է լինում որոշել, թե ապարը որ խմբին է պատկանում:

Երկրորդ խմբի ապարներից են որոշ տեսակի անդեզիտներ: Ամենատիպիկ ներկայացուցիչները Կապուտանի անդեզիտներն են: Թարմ ապարն ունի մեծ ամրություն, մթնոլորտային ազդակների ազդեցության տակ բավական արագ քայքայվում է: Գ. Մալխասյանը և Ա. Ա. Ջաֆարովը ուսումնասիրելով Երևանի կառավարական տան գետնամերձ շարքերի անդեզիտները (1954), ցույց են տալիս, որ 15—25 տարվա ընթացքում արտաքին պատերի քարերի մակերևույթը հողմնահարվել է մինչև 5 սմ խորությունը: Այստեղ մեխանիկական քայքայումը առաջնային է, զգալի տեղ ունի նաև բիոքիմիական հողմնահարումը: Նույնանման հողմնահարում նկատվում է նաև այլ շենքերի պատերին, որոնք կառուցված են Կապուտանի անդեզիտներից: Հողմնահարմանը նպաստում է խոնավությունը, որի առկայությամբ բակտերիաներն ինտենսիվ են զարգանում: Աշխատանքում զետեղված քիմիական անալիզներից երևում է, որ քայքայված անդեզիտներում  $\text{SiO}_2$ -ի քանակը պակասում է, իսկ  $\text{SO}_3$  անիոնը ավելանում է, ավելանում է նաև  $\text{CaO}$ -ի և ջրի քանակը, ժամանակի ընթացքում ապարի քայքայված մասերում գոյանում է կարբոնատային կեղև:

Ֆեկզիտային տուֆերը թարմ վիճակում բավական ամուր ապարներ են, ի տարբերություն մնացած տուֆերի՝ ունեն երրորդական հասակ և հիմնականում առաջացել են ջրային միջավայրում: Ունենալով խիստ մանրահատիկ ստրուկտուրա, ապարը համասեռ է, ունի մանր ծակոսկենություն և խիտ է (ծավալային կշիռը հասնում է 2000 կգ/մ<sup>3</sup>), սակայն սառեցման մի քանի ցիկլեր անցնելուց հետո, ինչպես նաև ջրով հագեցնալու դեպքում ամրությունը արագությունով կորցրնում է, փափկում: Մթնոլորտային ազդակների ազդեցությամբ արագ կերպով հողմնահարվում է: Երևանի կառավարական տան, ՀԿՊ Կենտկոմի, Ժողտնտխորհի շենքերի, «Արմենիա» հյուրանոցի պատերին կարելի է նկատել հողմնահարման հետքեր, շնայած որ նրանք կառուցվել են վերջին տարիներս:

Երկրորդ խմբի ապարներից են լիպարիտները, որոնք ունեն սահմանափակ տարածում (Մեծ Սպիտակասար, Մեծ Արտենի, Հադիս և այլն): Սովորաբար կեղտոտ սպիտակավուն են, շերտավոր, շատ դեպքում օբսիդիանների հետ շերտավորված: Լիպարիտներն ունեն ապակեման կառուցվածք, հոծ պարուկտուրա. խիտ տարատեսակներում անգեյն աչքով կարելի է նկատել պլազիոկլազներ և փայլարներ:

Օբսիդիանները ամորֆ ապակեման զանգված են ստեղծում: Համասեռության պատճառով դիմացկուն են ջերմային հողմնահարման նկատմամբ, սակայն կլիվածի հետևանքով ինտենսիվ է արտահայտվում մակրոժելիվացիան: Ի տարբերություն օբսիդիանների՝ լիպարիտները հողմնահարման գործոնների նկատմամբ մեծ դիմադրողականություն չունեն և արագությամբ փափկում են ու քայքայվում:

### 3. ԹՈՒՅՈՒ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆ ՌԵՅՈՒՄԸ ՕՃՏՎԱԾ ԱՊԱՐՆԵՐ

Այս խմբի մեջ ենք դասում շքեմենտացված կամ թույլ ցեմենտացված խարամային նյութերը, պեմզային ավազը, թույլ ցեմենտացված տուֆա-բրեկչիաները, ինչպես նաև ոչ հրաբխային, ցամաքային ծագման դելյուվիալ, ֆլյուվիոգլայա-ցիալ և այլ նստվածքները:

Չորրորդական հրաբխային գործունեության արդյունք են հանդիսանում բազմաթիվ խարամային կոներ Արագածում, Գեղամա լեռներում, Ղարաբաղի բարձրավանդակում և այլն: Այստեղ հանդես են գալիս թթու լավային փխրուն ագլոմերատային մատերիալ՝ խարամ, հրաբխային ումբեր, լյապիլ, մոխիր: Թեև խարամի կամ սկեզայի առանձին կտորը բավական ամուր է, սակայն ցեմենտացիայի բացակայությամբ հետևանքով փխրուն մատերիալը արագությամբ հեռանում է հոսող ջրի միջոցով:

Հողմնահարման նկատմամբ թույլ դիամորֆականություն ունեն նաև տուֆաբրեկչիաները: Եթե նրանք ցեմենտացած են, դիամորֆականությունը մեծ է, սակայն այն դեպքում, երբ ցեմենտացած չեն, արագությամբ քայքայվում են: Որպես ախպիկ օրինակ կարող են ծառայել Գորիսի շրջանի տուֆաբրեկչիաները, որտեղ հոսող ջրի միջոցով ստեղծվել են հողային բուրգերի անտառներ: Արհեստական անձրևացումը այստեղ ցույց տվեց, որ 10 բուրգ անձրևացման ընթացքում (բուրգում 2 մմ ինտենսիվությամբ) յուրաքանչյուր 1 քառ մ մակերեսից լվացվում է մինչև 600 սմ<sup>3</sup> կոշտ մատերիալ: Գորիսի շրջանի տուֆաբրեկչիաների հողմնահարումը տեղտեղ վտանգավոր չափեր է ընդունել:

Հրաբխային շրջաններում հեշտ քայքայվող, փխրուն ապարներից են դելյուվիալ ու պրոլյուվիալ նստվածքները, որոնք երկրորդական ծագում ունեն: Դելյուվիալ նստվածքներն արտահայտված են մեծ մասամբ կավաավազներով, կավերով, խճով: Այս նստվածքների քիմիական կազմը զգալիորեն տարբերվում է մայր ապարների քիմիական կազմից: Նկատվում է որոշ բաղադրիչների ավելացում ( $Al_2O_3$ ,  $Fe_2O_3$ ,  $SiO_2$ ) և հակառակը ( $Na_2O$ ,  $K_2O$ ,  $CaO$ ):

Դելյուվիալ նստվածքներում ստեղծվում են մանր ձորակներ, որոնք յուրահատուկ են լեռնալանջերի ստորոտներին: Պրոլյուվիալ ու ֆլյուվիոգլյացիալ նստվածքները տարածված են հրաբխային զանգվածների ստորոտներում և հողմնահարվում ու տեղատարվում են այնպես, ինչպես դելյուվիալ նստվածքները:

4. ԱՊԱՐՆԵՐԻ ԱՆՋԱՏՈՒՄՆԵՐԸ. ԱՏՐՈՒԿՏՈՒՐԱՆ, ՏԵՔՍՏՈՒՐԱՆ  
ԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂՄՆԱՀԱՐԿԱՆ ՄԵՋ

Սառչող լավան առաջացնում է կոնտրակցիոն (էնդոկի-  
նետիկ) ձևողքեր, որոնցով պայմանավորվում են անջատում-  
ները: Եթե լավան հաստ շերտ է կազմում, ապա նրա միջին  
շերտում կան ամենից նպաստավոր պայմանները բյուրեղաց-  
ման համար:

Հայկական ՍՍՌ արտաժայթուկներն առաջացնում են  
անջատումների մի քանի տիպեր՝ սյունաձև, բեկորավոր  
(կոշտավոր), սալանման, գնդաձև: Անջատումների տիպը  
պայմանավորված է հիմնականում սառեցման պայմաննե-  
րով, սակայն զգալի դեր ունի նաև լավայի քիմիական բաղա-  
դրությունը:

Անջատումներից ամենակատարյալը սյունաձև անջա-  
տումներն են: Սրանք յուրահատուկ են հատկապես հիմքային  
լավաներին՝ բազալտներին ու անդեզիտա-բազալտներին:  
Թթու լավաները նման անջատումներ ավելի քիչ են տալիս:  
Տուֆերի սյունաձև անջատումներ նշում են Կ. Գ. Շիրինյանը  
և Ա. Տ. Ասլանյանը (1956) Մակաշարեն-Հայդարլինյան  
հանքավայրում: Սյունաձև անջատումները լավ արտահայտ-  
ված են գետերի կանխոններում (Ախուրյան, Քասաղ, Դեբեղ,  
Հրազդան, Ազատ, Արփա և այլն): Բազալտե սյունները եր-  
կրաչափական կանոնավոր պրիզմաների ձև ունեն, որոնք  
հասնում են տասնյակ մետրերի: Պրիզմաները հիմնականում  
քառանիստ, հնգանիստ կամ վեցանիստ են, երբեմն պատա-  
հում են նաև 3—9 նիստ ունեցողներ. սյունները դասավոր-  
վում են լավային շերտի սառեցման մակերևույթին ուղղա-  
հայաց: Եթե սառեցումը կատարվում է կորագիծ ուղղու-  
թյամբ, ապա սյունները ևս դասավորվում են կորագիծ ձևով,  
հաճախ նույնիսկ հովհարաձև, ինչպես, օրինակ՝ Հրազդանի  
կիրճում՝ Արզնու մոտ, Արփայի կանխոնում և այլն: Սյունա-  
ձև անջատումները յուրահատուկ են այն լավաներին, որոնք  
դանդաղ են սառչում: Հիմքում լավան արտահայտված է  
կոշտավոր անջատումներով, որից հետո 1—2 մ բարձրու-  
թյունից սկսվում են սյունաձև անջատումները, ընդ որում  
ամենից լավ նրանք արտահայտված են շերտի միջին մա-

սում: Լավային շերտի մակերևույթին մոտ սյուներն անհետանում են, տեղի տալով մանր բեկորային, բրեկչիանման անջատումների. հաճախ անմիջապես մակերևույթին հանդես է գալիս խիստ պղպջակավոր լավա, նույնիսկ՝ խարամ:

Սյունաձև անջատումների նիստերը սովորաբար հարթ են, սակայն ոչ ողորկ. շոշափելիս զգացվում է մանր խորդուրորդություն: Սյուները լինում են երկու տիպի՝ ամբողջական և օղակավոր: Վերջինիս դեպքում սյուներին ուղղահայաց ուղղությամբ շատ կանոնավոր ձևով ընդհատումներ կան, կարծես սյուները աղյուսներից են կազմված: Սրանց մոտ ծավալի փոքրացումը եղել է ոչ միայն սյուների առանցքներին ուղղահայաց ուղղությամբ, այլ նաև հենց աչդ առանցքների ուղղությամբ: Սյունաձև անջատումները նպաստավոր պայմաններ են ստեղծում սառնամանիքային հողմնահարման համար (մակրոժելիվացիա): Անջատումների և ոչ մի տիպ այնքան արագ չի ենթարկվում սառնամանիքային հողմնահարման, որքան բարակ օղակավոր սյունաձև անջատումները: Գետահովիտներում հաճախ մակերևույթային կոշտավոր անջատումներով լավան ավելի կանգուն է մնում սառնամանիքային հողմնահարմանը և քիվի (կարնիզ) ձևով մնում է, մինչդեռ նրա տակ դասավորված սյուները արագությամբ թափվում են ցած:

Արագ սառչող լավաները սովորաբար տալիս են բեկորային անջատումներ, որոնք ամենատարածվածն են: Կոնտրակցիոն ձեղքերը որոշակի ուղղություն չունեն, անկանոն ձևով հատում են միմյանց: Բեկորների մեծությունը կախված է սառեցման արագությունից. որքան սառեցումը արագ լինի, բեկորները մանր կլինեն: Մանրաբեկոր բրեկչիանման լավաները ավելի շուտ են ենթարկվում հողմնահարման: Բեկորային լավաներում համասեռության և մասսիվ տեքստուրայի շնորհիվ բոլոր ուղղություններում հատկանիշները նույնն են, որը հատկապես ախառու է ջերմահազորդականության մեջ:

Անջատումների ուշազրավ տիպ է ներկայացնում սառնաման տարատեսակը: Այս տիպի դեպքում լավան շերտավոր է, շերտերը հեշտությամբ միմյանցից բաժանվում են, ներ-

կայացնելով սալեր կամ նույնիսկ՝ թերթեր: Շերտերի մակերևույթը սովորաբար զուգահեռ է լավայի մակերևույթին, սակայն հաճախ նկատվում է նաև սֆերոլիտային կառուցվածք՝ լավայի բարակ շերտերի համակենտրոն դասավորմամբ, երբեմն էլ՝ շառավղաձև-կենտրոնախույս դասավորմամբ: Սալանման անջատումները յուրահատուկ են անդեզիտային, անդեզիտա-դացիտային լավաներին ու տրախիտներին:

Սալանման անջատումներ ունեցող ապարներում ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներն ամեն ուղղությամբ նույնը չեն: Սալի մակերևույթի ուղղությամբ սեղմման դիմադրությունն ավելի փոքր է, քան նրան ուղղահայաց ուղղությամբ: Զգալի չափով տարբերվում են նաև ջերմային հատկանիշները: Այսպես, օրինակ՝ Արագածում բարակ շերտավոր անջատում ունեցող անդեզիտներում ըստ խորություն մենք կատարեցինք ջերմաստիճանային չափումներ, ընդ որում ընտրեցինք երկու բեկորներ, որոնցից մեկը ուներ շերտայնություն արեգակի ճառագայթների ուղղությամբ, իսկ մյուսի վրա ճառագայթներն ընկնում էին շերտերին ուղղահայաց: Օրական ջերմաստիճանային տատանումները մեծ խորություն հասնում էին առաջին քարաբեկորի վրա, մինչդեռ երկրորդի վրա ջերմությունը խորը չի թափանցում, կուտակվում է մակերևույթին, որի հետևանքով օրական ջերմաստիճանային տատանումները մակերևույթի վրա մեծ են:

Սալիկավոր անջատումները նպաստավոր են սառնամանիքային հողմնահարման համար, հատկապես այն դեպքում, երբ շերտայնությունը երկրի մակերևույթի նկատմամբ որոշ անկյուն է կազմում, և ջուրը կարողանում է թափանցել շերտերի խորքը: Սալիկավոր անջատումներում հողմնահարման նյութերը իրենցից ներկայացնում են սալիկներ և կղմինգրի տեսք ունեն:

Գնդաձև անջատումները յուրահատուկ են սովորաբար այն լավաներին, որոնք սառչում են ջրային միջավայրում: Սակայն Արագածի վրա, Գեղամա լեռներում, Արայի լեռան վրա երբեմն հանդիպում են գնդաձև անջատումներ, որոնք ցամաքային պայմաններում են գոյացել: Այսպես, օրինակ՝

Բ. Մ. Կուպլետսկին (1929) Գեղամա լեռներում նշում է համակենտրոն կեղևային անջատումներ, որոնց գնդերի շառավիղը հասնում է 10 մետրի: Ա. Ա. Տուրցևը (1929) նշում է գնդաձև անջատումներ՝ Սևանի ափին, Փամբակի լեռնաշղթայի ճյուղերից մեկի վրա: Այստեղ անդեզիտա-բազալտներում նկատվում է համակենտրոն կեղևաթափում-գեոսկլամացիա: Արտաժայթուկային, ապակով հարուստ ապարներում նկատվում է նաև մանր գնդային տեքստուրա՝ երբ հիմնական զանգվածից հողմնահարման շնորհիվ պոկվում են մանր գնդիկներ: Այստեղ ապակենման զանգվածում բյուրեղացուժը սկսվում է ինչ-որ կենտրոնի շուրջը և բյուրեղները դասավորվում են համակենտրոն սֆերաների ուղղությամբ: Հողմնահարման պրոցեսների ժամանակ բյուրեղների այս կարգի դասավորությունը պատճառ է դառնում առանձին գնդերի անջատմանը:

Անջատումներն ու նրանց միջև առաջացած կոնտրակցիոն ճեղքերը վճռական նշանակություն ունեն հողմնահարման ու մթնոլորտային ջրերի ինֆիլտրացիայի մեջ: Այս ճեղքերի ուղղությամբ է ընթանում սառնամանիքային հողմնահարումը: Կոնտրակցիոն ճեղքերով են որոշվում արտաժայթուկների ջրային հատկանիշները:

Հայկական ՍՍՌ արտաժայթուկների հողմնահարման մեջ պակաս չէ ստրուկտուրայի ու տեքստուրայի նշանակությունը: Ավելին՝ հաճախ ստրուկտուրան ու տեքստուրան են պայմանավորում ապարի հողմնահարման ինտենսիվությունը: Նույն կլիմայական պայմաններում գտնվող ապարներից մեկը, որ ունի մեծ սեղմման դիմադրություն, հաճախ ավելի շուտ է քայքայվում, քան այն ապարը, որ ունի ավելի փոքր սեղմման դիմադրություն: Այստեղ նշանակություն ունի ստրուկտուրան: Ապարի ստրուկտուրան կախված է նրա սառնելու պայմաններից ու քիմիական բաղադրությունից: Հիմքային լավաներն ավելի լավ են բյուրեղանում, քան թթու կազմ ունեցող լավաները: Վերջիններս երբեմն տալիս են ապակենման զանգված (օրսիդիան), որը ամորֆ է: Սակայն որքան էլ սառեցման պրոցեսը արագ տեղի ունենա, այնուամենայնիվ, ապարն իր մեջ կպարունակի որոշ քանակու-

թյամբ բյուրեղներ: Գեոևս հիպարիսալ զոնայում մագմայի ջերմաստիճանը բավական իջնում է, որոշ միներալներ բյուրեղանում են. այնպես որ երկրի խորքից ժայթքած լավան արդեն մասամբ բյուրեղացած է: Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի արտաժայթուկները խիստ բազմապիսի ստրուկտուրա ունեն՝ սկսած համարյա լրիվ բյուրեղայինից՝ մինչև ամորֆը: Լրիվ բյուրեղացած լավաները յուրահատուկ են հզոր հոսքերին, որտեղ լավային շերտի միջին մասում սառեցման պրոցեսը երկարատև է եղել: Սակայն լրիվ բյուրեղացած լավաները համեմատաբար քիչ են: Ինչպես նշում է Ֆ. Յու Լեվինսոն-Լեսսինգը (1929), Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասի անդեզիտա-բազալտները հիմնականում խմբավորվում են վիտրոֆիրային տիպի շուրջը: Կան աֆիրային (պորֆիրային ներփակումներից զուրկ), էվպորֆիրային (ներփակումները բավական շատ), օլիգոֆիրային (քիչ ներփակումներով) ստրուկտուրաներ:

Հրային ապարներում մեծ տարածում ունեն պորֆիրային ստրուկտուրաները, որոնցում ներփակումները ներկայացված են պլազիոկլազներով: Հանդես են գալիս նաև պիրոքսեններ, օլիվին, ամֆիբոլներ, փայլարներ և այլն: Զերմային հողմնահարման տեսակետից բյուրեղացման աստիճանը, բյուրեղների չափը ունեն վճռական նշանակություն. հետևաբար ստրուկտուրաները հաճախ որոշում են ապարի հողմնահարման ունակությունը: Ամենից ինտենսիվ հողմնահարմում են խոշորահատիկ և միջահատիկ ստրուկտուրա ունեցող ապարները, մանավանդ այն դեպքում, երբ հիմնական զանգվածը մուգ գույն ունի, իսկ պլազիոկլազները արտահայտված են սպիտակ գույնով: Պարզվում է, որ ապարի կազմում գտնվող միներալները արեգակի ճառագայթների տարբեր ալբեդո ունեն, տարբեր չափով են տաքանում և ունեն տարբեր ընդարձակման գործակից: Որքան ներփակումը մեծ լինի, այնքան տարբեր միներալների միջև ձգման լարվածությունը մեծ կլինի, որը հանգեցնում է միկրոճաբերի ստեղծմանը: Այս տեսակետից յուրահատուկ տեղ են զբաղում դացիտներն ու պեխշտեյնային դացիտները, որոն-

ցում սպիտակավուն պլազիոկլազները խոշոր կտորների ձևով թաղված են սև գույնի հիմնական զանգվածի մեջ: Փորձերը ցույց են տալիս, որ դաշտային շպատի բյուրեղները ջերմաստիճանային տատանումների մի քանի տասնյակ ցիկլ անցնելուց հետո արագությամբ պոկվում են հիմնական զանգվածից: Արագածի կատարային գոտու պեխշտեյնային դացիտներում մենք ոչ մի տեղ երկրի մակերևույթին թարմ քարաբեկեր չնկատեցինք: Ամենուրեք երկրի մակերևույթը ծածկված է քայքայման ենթարկված նյութերով: Արագությամբ հողմնահարվում են նաև այն դացիտները, անդեզիտա-դացիտները, անդեզիտա-բազալտները, որոնց մոտ համեմատաբար լավ են արտահայտված բյուրեղները: Այն ապարները, որոնք հոծ են, լրիվ բյուրեղացած և ունեն խիստ մանրահատիկ ստրուկտուրա, շատ դիմացկուն են: Ինչպես դաշտային, այնպես էլ էքսպերիմենտալ դիտումները ցույց են տալիս, որ ամենամեծ դիմադրողականությամբ օժտված են միկրոաֆանիտային ստրուկտուրա և հոծ տեքստուրա ունեցող ապարները: Սրանց շարքն են դասվում բազալտները, անդեզիտա-բազալտները, որոշ տուֆեր: Ապարը կազմող միներալների բյուրեղները կազմում են մի խիտ ցանց, որ ցանկացած ուղղությամբ ապարի ընդարձակվելու դեպքում պահպանում է այն ճեղքվիլուց: Պատկերավոր ասած՝ նրանք կատարում են այն դերը, ինչ դեր կատարում է երկաթյա արմատուրան բետոնի մեջ: Այն դեպքում, երբ բյուրեղները մերձողուզանո զասավորություն ունեն (ֆլյուիդալ տեքստուրա), ապա ապարը մի ուղղությամբ խիստ ամուր է, իսկ նրան ուղղահայաց ուղղությամբ հեշտությամբ բեկորահատվում է:

Ապարի ամրության տեսակետից խոշոր նշանակություն ունի ծակոտկենությունը, ոչ միայն ծակոտիների ընդհանուր քանակը այլև նրանց ուղղությունը: Հավայի մակերևույթային շերտում գաղերը շատ են ու ձգտում են թափանցել մթնոլորտի մեջ, և պղպջակը երկարալուծ ձգված տեսք է ստանում: Նույնիսկ միկրոսկոպիկ ծակոտիները շլիֆներում ձգված են և դասավորված որոշակի ուղղությամբ: Հանգիստ տառչող լավաներում պղպջակների երկար առանցքը ուղղա-

հայաց է լավային շերտի մակերևույթին. բազմաթիվ պղ-պըջակներ միմյանց հետեից շղթա են կազմում, հոսուն լավայի սառեցման դեպքում պղպջակների երկար առանցքները ուղղված են լինում լավայի հոսքի ուղղությամբ, և ապարը ձևոք է բերում ֆլյուիդալ տեքստուրա, որի հետևանքով ապարի ամրությունը տարբեր ուղղություններում տարբեր է: Լիթոլոգ պեմզայի վրա կատարած փորձերը Հայկական ՍՍՌ Շինանյութերի և կոնստրուկցիաների ինստիտուտում ցույց են տալիս, որ մի ուղղությամբ պեմզան կարող է դիմանալ մինչև 247 կգ/սմ<sup>2</sup> ճնշման, իսկ նրան ուղղահայաց ուղղությամբ՝ միայն 135 կգ/սմ<sup>2</sup> ճնշման: Սեղմման դիմադրության սահմանի տարբերությունները հատկապես զգալի են ֆլյուիդալ տեքստուրայի ապարների մոտ: Երբեմն այդ տարբերությունը նույն ապարի մոտ տարբեր ուղղություններում հասնում է 4:1 հարաբերության:

Ավանի ձորի բազալտների ուղղաձիգ կտրվածքում հորատանցքերի կեռնի լարորատոր ուսումնասիրությունները Շինանյութերի և կոնստրուկցիաների ինստիտուտում ցույց են տալիս, որ ըստ խորության նույն քիմիական բաղադրության բազալտները ունեն տարբեր ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներ: Երկրի մակերևույթից մինչև 28,8 մ խորությունը սեղմման ժամանակավոր դիմադրությունը բարձրացել է մի քանի անգամ: Ապարի ծակոտկենությունը նպաստում է նրա արագ սառնամանիքային հողմնահարմանը: Ամենից փոքր ծակոտկենություն ունեն լրիվ բյուրեղացած և աֆանիտային ստրուկտուրա ունեցող ապարները, որոնք խիստ կանգուն են հողմնահարման գործոնների նկատմամբ:

Հաճախ ապարների ծակոտիներում ու խոռոչներում նկատում ենք երկրորդական զոյացումներ, մինդալիտներ (миндалевый камень) որոնք ներկայացված են օպալով, խալցեդոնով, կալցիտով և այլն: Այդպիսի մինդալիտներ նկարագրված են մեր ռեսպուբլիկայի հրալին ապարներում բազմաթիվ պետրոգրաֆների կողմից: Նշված ներփակումները հաճախ լցնելով ապարի խոռոչները, նրան տալիս են լրացուցիչ ամրություն:

Հրաբխային արտավիժումների ժամանակ լավայի հետ

միասին հաճախ դուրս են ժայթքում զանազան ներառուկ-  
ներ՝ քսենոլիտներ: Եթե լավան ունի բարձր ջերմաստիճան,  
ապա քսենոլիտները մասամբ մակերևույթից հավելելով, յու-  
րացվում են մազմայի կողմից և հետագայում հողմնահար-  
ման ժամանակ դժվարությամբ են պոկվում հիմնական  
զանգվածից, իսկ եթե լավայի ջերմաստիճանը ցածր է, ապա  
«զողման» պրոցես տեղի չի ունենում, և հետագայում հողմ-  
նահարման ժամանակ քսենոլիտը հեշտությամբ անջատվում  
է հիմնական զանգվածից: Երբեմն լավայի մեջ քսենոլիտնե-  
րը այնքան շատ են լինում, որ ապարը վեր է ածվում հրա-  
բխային բրեկչիայի, ունենում է տակսիտային տեքստուրա և  
հեշտությամբ հողմնահարվում է: Թույլ ցեմենտացած հրա-  
բխային բրեկչիաները մթնոլորտային ազդակների ազդեցու-  
թյամբ արագորեն քայքայվում են և լեռների ստորոտներում  
տալիս են թափման կոներ: Որպես տիպիկ օրինակ կարող  
ենք նշել Արայի լեռան վրա հանդես եկող խարամային  
զանգվածների ու անդեզիտա-բազալտների ալյումերատնե-  
րը, որոնք արագությամբ քայքայվում են:

Լավայի մեջ օտար մարմինների ներկայությունը բա-  
ցատրվում է ոչ միայն նրա շարժման ճանապարհին հանդի-  
պած ապարների կլանմամբ, այլ նաև հրաբխային պայթյուն-  
ների հետևանքով օդ բարձրացած հրաբխային ռումբերի,  
լյապիլների հաշվին: Հաճախ երկնքից թափվում է «քարե  
կարկուտ» և թաղվելով հեղուկ լավայի մեջ, սառչում է նրա  
հետ միասին: Այսպիսի երևույթներ նկատված են Թ. Շ. Թադե-  
վոսյանի և ուրիշների կողմից (Արայի լեռան վրա): Քարե  
կարկուտի ներկայությունը իջեցնում է ապարի ամրությունն  
ու դիմադրողականությունը հողմնահարման նկատմամբ:

Ապարի ջրակլանման ունակությունը նրա կարևոր հատ-  
կանիշներից է: Երբ ապարը հագեցնում է ջրով, ուռչում է,  
ջրի մոլեկուլները թափանցում են այն անցքերի մեջ, որոնց  
արամագիծը համապատասխանում է ջրի մոլեկուլների շա-  
փերին: Բազմաթիվ փորձերը ցույց են տալիս, որ ջրով հա-  
գեցած ապարը որոշ չափով փափկում է, սեղմման դիմա-  
դրությունը նվազում է, նվազում է նաև առաձգականության  
մոդուլը: Շատ ապարներում շորացումից հետո հատկանիշ-

ներբը վերականգնվում են, սակայն միշտ չէ, որ այդպես է: Ջրակլանման պրոցեսը բազմիցս կրկնելիս, ապարի միկրոսկոպիկ անցքերում ջրի մոլեկուլները սեպի նման խրվում և լայնացնում են անցքը, որից ապարի ամրությունը նվազում է: Ջրի մոլեկուլի կողմից սեպավորման պրոցեսը հատկապես ինտենսիվ է սառնամանիքային հողմնահարությունից ժամանակ (միկրոժելիվացիա): Բնականաբար, որքան ապարի ծակոտկենությունը մեծ լինի և այն շատ ջուր պարունակի, այնքան սառնամանիքային հողմնահարման էֆեկտիվությունը մեծ կլինի: Մեծ ծակոտկենությամբ ու ջրակլանողականությամբ լծուված են պեմզան, խարամբ, մի քանի տուֆեր, որոնք չեն գիմադրում նույնիսկ մի քանի ցիկլ սառեցման:

### ԿԼԻՄԱՅԻ ԳԵՐԸ ՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ ՀՈՂՄՆԱՀԱՐՄԱՆ ՄԵՋ

Հայկական ՍՍՌ-ի աշխարհագրական դիրքը, ծովի մակերևութից ունեցած բարձրությունն ու մասնատված ուղիեֆը պայմանավորում են կլիմայական պայմանների մեծ բազմազանությունը: Հայկական ՍՍՌ-ն ունի բնորոշ ապարավերցրած ցամաքային կլիմայական պայմաններ, իսկ հրաբխային զանգվածները գրավելով ռեսպուբլիկայի ներքին շրջանները, ունեն առավել արտահայտված ցամաքային բնույթ:

Հայկական ՍՍՌ-ում բնական պայմանների կոմպլեքսը, այդ թվում նաև կլիման ներկայացված են լավ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ: Ընդամենը 2—3 տասնյակ կլիմատիպի վրա կիսաանապատներից անցում է կատարվում հավերժական ձյան գոտուն: Հայկական ՍՍՌ սահմաններում Ա. Բ. Բաղդասարյանը (1958) առանձնացնում է 6 կլիմայական գոտիներ՝ չոր՝ մերձարևադարձային, չոր ցամաքային, բարեխառն տաք-չոր, բարեխառն ցուրտ անտառային, ցուրտ լեռնային, լեռնային տունդրայի կլիմաներ: Նշված գոտիներից հինգը (բացառությամբ չոր մերձարևադարձային կլիմայից) գոյություն ունեն մեր ուսումնասիրմանը ենթակա բարձրավանդակում: Ամենից բնորոշ է բա-

բխաւն տաք շոր և բարեխաւն ցուրտ կլիմայական գոտի-  
ներն են:

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի ցամա-  
քային բնույթը մեծապես նպաստում է հողմնահարման պրո-  
ցեսների ու դենուդացիայի ինտենսիվութեանը: Հատկապես  
ցայտուն գործող ազդակներ են՝ ջերմաստիճանային տատա-  
նումներն ու մթնոլորտային տեղումները: Մթնոլորտային  
տեղումները և նրանց բնույթը պայմանավորում են հիմնա-  
կանում դենուդացիոն պրոցեսները, ուստի այստեղ մենք  
հանգամանորեն կանգ կառնենք միասնիկական հողմնահար-  
ման հիմնական գործոնի՝ ջերմաստիճանային տատանում-  
ների վրա:


Հայտնի է, որ ջերմաստիճանային փոփոխութեանները  
ապարների մեջ առաջացնում են ծավալային փոփոխութեան-  
ներ, գոյանում են մազական ճեղքեր ինչպես ապարի մակե-  
րևութին զուգահեռ, այնպես էլ ուղղահայաց ուղղութեամբ,  
որի հետևանքով ապարները քայքայվում են, մանրանում:  
Այս պրոցեսին նպաստում են արեզակի ճառագայթների քի-  
միական ազդեցութեանը ջրի, միկրոօրգանիզմների ներգոր-  
ծութեանը և այլն:

Ուղղաձիգ գոտիականութեան մեջ ապարների ջերմաս-  
տիճանային տատանումներն ուսումնասիրելու համար մենք  
անալիզի ենք ենթարկել Հիդրոմետ ծառայութեան վարչու-  
թեան կայանների դիտումների տվյալները: Հատկապես հե-  
տաքրքրական են օրական ջերմաստիճանային տատանում-  
ները ապարների մակերևութին, որոնցով պայմանավորված  
է մեխանիկական հողմնահարումը: Պետք է նշել, որ օդ-  
կայաններում դիտումները կատարվում են որոշակի ծրա-  
գրով և նրանց կատարած դիտումների արդյունքները մե-  
խանիկական հողմնահարման ուսումնասիրման համար  
սպառիչ նյութեր համարվել չեն կարող: Այդ կայաններում  
կատարվում են օդի ջերմաստիճանային դիտումներ 2 մ  
բարձրութեան շերտում: Մի շարք կայաններում դիտում են  
նաև հողի ջերմաստիճանը: Չունածածկ ժամանակաշրջա-  
նում դիտումները կատարվում են ձյան վրա, այնպես, որ  
հողի մակերևութի ջերմաստիճանը մնում է անհայտ ինչ

վերաբերում է ապարների ջերմաստիճանային փոփոխու-  
թյուններին, ապա այդ ուղղությամբ դիտումներ չեն կա-  
տարվում և նույնիսկ մեթոդիկա այդ ուղղությամբ մշակ-  
ված չէ: Մինչդեռ այդ կարգի ուսումնասիրությունները  
խիստ անհրաժեշտ են: Դաշտային դիտումների ժամանակ  
մենք պատշաճ ուշադրություն ենք դարձրել այս հարցին և  
աշխատել ենք լրացնել եղած նյութերի պակասը այս ուղ-  
ղությամբ: Ինչպես հայտնի է, սովորական ջերմաչափերն  
արտահայտում են ջերմաչափի ռեզերվուարին շրջապատող  
օդի ջերմաստիճանը. հողի մակերևույթի ջերմաստիճանը  
չափելու համար ռեզերվուարը մտցնում են հողի մակերե-  
վույթային շերտի տակ: Ապարի մակերևույթի ջերմաստի-  
ճանը չափելու համար անհրաժեշտ է սերտ կոնտակտ լս-  
տեղծել ապարի մակերևույթի և ջերմաչափի ռեզերվուարի  
միջև, որը սովորական եղանակով հնարավոր չէ: Ահա մենք  
այդ հարցը լուծել ենք հետևյալ կերպ՝ ապարի մակերևույ-  
թային որևէ խոռոչի մեջ լցնում ենք 2—3 սմ<sup>3</sup> սնդիկ և  
ջերմաչափի ռեզերվուարը մտցնում ենք նրա մեջ և կոն-  
տակտ ապահովում ապարի ու ջերմաչափի միջև: Հայտնի  
է, որ սնդիկն ունի շատ փոքր ջերմունակություն, սակայն  
բարձր ջերմահաղորդականություն: Այդ նշանակում է, որ  
սնդիկը արագությամբ ձեռք է բերում ապարի ջերմաստի-  
ճանը և հաղորդում է ջերմաչափին առանց ջերմության  
նշանակալի կորուստի: Ապարի խորքային ջերմաստիճանը  
չափելու համար նրա մեջ բաց ենք արել ջերմաչափի տրա-  
մագծից մի փոքր մեծ անցք և նրա մեջ կաթեցնելով մի  
կաթիլ սնդիկ ապահովել կոնտակտը ապարի ու ջերմաչափի  
միջև: Դիտումները կատարվել են ինչպես տարբեր ապար-  
ների, այնպես էլ նույն քարաբեկորի վրա, տեղափոխելով  
այն մեզ հետ: Նույն քարաբեկորի վրա կատարած դիտում-  
ների առավելությունն այն է, որ տարբեր ապարների ջեր-  
մային հատկանիշների հարցը մեջտեղից վերանում է, և  
ջերմաստիճանային տարբերությունները կախված են մնում  
միայն կլիմայական գործոններից: Դիտումները բարձրա-  
վանդակում կատարվել են մեծ մասամբ ամառային ամիս-  
ներին, իսկ ձմռանը՝ միայն կենիհական և Երևան քաղաք-

ներում, բարձր լեռներում դիտումներ չեն կատարվել: Այսպիսով, օգտագործելով ինչպես օդ. կայանների, այնպես էլ դաշտային դիտումների տվյալները, աշխատենք պարզել այն օրինաչափությունները, որոնցով պայմանավորված է ապարների մեխանիկական հոդման հարումը:

Ջերմաստիճանային հոդման հարման մեջ առաջնային օրական ջերմաստիճանային տատանումներն են: Հայկական ՍՍՌ-ն, ընդհանրապես վերցրած, ունի բարձր օրական ջերմաստիճանային տատանումներ: Ժամը 7-ին և 13-ին կատարած դիտումների հիման վրա օդի օրական ջերմաստիճանային տատանումների տարեկան միջինը Հոկտեմբերյանում հասնում է  $12^{\circ}$ -ի, Բազարչայում՝  $12,5^{\circ}$ -ի, Սիսիանում՝  $13,5^{\circ}$ -ի, Կամոյում՝  $11,5^{\circ}$ -ի, Լինինականում՝  $11,5^{\circ}$ -ի, Շուռարագում՝  $11,5^{\circ}$ -ի և այլն: Օրական ջերմաս-




Քծ. 2. Աբարատյան գոգավորության մի քանի կայանների օդի օրական ջերմաստիճանային ամսյալիտուղաների ամսական միջին գրաֆիկը

տիճանային ամսյալիտուղաները ամռանը կրկնակի անգամ ավելի մեծ են, քան ձմռանը, որը պայմանավորված է փոքր հարաբերական խոնավությամբ: Որքան բարձրանում ենք լեռներն ի վեր, այնքան հարաբերական խոնավությունը մեծանում է, օրական ջերմաստիճանային ամսյալիտուղաները փոքրանում են: Ինչպես ցույց է տալիս № 2

գծագիրը, ձմռանը օրական ամպլիտուդան Արարատյան  
 գոգավորութեան բոլոր կայաններում փոքր է: Աստիճանա-  
 բար աճելով, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսնե-  
 րին հասնում է մաքսիմումի, որից հետո նորից անկում է  
 կատարում: Ըստ բարձրութեան՝ ամպլիտուդաները աստի-  
 ճանաբար նվազում են, և կորերը աստիճանաբար մոտե-  
 նում են արսցիսների առանցքին: Ամենից բարձր կոր տա-  
 լիս է Հոկտեմբերյանը, այնուհետև՝ Երևանը, Աշտարակը,  
 Կոշարուպղը, Գառնհովիտը, իսկ ամենից ցածր կոր՝ Արա-  
 գածի կայանները: Այնուհետև գրաֆիկից նկատում ենք,  
 որ տաք պերիոդի և ցուրտ պերիոդի օրական ջերմաստի-  
 ճանային ամպլիտուդաների տարբերությունը փոքրանում  
 է: Օրինակ՝ եթե Հոկտեմբերյանի համար այդ տարբերու-  
 թյունը  $12^{\circ}$  է, ապա Արագածի համար՝ ընդամենը  $1,5^{\circ}$ :  
 Արագածում օրական ջերմաստիճանային ամպլիտուդայի  
 կորը ավելի սահուն պատկեր է ստեղծում: Աշտարակից  
 բարձր նկատելի է, որ ձմռան երկրորդ կեսին օրական  
 ջերմաստիճանային ամպլիտուդան աստիճանաբար մեծա-  
 նում է, գարնանը իջնում է և մինիմումի է հասնում ապրիլ  
 և մայիս ամիսներին, որից հետո նորից ցայտուն կերպով  
 աճում է: Այս երևույթը պետք է բացատրել ձնհալքով:  
 Արեգակից ստացած ջերմային էներգիան ամբողջապես  
 ծախսվում է ձնհալքի վրա: Ձնհալքն ավարտվելուց հետո  
 տեղի է ունենում ցերեկային մաքսիմում ջերմաստիճանի  
 արագ բարձրացում, հետևաբար՝ ամպլիտուդայի մեծա-  
 ցում: Ըստ բարձրութեան՝ օրական ջերմաստիճանային ամ-  
 պլիտուդայի մինիմումը ուշանում է ձնհալքի ուշացման  
 հետ մեկտեղ:


Արարատյան գոգավորությունում տեղադրված 14  
 օդերևույթաբանական կայանների դիտումների տվյալների  
 հիման վրա մենք կազմել ենք օրական ջերմաստիճանային  
 ամպլիտուդաների գրաֆիկ՝ օգոստոս ամսվա համար (գծ.  
 3): Ելնելով գրաֆիկից, կարող ենք նշել, որ ըստ բարձրու-  
 թյան՝ ամպլիտուդան փոքրանում է  $15^{\circ}$ -ից մինչև  $4^{\circ}$ . նույն-  
 պիսի պատկեր տեսնում ենք հողի մեջ և ապարների մա-



բարչրությունը ծովի մակ. ից հակ մ

Փժ. 3. Արարատյան զոգավորության 14 կայանների օգոտոս ամսվա ջերմաստիճանային օրական միջին ամպլիտուդան բազմամյա տվյալներով

- 1—Ալազյազ ելզ, 2—Վ. Թալին, 3—Փանոնոլիտ, 4—Հոկտեմբերյան ելզ, 5—Արմավիր, 6—Արագած բլ, 7—Կոշարույաղ, 8—Ապարան, 9—Աշտարակ, 10—Երևան, 11—Եղվարդ, 12—Պանտան, 13—Փանի, 14—Հրազդան




բարչրությունը ծովի մակ. ից հակ մ


Փժ. 4. 1959 թ. օգոտոս ամսվա միջին օրական ջերմաստիճանային ամպլիտուդան հողի մակերևույթին՝ 4 կայանների տվյալներով

կերևույթին, որն անշուշտ իր կնիքն է դնում հողմնահարման ինտենսիվության վրա (գծ. 4):

Օդում և հողում ջերմաստիճանային օրական տատանումների մասին արտահայտիչ պատկեր ստեղծում են տարվա ընթացքում օրական ամպլիտուդաների ամսական միջինի գրաֆիկները (գծ. 5, 6): Օրինակ՝ Երևանում, այսինքն՝



Գծ. 5. Օրական ջերմաստիճանային ամպլիտուդաների ամսական միջինը Երևանում 1959 թ.




Գծ. 6. Օրական ջերմաստիճանային ամպլիտուդաների ամսական միջինը Արագած բլլ կայանում 1959 թ.

բարձրավանդակի նախալեռնային գոտում 1959 թ. ընթացքում ամենամեծ օրական ամպլիտուդայի ամսական միջինը նկատվել է օգոստոսին: Չմեռային ամիսներին այն փոքր է և օդի ջերմաստիճանային ամպլիտուդայից մի փոքր է մեծ: Այդ բացատրվում է նրանով, որ ձմռանը Երևանում ամպամածուխներ մեծ է, արեգակի ճառագայթային լարվածույթունը՝ փոքր: Ուշագրավ է այն, որ ապրիլ ամսին

օրական ամպլիտուդան ավելի մեծ է, քան մայիսին, որովհետև մայիսն ավելի շատ տեղումներ ունի, քան ապրիլը: Ամպլիտուդաների նույն ընթացքն ենք տեսնում նաև Արագած բ/լ կայանի տվյալներով, սակայն մի փոքր մեղմացած ձևով:

Երևան, Մարտունի և Արագած կայանների տվյալներով կազմած օրական ջերմաստիճանային ամպլիտուդաների ամսական միջինի գրաֆիկը տարվա ընթացքում ցույց է տալիս նույն ընթացքը, ինչ որ տեսնում ենք օգի վերաբերյալ, այն տարբերությամբ, որ ամպլիտուդաները այստեղ մեծ են (գծ. 7):




Գծ. 7. Երևան, Մարտունի և Արագած կայաններում հողի մակերևույթի օրական ջերմաստիճանային ամպլիտուդաների ամսական միջինը 1959 թ.

Այժմ անցնենք ապարների մակերևույթին կատարած ջերմաստիճանային չափումների անալիզին: Պետք է նշել, որ ապարների մակերևույթին ջերմաստիճանային փոփոխությունները ճիշտ նույն ընթացքն ունեն, ինչ հողի մակերևույթին, միայն ավելի մեծ ջերմաստիճանային տարբերություններով:

Բազմամյա դիտումների արդյունքները ցույց են տալիս, որ ամենամեծ ջերմաստիճանային ամպլիտուդան յուրահատուկ է Արարատյան դաշտի նախալեռնային շրջաններին: Մեր կողմից նկատած օրական բացարձակ ամպլիտուդան մուգ գույնի հոծ ապարի մակերևույթին հղել է 65°, ցերեկը

ժամը 15-ին՝ մինչև 75—77°, գիշերը՝ 8—12°: Նման-  
օրինակ ամպլիտուդան հաճախակի չէ, սակայն օգոստոսին  
50° օրական ամպլիտուդան սովորական երևույթ է սև գույ-  
նի ապարների մակերևույթին: Ըստ բարձրության՝ ամպլի-  
տուդան փոքրանում է. 3000 մ բարձրության վրա Արագածում  
մեր նկատած ամենամեծ օրական ամպլիտուդան եղել  
է 58° (ցերեկը՝ 62°, գիշերը՝ 4°), սակայն միջինը կազմում  
է ոչ ավելի, քան 35—40°:

Ապարի մակերևույթի տաքացումը մեծապես կախված  
է արեգակի ճառագայթների անկման անկյունից: Նույնիսկ  
նույն քարաբեկորի մակերևույթին նրա տարբեր մասերում  
ջերմաստիճանը տարբեր է լինում: Այնտեղ, որտեղ ճառա-  
գայթներն ուղղահայաց են ընկնում, ջերմաստիճանն ամե-  
նից բարձր է: 1955թ. հուլիսի 10—12-ին Արագածում  
3000 մ բարձրության վրա կատարած դիտումների հիման  
վրա կարող ենք գծել հետևյալ կորը (գծ. 8): Ինչպես ցույց



Գծ. 8. Ճառագայթների անկման անկյան և ապարի ջերմաս-  
տիճանի կապի գրաֆիկը 1955 թ. (Արագածում)

է տալիս գծագիրը, որքան ճառագայթների անկման ան-  
կյունը մոտենում է ուղղահայացին, այնքան ջերմաստիճա-

նը բարձրանում է, սակայն զգալի շեղումներ են նկատվում կորից՝ երկու հարևան քարաբեկորների համար, ինչպես նաև նույն քարաբեկորի տարբեր հատվածների համար, որ հասնում է 5<sup>0</sup>-ի: Այդ պետք է բացատրել նրանով, որ ապարի մակերևույթի ջերմաստիճանը կախված է ոչ միայն ճառագայթների անկման անկյունից, այլև բազմաթիվ այլ դործոններից՝ գույնից, խորզուրորդությունից, մակերևույթի բուսածածկից, քարաբեկորի մեծությունից, դիրքագրումից և այլն: Այսպես, օրինակ՝ Արագածի հյուսիսային լանջին 1840 մ բարձրության վրա Կուլիջան գյուղի մոտ ընտրել ենք երկու քարաբեկոր, որոնցից մեկը բոլորովին մերկ էր, մյուսը՝ ծածկված քարաքոսներով: Նրանց մակերևույթին ջերմաստիճանային տարբերությունը ժամը 14-ին կազմեց 12<sup>0</sup> (42 և 30): Շուռնուխի մոտ 2000 մ բարձրության վրա անտառի եզրում մամռապատ քարաբեկորի վրա ապարի մակերևույթի ջերմաստիճանը ցերեկը բարձրացավ միայն 22<sup>0</sup> (օդի ջերմաստիճանը 20<sup>0</sup>), իսկ մերկ քարաբեկորի վրա այն հասավ 40<sup>0</sup>-ի: Զերմաստիճանային մեծ տատանումներ տալիս են նաև տարբեր գույնի ապարները: 30 սմ մեծության երկու քարաբեկորներ նույն դիրքագրման պայմաններում ջերմաստիճանային տարբերություններ տվեցին մինչև 8<sup>0</sup>-ի չափով, երբ մեկը ուներ մուգ գույնի «անապատային այրվածք», իսկ մյուսը զուրկ էր այդպիսի այրվածքից և մոխրագույն էր: Ապարի կազմի մեջ մտնող բաց գույնի միներալները (պլագիոկլազները) լինելով սպիտակավուն գույնի, ունեն մեծ ալբեդո, ուշ են տաքանում, իսկ մուգ գույնի միներալները՝ շուտ: Տարբեր ընդարձակման գործակից ունենալով, միներալները պոկվում են միմյանցից, որը մեխանիկական հողմնահարման էությունն է:


Մեր դիտումներով պարզվել է, որ բարձրավանդակի ապարների տաքացումը կախված է նաև նրանց չափերից: Որքան քարաբեկորը փոքր լինի, այնքան արագ է տաքանում, արագ էլ սառչում է: Այսպես, օրինակ՝ գետնի մեջ թաղված խոշոր քարաբեկորի մակերևույթին օրական ջերմաստիճանային ամպլիտուդան 5—6<sup>0</sup>, նույնիսկ 10<sup>0</sup>-ով ավելի փոքր է, քան փոքր քարաբեկորի վրա: Այստեղից պետք է

ենթադրել, որ որքան քարաբեկորը փոքրանում է, այնքան նա շուտ է ընկալում արեգակի ճառագայթների ազդեցությունը, հետևաբար արագ է մասնատվում: Սակայն մասնատումը ունի իր սահմանը, որից այն կողմ ապարի տաքացումը կատարվում է ամբողջությամբ, նրա տարրեր մասերի միջև ջերմաստիճանային տարրերություններ այլևս չեն նկատվում, հետևաբար մասնիկների տարրերը ընդարձակումը դադարում է:

Ապարների մակերևույթին ջերմաստիճանային տատանումները սերտորեն կախված են ապարի կառուցվածքից, նրանում եղած խոնավության քանակից և այլ հատկանիշներից: Տուֆերն ու այլ ծակոտկեն ապարները ավելի քիչ են ենթարկվում ջերմաստիճանային տատանումների, քան հոծ բազալտներն ու մուգ գույնի այլ ապարները: Այստեղ նշանակություն ունի ոչ միայն ալբեդոն, այլև ապարի ջերմահաղորդականությունը: Որքան ջերմահաղորդականությունը փոքր լինի, այնքան նա ղգայուն է լինում ջերմության նկատմամբ: Երևանում ամռանը բազալտների վրա օրական ամպլիտուդան 5—8°-ով ավելի է, քան նույն գույնի տուֆերի վրա: Չմռանը այդ տարրերությունը վերանում է:


Ապարների մակերևույթի ջերմաստիճանային տատանումներում մեծ է ամպամածության և փոփոխական ամպամածության դերը: Ամպամած օրը ջերմաստիճանային տատանումները շատ փոքր են: Երկնակամարի վիճակի փոփոխությունները ըստ ամիսների և ըստ բարձրության՝ ցույց են տալիս, որ ամենուրեք ամառային ամիսներին երկնակամարն ավելի պարզ է, արեգակը ավելի շատ է լուսավորում: Այսպես, օրինակ՝ հիմն ձմռանը Երևանում պարզ եղանակը (0—3 բալ) ժամը 13-ին կազմում է 16 %, ապա ամռանը մեծանալով՝ հասնում է 60—70 %-ի (դժ. 9): Պարզ եղանակը ժամը 13-ին նույնպիսի ընթացք ունի նաև բարձրադիր կայաններում, սակայն ամառային ամիսներին տոկոսային աճը ըստ բարձրության փոքրանում է: Այսպիսով, ցածրադիր մասերը ավելի շատ են լուսավորվում արեգակի ճառագայթների միջոցով, քան բարձրադիր մասերը:

Կառուցելով երկնակամարի պարզ (0—3 բալ), կիսա-



Քծ. 9. 0—3 բալ ամպամածության գրաֆիկը երևան, Լեռնանայի և Արագած բլ կայանների տվյալներով

պարզ (3—7 բալ) և ամպամած (7—10 բալ) վիճակների գրաֆիկը, ըստ բարձրության, օգոստոս ամսվա համար (գծ. 10), նկատում ենք հետևյալ օրինաչափությունը. կիսա-




Քծ. 10. 0—3, 3—7, 7—10 բալ ամպամածությունը օգոստոսին ըստ բարձրության (բազմամյա միջինը)

պարզ և ամպամած վիճակի կորերը ըստ բարձրության աճում են, այդ նշանակում է՝ ըստ բարձրության նվազում

է արեգակի ճառագայթներով ապարների լուսավորման գու-  
մարային տևողությունը: Ինչ վերաբերում է պարզկա եզա-  
նակին, ապա այն հակառակ ընթացքն ունի. Արարատյան  
դաշտում հասնում է 70—80 % -ի, իսկ Արագածում՝ ոչ  
ավելի, քան 30 % -ի:

Ինչպես նշվեց, ապարների ջերմաստիճանային տատա-  
նումներում մեծ դեր է կատարում փոփոխական ամպամա-  
ծությունը: Եթե երկնակամարը պարզ է, ապա ջերմաստի-  
ճանների օրական ընթացքի կորը սահուն տեսք է ստանում  
(գծ. 11), մաքսիմումի հասնելով 14—15-ին, մինիմումի՝




Գծ. 11. Անամպ եզանակի դեպքում օրական ջերմաստիճանների  
ընթացքի գրաֆիկը նրևանում (1960 թ. հուլիսի 30-ին)

6—7-ին (ամռանը): Սակայն, եթե օրվա ընթացքում արե-  
գակը մի քանի անգամ թաքնվում է ամպերի ետևում, ապա  
պատկերը փոխվում է. ջերմաստիճանային ամպիտուդա  
նկատվում է ոչ թե մեկ անգամ, այլ մի քանի: Այս դեպքում

անշուշտ ամպլիտուդաները այնքան մեծ չեն լինում, որքան մեկ ամպլիտուդայի դեպքում, սակայն՝ ջերմաստիճանի իջեցումն ու բարձրացումը ավելի արագ է կատարվում, քան պարզ եղանակի դեպքում: Այսպես, օրինակ՝ Արագածի հյուսիսային լանջին 2000 մ բարձրության վրա պարզ եղանակի դեպքում 1954 թ. օգոստոսին դիտվել է ջերմաստիճանային ամպլիտուդա  $40^{\circ}$  ( $8^{\circ}$ — $48^{\circ}$ )՝ 6 ժամվա ընթացքում, այսինքն՝ միջին հաշվով՝  $8^{\circ}$ -ի բարձրացում մեկ ժամում: Մեկ ուրիշ օր փոփոխական ամպամածութայան դեպքում նկատվել է ամպլիտուդա 8—12 անգամ, ընդ որում ամպլիտուդայի շափր կախված էր երկնակամարի տվյալ վիճակի տևողությունից: Այս դեպքում նկատվեց մաքսիմում ջերմաստիճանային աճ ժամում 18—20 $^{\circ}$ : Բաղմաթիվ դիտումներից պարզվել է, որ Երևանում մեկ ժամվա ընթացքում ջերմաստիճանային աճը փոփոխական ամպամածութայան դեպքում կարող է հասնել 25 $^{\circ}$ -ի: Այսպիսով, փոփոխական ամպամածութայան դեպքում ջերմաստիճանի բարձրացումն ու իջեցումը ապարի մակերևույթին ավելի արագ է կատարվում ցերեկային ժամերին, քան պարզ եղանակի դեպքում՝ առավոտյան. հետևաբար փոփոխական ամպամածությունը հողմնահարման մեջ ունի վճռական նշանակություն. երբ արեգակը դուրս է գալիս ամպերի ետևից, ապարի ջերմաստիճանի բարձրացումն ավելի արագ է կատարվում, քան անկումը ամպամածութայան դեպքում: Պարզվեց նաև այն, որ խոշորաբեկոր ապարները ավելի քիչ զգայուն են փոփոխական ամպամածութայան նկատմամբ, քան մանրաբեկորները: Այսպես, օրինակ՝ 30 սմ մեծության քարաբեկորի վրա ջերմաստիճանային փոփոխությունը փոփոխական ամպամածութայան դեպքում նկատելի է 5—7 րոպեում, իսկ խոշորահատիկ ավազի վրա՝ 2—3 րոպեում: 20 սմ մեծության քարաբեկորի վրա արևի ամպերի ետևը թաքնվելու դեպքում ջերմաստիճանը մեկ ժամվա ընթացքում անկում կատարեց 12 $^{\circ}$ , իսկ խոշորահատիկ ավազի մոտ՝ 14 $^{\circ}$ : Որքան պարզ և ամպամած երկնակամարների վիճակի փոփոխությունը արագ կատարվի, այնքան ամպլիտուդաների հաճախականությունը կմեծանա, սակայն ջերմաստիճանային

ամպլիտուդայի թվական արժեքը կփոքրանա: Մեր ունեցած տվյալների հիման վրա մենք հիմք ունենք ենթադրելու, որ ամենից ինտենսիվ ջերմաստիճանային հոդմնահարում առաջանում է այն դեպքում, երբ ամռանը ժամը 10—19 ժամանակամիջոցում արեգակը կանոնավոր ձևով 4—5 անգամ ծածկվում է ամպերով: Ինչպես ցույց է տալիս դժ. 12-ը, 3—7 բալ ամպամածության կորը օգոստոսին ամենից մեծ



Գժ. 12. 3—7 բալ ամպամածության տարեկան ընթացքը ժամը 13-ին Լենինական (1), Երևան (2), Արագած բլ (3) կայաններում

արժեք ունի Լենինականում: Այսպիսով, փոփոխական ամպամածությունը ավելի շուտ յուրահատուկ է խոշոր հրաբխային զանգվածների միջին բարձրության գոտուն, որտեղից էլ պարզ է դառնում, թե ինչու այդ գոտում ամենից ինտենսիվ է մեխանիկական հոդմնահարումը:


Հողի ու ասպարնների մակերևույթի ջերմաստիճանային փոփոխություններում մեծ է լանջերի դիրքադրման նշանակությունը: Հյուսիսային դիրքադրման լանջերը ավելի քիչ են տաքանում, քան հարավային լանջերը: Որպես օրինակ նշենք մեր կողմից կատարած դիտումների արդյունքները Արագածում, 1954 թ. օգոստոսին:

Դիրքագր.	Քարձր ծովի մակերևույթից	Օդի ջերմաստիճ.	Հողի ջերմաստիճ. ըստ խորության սմ							
			0	5	10	15	20	25	30	40
Հյուսիս	8750	7,0	12,7	4,0	0,0	0,0	0,0	0,0	—	—
Հարավ	3700	12,0	22,5	16,5	13,0	9,5	8,5	7,5	6,0	6,5

2000 մ բարձրության վրա հյուսիսային լանջում և ոչ մի տեղ 52<sup>0</sup>-ից բարձր ջերմաստիճան չի նկատվել, մինչդեռ հարավային լանջում նշվել է մինչև 65<sup>0</sup>: Այստեղից պարզ է դառնում, որ հարավային լանջերում ջերմաստիճանային ամպլիտուդաներն ու մեխանիկական հողմնահարումն ավելի ինտենսիվ են, քան հյուսիսային լանջերում:

Այժմ քննարկենք ջերմաստիճանային տատանումներն ըստ խորության: Հողի ջերմաստիճանային ամպլիտուդաները կախված են մի շարք ազդակներից՝ խորքային ու մակերևույթային ջերմաստիճանների տարբերությունից (զրադիենտից), հողի մակերևույթի բնույթից, հողի մեխանիկական կազմից, խոնավության քանակից և այլն: Ուղղաձիգ գոտիականության մեջ այս ազդակները փոփոխվում են, ուստի փոխվում են նաև ջերմային պայմանները: Որպես կանոն պետք է նշենք, որ բուսածածկ հողի մեջ ջերմաստիճանային փոփոխությունները փոքր են: Ծովի մակերևույթից տարբեր բարձրությունների վրա բազմիցս շափել ենք հողի մակերևույթի ջերմաստիճանը և նկատել, որ բուսածածկ հողի վրա ջերմաստիճանը ցերեկային ժամերին 8—15<sup>0</sup>-ով ավելի ցածր է, քան մերկ հողի վրա: Գիշերային ժամերին էլ բուսածածկ հողի մակերևույթը 2—5<sup>0</sup>-ով տաք է: Այստեղից էլ հետևում է, որ բուսածածկ հողում ջերմաստիճանային ամպլիտուդաները փոքր են, ուստի փոքր է մեխանիկական հողմնահարման ինտենսիվությունը: 1954 թ. հունիսին Հրազդանի շրջանի Զրառատ գյուղի մոտ կատարած դիտումները սևահողի վրա տվեցին հետևյալ արդյունքները. մերկ հողի վրա օրական ջերմաստիճանային տատանումները նկատվում էին 30—35 սմ խորության տակ

(նայած խոնավության քանակին), իսկ բուսածածկ հողում՝ 20—25 սմ: Եթե ջերմաստիճանների օրական ընթացքն արտահայտելու լինենք գրաֆիկորեն, կստանանք հետևյալ պատկերը (գծ. 13): Ինչպես ցույց է տալիս գրաֆիկը, ջեր-



Գծ. 13. Ջերմաստիճանների օրական ընթացքը հողում ըստ խորության (Ջրառատ գյուղ, հունիս, 1954 թ.)

մաստիճանային տատանումների օրական ընթացքում ամենից մեծ տատանումները հողի մակերևույթի վրա են նկատվում: Ըստ խորության՝ ամպլիտուդան փոքրանում է և 30 սմ-ի վրա գրեթե ուղիղ գիծ է կազմում: Պարզ նկատելի է ջերմաստիճանային մաքսիմումի ուշացումը ըստ խորության: Եթե հողի մակերևույթին այն նկատվում է ժամը 14-ին, ապա 20 սմ խորության տակ՝ ժամը 20-ին: Նկատում ենք նաև մեկ ուրիշ երևույթ՝ գիշերային ժամերին հողի ջերմաստիճանն ավելի բարձր է, քան օդինը. սովորաբար հակառակն է նկատվում: Ըստ երևույթին այստեղ նշանակություն ունի ջերմափոխանակումը ստորին շերտերից և սառը օդի աղվեկցիան: Հողի խորքային ջերմաստիճանների օրական ընթացքի նման պատկեր տեսնում ենք նաև ապարների մեջ, որի մասին կխոսվի ստորև:


Ուսումնասիրելով Հիդրոմետ ծառայության վարչության տվյալները, նկատում ենք, որ ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության՝ տարեկան ու օրական ջերմաստիճանային ամպլիտուդաները հողի խորքում փոքրանում են: 0,2 մ և 1,6 մ խորությունների միջև ամսական

ջերմաստիճանների տարբերությունը հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ 6

Կայանի ան- վանումը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Երևան	11,9	9,2	3,5	3,6	7,9	10,0	11,6	10,7	5,4	1,7	7,5	11,9
Արագած բ/լ	2,9	3,4	3,0	1,3	0,6	3,4	9,4	9,7	2,5	1,5	2,2	2,6


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, Երևանում ջերմաստիճանային գրադիենտները շատ ավելի մեծ են, քան Արագածում. այդ նշանակում է՝ ջերմափոխանակումը խորը շերտերի հետ ավելի ինտենսիվ է, ուստի ջերմաստիճանային հողմնահարումը ավելի մեծ խորությունների վրա է գործում: Աղյուսակից երևում է, որ Երևանում մեծ գրադիենտներ նկատվում են տարեկան երկու անգամ՝ ամռանը հուլիս ու օգոստոս և ձմռանը՝ դեկտեմբեր ու հունվար ամիսներին: Արագածում մաքսիմում նկատվում է ամռանը: Չմեռային ամիսներին այստեղ երկրի մակերևույթը ծածկվում է ձյունով, մեծ գրադիենտները ստացվում են ոչ թե գրունտի, այլ ձյան շերտի մեջ: Կազմելով բացարձակ ջերմաստիճանների գրաֆիկը, Արագած կայանի տվյալներով 1954 թ. համար ստանում ենք հետևյալ պատկերը (զծ. 14): Ամառային մաքսիմում ջերմաստիճանների կորի մեջ ջերմաստիճանային տարբերությունը կազմում է 42,9<sup>0</sup>, մինչդեռ ձմեռային մինիմումի կորի մեջ անմիջապես հողի մակերևույթի և 1,6 մ խորության տակ ջերմաստիճանների տարբերությունը կազմում է բնդամենը 3—4<sup>0</sup>: Այստեղից եզրակացնում ենք, որ ձմեռային ամիսներին ջերմաստիճանային հողմնահարումը ձյունածածկ շրջաններում պետք է այնքան թուլանա, որ գրեթե դադարի: Դիտումները ցույց են տալիս, որ ըստ խորության՝ ամսական բացարձակ ամպլիտուդան փոքրանում է: Չմեռային ամիսներին ամպլիտուդաները բոլոր խորություններում փոքր են, շնորհիվ ձնածածկի:



Գծ. 14. Բացարձակ ջերմաստիճանների զրաֆիկը. Արագած բ/լ, 1954 թ.

Ամենամեծ ամպլիտուդաները բոլոր բարձրություններում նկատվում են ամառային ամիսներին: Ըստ բարձրության՝ փոքրանում են ամպլիտուդաները, և ջերմաստիճանային հոդմնահարումը թուլանում է:


Ուշագրավ է այն, որ հողաշերտի ու քարերի մեջ կատարած դիտումները նույն կայանում տալիս են մեծ շեղումներ: Քարերի մեջ մեծ են թե՛ տարեկան և թե՛ օրական ամպլիտուդաները (գծ. 15): Այսպես, օրինակ՝ 20 սմ խորության տակ Արագածում ամսական բացարձակ ջերմաստիճանային ամպլիտուդան հուլիսին հասնում է 21,3<sup>0</sup>-ի, մինչդեռ հողում այն կազմում է միայն 9,1<sup>0</sup>: Քարերի մեջ ջերմաստիճանային մեծ ամպլիտուդաները նկատվում են ոչ միայն Արագածի բարձրադիր մասերում, այլև նախալեռներում ու ստորոտներում: Արագածի օդ. կայանում քարերի մեջ կատարվող ջերմաստիճանային դիտումները մնող չեն կարող լրիվ բավարարել, որովհետև այնտեղ փաստորեն չափում են քարերի մեջ գտնվող օդի ջերմաստիճանը, մինչդեռ մեղ հետաքրքրում է բուն ապարի ջերմաստիճանը,




Գծ. 15. Ջերմաստիճանների տարեկան ընթացքը քարերի մեջ և հողում. Արագած բլր, 1954—55 թթ.

ուստի այդ պակասը լրացնում ենք մեր դիտումներով, որոնց մեթոդիկան արդեն նկարագրված է վերևում:

Ինչպես ցույց են տալիս գրաֆիկները (գծ. 11, 16, 17),



Գծ. 16. Օրական ջերմաստիճանային ընթացքը ապարի մեջ (Ալագեկլար—3000 մ) 1960 թ. հուլիսի 18-ին



Գծ. 17. Օրական ջերմաստիճանային ընթացքը Արագածուժ (2000 մ) 1953 թ. օգոստոսի 13-ին

ջերմաստիճանային մեծ տատանումները նկատվում են ամառային ամիսներին, պարզ երկնակամարի դեպքում: Ամենաբարձր ջերմաստիճանը ապարի մակերևույթին է. բայտ խորության կորերը ստանում են ավելի սահուն տեսք. ընդ որում ջերմաստիճանի մաքսիմումն ու մինիմումը բոլոր դեպքերում բայտ խորության ուղանում են: Ջերմաստիճանային օրական ամպլիտուդաների նույն ընթացքը տեսնում ենք նաև անտառում, սակայն այն տարբերությամբ, որ այստեղ ջերմաստիճանային օրական ամպլիտուդան շատ փոքր է և ջերմաստիճանային թռիչքներ չեն նկատվում: Մակերևույթային և խորքային ջերմաստիճանների միջև տարբերությունները փոքր են, ուստի բայտ խորության ջերմային ընդարձակումը կամ սեղմումը թույլ է, թույլ է մեխանիկական հողմնահարումը: Այլ է պատկերը փոփոխական ամպամածուխային դեպքում (գծ. 16, 17): Գրաֆիկներից երևում է, որ արևածագից անմիջապես հետո տեղի է ունենում ջերմաստիճանի արագ բարձրացում, որը

մեկ ժամվա ընթացքում կարող է հասնել 15—20<sup>0</sup>-ի: Երկ-  
կոյան ժամերին ջերմաստիճանի անկումը այնքան արագ չի  
կատարվում, որքան բարձրացումը առավոտյան: Պարզվում  
է, որ արեգակի ուղիղ ճառագայթների ազդեցության տակ  
ապարը մեծ արագությամբ է տաքանում, մինչդեռ հովա-  
ցումը տեղի է ունենում ճառագայթարձակմամբ և օդին  
չփվելու միջոցով, որն այնքան ինտենսիվ չէ: Գրաֆիկները  
ցայտուն պատկեր են ստեղծում ապարի մակերևույթի ջեր-  
մաստիճանի փոփոխության վերաբերյալ, երբ երկնակա-  
մարը մի քանի անգամ ծածկվում է ամպերով: Այդ փոփո-  
խությունները ակնառու են հատկապես մակերևույթային  
շերտում: Ըստ խորության՝ կորերը ընդունում են սահուն  
տեսք. ամպիտուղան փոքրանում է: Ուշագրավ է կորերի  
հատման երևույթը: Կորերի հատումը ցույց է տալիս, որ  
մակերևույթային և խորքային շերտերի մեջ ջերմաստիճա-  
նային ու ծավալային փոփոխությունները ընթանում են հա-  
կառակ ուղղությամբ, որը, մեր կարծիքով, ամենից կարե-  
վորն է ջերմաստիճանային հողմնահարման մեջ: Ապարի  
մակերևույթի և խորքային շերտերի ջերմաստիճանների  
մաքսիմում տարբերությունը նկատում ենք ցերեկային ժա-  
մերին, նշանակում է՝ հողմնահարման ինտենսիվ պրոցեսը  
ցերեկային ժամերին է: Գիշերը ջերմաստիճանային տար-  
բերությունները խիստ նվազում են և երբեմն վերանում:  
Յերեկային ժամերին ապարի մակերևույթային և խորքային  
ջերմաստիճանների միջև տարբերությունը ամենամեծ ար-  
ժեք ունենում է ժամը 13—17-ի ընթացքում: Գիշերային  
ժամերին այդ տարբերությունը շնչին է: Գիշերը ապարի  
խորքում ջերմաստիճանը մի փոքր ավելի բարձր է, քան  
մակերևույթին: Ինչպես հուլի մեջ, այնպես էլ ապարների  
խորքում ջերմաստիճանային մաքսիմումներն ու մինիմում-  
ները ուշանում են:

Ապարների մեջ ձմեռային ամիսներին ջերմաստիճանա-  
յին փոփոխությունների գիտումներ կատարել ենք Լենինա-  
կանում և մասամբ Երևանում՝ թե՛ մերկ քարաբեկորների  
վրա և թե՛ ձյան շերտի տակ: 1952 թ. հունվարին Լենինա-  
կանում մերկ տուֆի վրա կատարած գիտումները տալիս

են հետևյալ պատկերը. ջերմաստիճանի օրական ընթացքում մինիմում նկատում ենք ժամը 7—8-ի ընթացքում: Սև տուֆի վրա ջերմաստիճանային տատանումները ավելի մեծ են, քան օդինը: Եթե օդի ջերմաստիճանների օրական տատանումների ամսական միջինը հասնում է 5<sup>0</sup>-ի, ապա տուֆի մակերևույթին՝ 8—10<sup>0</sup>: Ցերեկային ժամերին պարզկա երկնակամարի դեպքում ապարի մակերևույթը այնքան է տաքանում, որ օդի ջերմաստիճանի համեմատությամբ՝ 8—10<sup>0</sup>-ով բարձր է լինում, իսկ ամպամած եղանակի դեպքում տարբերությունը աննշան է: Ըստ խորություն՝ ապարի մեջ ջերմաստիճանային ամպլիտուդաները աստիճանաբար փոքրանում են և 30—35 սմ խորություն տակ՝ մարում: Ամենամեծ ամպլիտուդան 1952 թ. հունվարին Լեհինականում սև տուֆի մակերևույթին եղել է 22<sup>0</sup>: Երբեմն ցերեկը ջերմաստիճանը բարձրանում է 0<sup>0</sup>-ից ոչ միայն մակերևույթին, այլ նաև 5 սմ և 10 սմ խորության տակ. ապարի մեջ պարունակվող ջուրը հալվում է: Այսպիսով, նույնիսկ հունվարին ապարի մակերևույթի վրա տեղի է ունենում սառնամանիքային հողմնահարում, եթե այն ծածկված չէ ձյան շերտով:

Ձմեռային ամիսներին ջերմաստիճանային տատանումները ջրի սառեցման աստիճանից ցածր ջերմաստիճաններում իրենց նշանակությունն ունեն սառնամանիքային հողմնահարման մեջ: Հայտնի է, որ սառնամանիքային հողմնահարումը բնորոշ է 0<sup>0</sup>-ի շուրջը տեղի ունեցող ջերմաստիճանային տատանումներին, երբ ջուրը ապարի մեջ պարբերաբար սառչելով ու հալչելով, առաջացնում է ծավալային զգալի փոփոխություններ ու ճեղքերի լայնացում: Սակայն վերջին ժամանակներս կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ 0<sup>0</sup>-ից շատ ցածր ջերմաստիճաններում ջուրը դեռևս կարող է մնալ հեղուկ վիճակում: Ինչպես նշում է Ի. Ա. Յիտովիչը (1947), տարբեր գրունտներում մինչև —25<sup>0</sup> սառնամանիքի դեպքում շառչող ջրի քանակը կարող է հասնել 4—88 %-ի: Միևնույն ժամանակ պարզվել է, որ ջերմաստիճանի իջեցման դեպքում ապարի մեջ շառած ջրի քանակը աստիճանաբար պակասում է: Այստեղից կարող ենք անել այն հետևու-

թյունը, որ Հայկական ՄՍՌ հրաբխային բարձրավանդակի այն մասերում, որտեղ ձյան շերտը բարակ է և ապարների մեջ ջերմաստիճանային տատանումներ են նկատվում, ապա տեղի է ունենում սառնամանիքային հողմնահարման թույլ պրոցես: Այստեղ ևս ձյան շերտը արգելակում է հողմնահարմանը:


Երևանում 1961 թ. մարտ ամսին կատարած դիտումները տալիս են հետևյալ պատկերը. 15 սմ հաստությամբ ձյան թարմ շերտի տակ ջերմաստիճանային տատանումները շատ փոքր են, նույնիսկ 5 սմ խորությամբ տակ արդեն ապարի մեջ նրանք չեն նկատվել. հենց այստեղից էլ կարելի է կզրակացնել ձյան շերտի նշանակությունը մասին:

Վերջին հարցը, որի վրա անհրաժեշտ է կանգ առնել, հողմնահարման ակտիվ պերիոդի տևողության հարցն է՝ ուղղաձիգ գոտիականության մեջ: Հողմնահարման ակտիվ պերիոդ ասելով՝ մենք հասկանում ենք այն ժամանակամիջոցը, երբ երկրի մակերևույթը ազատ է ձյան շերտից, և ապարների մակերևույթին տեղի են ունենում ջերմաստիճանային տատանումներ: Հայտնի է, որ ամբողջ բարձրավանդակում ձմռանը ձյուն է գալիս, սակայն կայուն ձյան ծածկը յուրահատուկ է 1300—1400 մետրից բարձր լեռնազանգվածներին ու սարահարթներին: Որքան բարձրանում ենք վերև, այնքան ձյան ծածկի հզորությունը մեծանում է, մեծանում է նաև ձյան ծածկի տևողությունը: Այսպես, օրինակ՝ Արարատյան դաշտից Արագած բարձրանալիս, ձյան ծածկի տևողությունը մեծանում է հետևյալ կերպ [ըստ Ս. Վ. Շահինյանի, 1960 (աղյուսակ 7)]:

Աղյուսակ 7

Գայանի անվ.	Բարձր. ծովի մակ.-ից	Ձյան ծածկի տևող. օրերով
Երևան	907	80
Աշտարակ	1155	90
Ապարան	1891	140
Կոշարուլաղ	1967	150
Արագած բ/լ	3229	270

Անձյուն օրերի քանակի գրաֆիկը (զծ. 18) ցույց է տալիս, որ բառ բարձրության անձյուն օրերի քանակը աստիճանաբար պակասում է և 4000 մ բարձրության վրա պետք է որ հանգես գա կլիմայական ձյան սահմանը: Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի մեծ մասում ձյան շերտի հզորությունը 40 սմ-ից մեծ է, միայն Արարատյան դաշտի եզրային մասերում է, որ այն կազմում է 10—30 սմ և անկայուն շերտ է առաջացնում, ուստի բարձրավանդակի մեծ մասում ձմռանը առաջանում է կայուն ձյան ծածկ: Այսպի-



Գծ. 18. Անձյուն օրերի քանակն բառ բարձրության 30 կայանների տվյալներով

սով, ակտիվ մեխանիկական հողմնահարման ամենակարգ պերիոդը համընկնում է Արարատյան դաշտի եզրային շրջաններին, որտեղ շուրջ մեկ տարի անընդհատ հողմնահարում է տեղի ունենում: Միջին բարձրության լեռներում՝ Արագածի լանջերին, լուովա բարձրավանդակում, Սյունիքի բարձրավանդակի ցածրագիր մասերում, լենինականի բարձրավանդակում, Սևանի ավազանում ակտիվ հողմնահարման պերիոդը կազմում է 200—280 օր, և քանի բարձրանում ենք, այնքան այն կրճատվելով՝ Արագածի հոռնավ (Չավախքի), Գեղամա, Վարդենիսի լեռնաշղթաների, Սյունիքի բարձրավանդակի բարձրագիր մասերում հասնում է միայն 50—100 օրվա:

Ամփոփելով ջերմաստիճանային հողմնահարման մեջ կլիմայական գործոնի դերի նշանակության հարցը,

կարող ենք նշել հետևյալը. ամենից ինտենսիվ մեխանիկական հողմնահարումը յուրահատուկ է նախալեռնային շրջաններին. բայց բարձրություն՝ ակտիվ պերիոդի փոքրացման հետ մեկտեղ փոքրանում է մեխանիկական հողմնահարման էֆեկտիվությունը: Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի ձյան ծածկը ձմեռային ամիսներին թուլացնում է հողմնահարման գործոնների ազդեցությունը, և հողմնահարումը ձմեռային ամիսներին գրեթե դադարում է:

Արտածայթուկների հողմնահարման մեջ յուրահատուկ տեղ են զբաղում ֆուլգուրիտները: Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակում ամառային ամիսներին հաճախակի են նկատվում ամպրոպներ, որոնք ուղեկցվում են կայծակնահարություններ, որն ալելի ակնառու է բարձր լեռնային շրջաններում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ կայծակը հաճախակի է խփում նույն տեղը, ուստի ֆուլգուրիտները զարգացած են անհավասարաչափ: Կայծակի՝ հաճախակի նույն տեղը խփելու փաստը մենք բացատրում ենք ապարների մագնիսական հատկանիշներով: Այսպես, օրինակ՝ ֆուլգուրիտները շատ զարգացած են Արազածի արևմտյան դադաթում, այստեղ պետք է լինեն մագնիսական դաշտի ուժեղ խոտորումներ, որոնք հաստատվում են դիտումներով (Յուշենկո, 1932): Ֆուլգուրիտները զարգացած են նաև Գեղամա լեռներում (Բ. Մ. Կուպլետսկի, 1929), Վարդենիսի լեռներում, Մեծ Իշխանասարի վրա և այլն: Նրանք արտահայտված են ապարի մակերևույթի ապակեման վերափոխմամբ: Շատ բարձր ջերմաստիճանի տակ ապարի մակերևույթը հալվում է, ճաքճքում: Չնայած այն հանգամանքին, որ ֆուլգուրիտները ուսումնասիրվող բարձրավանդակում լավ զարգացած են, բայց հողմնահարման պրոցեսներում նրանց տեսակարար կշիռը շատ չնչին է:

Հողմնահարման երևույթներից են «արևային այրվածքները», որոնց երբեմն անվանում են նաև «անապատային այրվածքներ»: Սրանք արտահայտված են ապարի հարթ մակերևույթի մուգ և փայլուն գունավորմամբ, կարծես ապարի մակերևույթը արծաթավուն-սև էմալով ծածկված լինի: «Արևային այրվածքների» հարցը գրավոր բազմաթիվ

աղբյուրներում տարբեր ձևով է մեկնաբանված: Հեղինակների մի խումբ գտնում է, որ երկաթի, մագնիզիումի և այլ մետաղների օքսիդները տարիների ընթացքում ջրի հետ միասին մազական անցքերով բարձրանում են ապարի մակերևվույթ և այնտեղ կուտակվում: Մեկ ուրիշ խումբ գտնում է, որ այդ կեղևը բերված է դրսից՝ ջրի միջոցով. երրորդ խումբը այրվածքների կեղևի գոյությունը կապում է կապտականաչ ջրիմուռների գործունեության հետ և այլն: Ըստ երևվույթի այս հետաքրքիր գոյացությունը մի շարք ազդակների համատեղ ներգործությամբ է առաջանում: Մեր հավաքած նմուշների լաբորատոր ուսումնասիրությունը այս ուղղությամբ չհաստատեց այդ կեղևի բիոգեն ծագումը: «Արևային այրվածքների» մեջ կապտականաչ ջրիմուռներ չհայտնաբերվեցին: Սակայն այդ դեռևս չի նշանակում, որ այրվածքների ստեղծման մեջ միկրոօրգանիզմները բոլորովին մասնակցություն չունեն:

Մեր դիտումները հրաբխային բարձրավանդակի բարձրադիր մասերում հանգեցրել են այն եզրակացություն (1957), որ այրվածքների ստեղծման մեջ բացի մինչև այժմ նկարագրած ազդակներից, նշանակություն ունեն ֆուլգուրիտները: Բարձր լեռնային շրջաններում կայծակը ճայթում է ուղղակի ապարների մակերևույթին և առաջացնում այսպես կոչված կեղևային ֆուլգուրիտներ:

«Անապատային այրվածքների» մի հետաքրքիր տեսակ նկատում ենք Արագածի արևմտյան գագաթում, որն առաջին անգամ նկարագրել է Բ. Ա. Կլոպոտովսկին (1953): Այս այրվածքներն արտահայտված են ապարի մակերևույթի վրա կանոնավոր մուգ գույնի օղակներով, որոնք ունեն մատանու մեծություն. օղակի հաստությունը 2—3 մմ է, և երբեմն նրանք մեկը մյուսին հատում են: Մի քարաբեկորի վրա հաշվվեցին երկու տասնյակից ավելի այդպիսի օղակներ: Այս հետաքրքիր երևույթի բացատրությունը մինչև այժմ անհայտ է. հնարավոր է, որ նշանակություն ունեն թե՛ քիմիական պրոցեսները և թե՛ միկրոօրգանիզմները:


ՍԱՌՆԱՄԱՆԻՔԱՅԻՆ ՀՈՂՄՆԱՀԱՐՈՒՄԸ ԵՎ ՉԻՆԳԻԼՆԵՐԻ  
ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ժամանակակից հողմնահարման կեղևի մեջ նշանակալի-  
տեղ են գրավում քարացրոնները, որոնք Հայկական լեռնաշ-  
խարհում կոչվում են շինգիլներ և ըստ ակադ. Բ. Բ. Պոլինովի-  
զասակարգման (1935) պատկանում են հողմնահարման կե-  
ղևի առաջին, այսինքն՝ բեկորահատման ստադիային: Չին-  
գիլները մեծ տարածում ունեն հրաբխային բարձրավանդա-  
կի բոլոր խոշոր զանգվածների վրա և ռելիեֆի կարևոր  
տարրն են կազմում: Հետազոտողների գերակշռող մեծամաս-  
նությունը (Ֆ. Յու. Լեվինսոն-Լեսսինգ, Բ. Լ. Լիշկով, Ա. Ն.  
Ջավարիցկի, Կ. Ն. Պաֆֆենհոլց, Ի. Ս. Շչուկին, Ն. Վ. Դու-  
միտրաշկո և ուրիշներ) շինգիլների առաջացումը կապում են  
սառնամանիքային հողմնահարման հետ: Ա. Տ. Ասլանյանը  
(1958) հայտնում է այն միտքը, որ չորրորդական լավային  
արտավիժումները երբեմն տեղի են ունեցել ձյան ծածկոց-  
ների ու սառցադաշտերի վրա. հետագայում լավաները ջար-  
դատվելով, վերափոխվել են շինգիլների՝ որպես քարաբեկոր-  
ների քառային կուտակումների:


Այն բոլոր երկրներում, որտեղ չորրորդական պերիո-  
դում սառցապատում է եղել, քարացրոնները սովորական  
երևույթ են. այդպիսի քարացրոնները մեծ տարածում ունեն  
Սիբիրում, Ուրալում, Սիբիրում, Միջին Ասիայում և կոչվում  
են կուրումներ: Բ. Լ. Լիշկովը (1931) Արագածի շինգիլ-  
ները դիտում է որպես անցյալից՝ չորրորդական պերիոդից,  
մնացած քարացած-անշարժացած բրածո ձևեր:

Չոր, ցամաքային կլիմայական պայմաններում շինգիլ-  
ներ հանդիպում են ոչ միայն բարձր լեռնային զանգվածնե-  
րում, այլև նախալեռներում ու ստորոտներում: Հյուսիսահա-  
յաց լանջերում նրանք ավելի քիչ տարածում ունեն, քան  
հարավահայաց լանջերում, որովհետև հյուսիսահայաց լան-  
ջերում խոնավությունն ավելի երկար է պահպանվում, և  
բարենպաստ պայմաններ կան հողաբուսական ծածկի զար-  
գացման համար: Անկախ գիրքագրումից, 3200—3500 մետ-


րից բարձր հրաբխային զանգվածները համատարած կերպով ծածկված են շինգիլներով:




1



2



3



4

Գծ. 10. Չինգիլների առաջացման սխեման

Չինգիլների առաջացման հիմնական դործոն մենք համարում ենք սառնամանիքային հողմնահարումը՝ մակրոժելիվացիան: Սակայն մեր տեսակետը տարբերվում է մյուսներից նրանով, որ չինգիլների հիմնական զանգվածի ստեղծումը կապում ենք լավաների արտափոխման անմիջապես հետո տեղի ունեցած սառնամանիքային հողմնահարման երևույթների հետ (գծ. 19), իսկ ժամանակակից սառնամանիքային հողմնահարմանը և նրա միջոցով առաջացող չինգիլներին տալիս ենք ոչ մեծ տեղ, գտնելով, որ ժամանակակից սառնամանիքային հողմնահարումը առաջացնում է հիմնականում միկրոժելիվացիա:

Ինչպես հայտնի է, ապարներում ջուրը հանդես է գալիս մի քանի տարատեսակներով, որոնցից միայն գրավիտացիոն և մագնական ջրերն են, որ շուտ են սառչում և ստեղծում են մակրոժելիվացիա: Վերջին ժամանակներս կատարած փորձերը մի շարք գիտնականների կողմից՝ պարզել են, որ ապարներում գտնվող ջուրը սառչում

է ոչ թե 0°-ի տակ, կամ նրան մոտ ջերմաստիճանում, այլ

հաճախ 0<sup>0</sup>-ից շատ ցածր ջերմաստիճաններում դեռևս պահպանում է իր հեղուկ-ազդեցատային վիճակը: Ա. Վ. Ռակովսկու փորձերից պարզվել է, որ շատ բարակ կոլոիդալ թաղանթներում ջուրը չի սառչում նույնիսկ —180<sup>0</sup>-ի տակ: Միևնույն ժամանակ պարզվել է, որ որքան ջերմաստիճանը ցածր լինի, այնքան հեղուկ ջրի քանակը կպակասի: Այստեղից պետք է հանգել այն եզրակացության, որ 0<sup>0</sup>-ից ցածր ջերմային տատանումները նշանակություն ունեն սառնամանիքային հոդմնահարման մեջ:

Ցրաի և ջրի ներգործությունն ապարի վրա մի բարդ պրոցես է. լաբորատոր ուսումնասիրություններով հաստատված է, որ քարաբեկորը պարբերաբար սառեցնելու դեպքում ջուրը մազական անցքերում անընդհատ շարժման մեջ է գտնվում: Սառեցման առաջին պերիոդում նկատվում է ջրատվություն՝ ապարի մակերևույթից ջուրը գոլորշիանում է. այնուհետև, երբ ապարի մակերևույթը սառչում է, գոլորշիացումը դադարում է: Հալեցման դեպքում խոնավությունը հակառակ ընթացքն ունի. ջուրը թափանցում է ապարի մեջ, և մազական անցքերը լրացուցիչ ջուր են ստանում: Սառեցման ու հալեցման ցիկլերից հետո ապարի կշիռն ավելանում է, նշանակում է՝ նոր ճեղքեր են գոյացել և լրացուցիչ ջուր է թափանցել այնտեղ, պայմաններ ստեղծելով միկրոժելիվացիայի համար:

Ինչպես ցույց է տալիս Տրիկարը (J. Tricart, 1956), ժելիվացիայի բնույթը կախված է միջավայրի պայմաններից ու լիթոլոգիայից. նրա փորձերով պարզվել է, որ շոր ապարում ժելիվացիան պրակտիկորեն էֆեկտիվ չէ, այն հատկապես ինտենսիվ է արտահայտված այն ապարներում, որոնք կիսով չափ ընկղմված են ջրի մեջ:

Ապարների դիմադրողականությունը միկրոժելիվացիայի նկատմամբ մեծապես կախված է ճեղքերի դասավորությունից ու նրանց խտությունից: Որքան ճեղքերը խիտ լինեն, այնքան ապարի մասնատումը ինտենսիվ կլինի: Որքան ապարը հոծ լինի, այնքան հեշտ կառաջացնի շիճուկներ: Այն ապարների վրա, որոնք ունեն խոշորահատիկ ստրուկտուրա, ինտենսիվ է արտահայտված միկրոժելիվացիան, որի հետև-

ւիւնքով դրանք արագութեամբ վեր են ածվում խճի ու ավա-  
դի՝ նախքան շինգիլներ առաջացնելը:

Մակրոժելիվացիայի հետեանքով առաջացած շինգիլնե-  
րի ստեղծման մեխանիզմը սառնամանիքային հողմնահար-  
ման առաջին ստադիան է: Այս ստադիայում ապարների բե-  
կորահատումը շատ արագ է ընթանում: Բարենպաստ պայ-  
մաններում (ջրի առկայութեան, հաճախակի սառեցման  
դեպքում) մի քանի տասնյակ տարվա ընթացքում լավային  
ժածկոցը վերափոխվում է շինգիլների: Երբ ստեղծվում է  
շինգիլների շերտը, ապա սառնամանիքային հողմնահարումը  
անցնում է զարգացման երկրորդ ստադիան, որը կարգավոր-  
վում է տեղատարման և հողմնահարման միջև ստեղծվող  
դինամիկ հավասարակշռութեամբ: Այս ստադիայում հողմնա-  
հարման ինտենսիվությունը ֆունկցիոնալ կապակցութեան  
մեջ է գտնվում շինգիլների շարժումից: Որքան արագ տեղի  
ունենա շինգիլների հեռացումը, այնքան կարագանա սառ-  
նամանիքային հողմնահարումը (ջրի առկայութեան պայման-  
ներում):

Հողմնահարման երկրորդ ստադիայում ջերմաստիճա-  
նային օրական տատանումները մայր ապարների մեջ փաս-  
տորեն դադարում են, իրենց տեղը զիջելով սեղոնային տա-  
տանումներին, որոնց կրկնման հաճախականությունը անհա-  
մեմատ փոքր է օրական տատանումների հաճախականու-  
թեան նկատմամբ: Հրաբխային շրջաններում տարիներ շա-  
րունակ կատարած մեր դիտումների հիման վրա գալիս ենք  
այն եզրակացութեան, որ ամբողջ հրաբխային բարձրավան-  
դակում սառնամանիքային հողմնահարման առաջին ստա-  
դիան ավարտվել է շորրորդական վերջին սառցապատման  
դարաշրջանում: Այժմյան պրոցեսները վերաբերում են միկ-  
րոժելիվացիային և հիմնականում պատկանում են երկրորդ  
ստադիային, ուստի շինգիլների ժամանակակից առաջացու-  
մը խստորեն հավասարակշռված է նրանց շարժմամբ: Ինչ  
վերաբերում է քարաբեկորների հետագա մանրացմանը,  
ապա անհրաժեշտ է նշել, որ սառեցման ժամանակ առաջա-  
ցած ճեղքերը առաջին ստադիայում արդեն լայնացել են, իսկ  
նոր ճեղքեր ջերմային հողմնահարման հետեանքով քիչ են

առաջանում, այնպես որ ապարը հազարամյակներով կարող է մնալ գրեթե անփոփոխ: Այսպիսով, ջերմաստիճանային փոփոխությունները 0<sup>0</sup>-ի շուրջը դեռևս ինտենսիվ սառնամանիքային հողմնահարման պայման չեն: Այդպիսի հողմնահարում կառաջանա այն դեպքում, երբ ապարի ճեղքերը լրիվ հագեցած լինեն ջրով, որպիսին եղել է հողմնահարման առաջին ստադիայում. այժմ մազական անցքերը առանձին քարաբեկորների վրա գոյանում են ոչ շատ հաճախ: Հետևաբար, ժամանակակից սառնամանիքային հողմնահարումը և շինգիլների առաջացումը չպետք է դիտել որպես խիստ ինտենսիվ պրոցես: Ինտենսիվ սառնամանիքային հողմնահարում դիտվում է լանջերի այն հատվածներում, որտեղ շինգիլների գրավիտացիոն տեղաշարժը ինտենսիվ է, մայր ապարները իրենց մազական ճեղքերով մերկանում են: Արագածում, Գեղամա լեռներում մենք դիտել ենք բավական ողորկ մակերևույթով խոյան ճակատներ՝ չուրահատուկ խազերով: Այստեղ քարաբեկորների միջև ճեղքերի լայնությունը սովորաբար տատանվում է 5—20 սմ-ի միջև. որոշ դեպքերում նույնիսկ նկատվում են ավելի նեղ ճեղքեր: Երբեմն քարաբեկորները մասամբ վեր են բարձրացել, առանձնապես չխախտելով խոյան ճակատի ողորկ ընդհանուր պատկերը: Այսպիսի վիճակում նրանք գոյություն ունեն ավելի քան 12—15 հազ. տարի հտսառոցադաշտային դարաշրջանում: Հնարավոր է, որ խոյան ճակատների մի մասը ավելի ինտենսիվ բեկորահատվելով կորցրել է իրեն չուրահատուկ տեսքը և անճանաչելի է դարձել, սակայն եղած խոյան ճակատները հաստատում են մեր այն միտքը, որ կոստոնցադաշտային դարաշրջանում սառնամանիքային հողմնահարումը անցել է երկրորդ ստադիային, և երկրի մակերևույթը իրենից ներկայացնում է սառցապատման դարաշրջանից ժառանգված առած քարային ծով՝ բացառությամբ այն հատվածների, որտեղ գրավիտացիոն տեղաշարժը ուժեղ է և միշտ մայր ապարները մերկանում են, և հողմնահարման ու տեղատարման միջև ստեղծված հավասարակշռությունը խախտվում է: Այդպիսի օջախներ հանդիսանում են


սառցադաշտային կրկեսների ու կանխոնների ուղղաձիգ լանջերը:

Քարնանային ամիսներին հալոցքի ջրերը ներթափանցելով շինգիլների մեջ, այնտեղ հանդիպում են բացասական ջերմաստիճան կրող ապարի և նրա մակերևույթին սառչում: Սակայն ենթաշինգիլային սառցի ստեղծումը տեղի է ունենում աստիճանաբար, շերտ-շերտ: Ուստի նա այնպիսի բնդարձակման էֆեկտ չի ստեղծում, ինչպիսին կստեղծեր, եթե բոլոր ձեղքերը ջրով լցվելուց հետո տեղի ունենար սառեցման պրոցեսը: Այդ պատճառով ենթաշինգիլային սառցի նշանակությունը մեծ է միայն շինգիլների գրավիտացիոն տեղաշարժման մեջ:

Քարացրոնների յուրահատուկ տեսակ են ներկայացնում հրաբխային խարամբ, ռումբերը, լյապիլները, որոնք վերին շորրորդական հասակի են: Հզոր շինգիլներ են տվել լավային այն հոսքերը, որոնք սառել են նախկին սառցադաշտերի կամ ֆիոնային դաշտերի վրա: Հրաբխային շրջաններում մեր կողմից կատարած դիտումները հաստատում են Ա. Տ. Ասլանյանի կարծիքն այս ուղղությամբ: Հայկական լեռնաշխարհի շատ հատվածներում հանդես են գալիս ֆլյուվիոգլյացիալ նստվածքներ, որոնք ծածկված են լավաներով. այդ փաստը ասում է այն մասին, որ հրաբխային արտավիժումները կատարվել են սառցադաշտային պերիոդում և նրանից հետո: Ֆիոնային դաշտերի ու սառցադաշտերի արագ հալվելու հետևանքով պետք է որ առաջանային կատաստրոֆիկ սելավներ, իսկապես, որոշ հրաբխային զանգվածների ստորոտներում կուտակված է այնչափ շատ պրոլյուվիալ մատերիալ, որ հիմք է տալիս պնդելու, որ ոչ վաղ երկրաբանական անցյալում անխուսափելի են եղել ինտենսիվ սելավները: Գեղամա լեռներում Եռաբլուրի վրա նկատելի են տեղեր, որոնք լանջի բնդհանուր ֆոնի վրա ավելի ցածրադիր են և թողնում են այն տպավորությունը, թե փլված են: Փլվածքներից մեկի մոտ պահպանված է առաստաղի մի հատվածը կամարի ձևով: Նրա ամենաներքին շերտը վերածված է խիստ ծակոտ կեն խարամի: Ենթադրում ենք, որ այդպիսի թունելանման լավային ծածկոցը կարող էր ստեղծվել միայն սառցի վրա:

Լավան հանդիպելով սառցին, արագութեամբ սառել է, իսկ վերին շերտերը ավելի ուշ են սառել, այդ պատճառով էլ սառցին անմիջապես շփվող շերտը այնքան շատ ծակոտկեն է: Այս փաստը գալիս է հաստատելու այն միտքը, որ շինգիլների ստեղծման մեջ բավական խոշոր նշանակություն է ունեցել լավաների վերածնումը սառցադաշտերի ու ֆիոնային դաշտերի տեղում:

Չինգիլների ուղղաձիգ կտրվածքում (գծ. 20) կարելի է առանձնացնել շորս հորիզոն: Ներքևից հաշված առաջինը ներկայացնում է մայր ապարը, որը նոր է ազդվում հողմ-



Գծ. 20. Չինգիլների ուղղաձիգ կտրվածքը

նահարման ազդակներից, քարաբեկորները սկզբնական դիրքում են գտնվում: Երկրորդ հորիզոնը ներկայացված է նույն ապարներով, այն տարբերությամբ, որ բեկորները պոկվել են մայր ապարներից, սակայն սկզբնական դիրքից դուրս չեն եկել, տեղադրված են in situ: Երրորդ շերտում բեկորները և ապարների մասնիկները սկզբնական դիրքից խախտվել են, միջբեկորային տարածությունը հաճախ զբա-

դեցնում են մանրահատիկ մասնիկները, որոնք թափանցում են վերևից՝ ջրերի միջոցով: Չորրորդ հորիզոնը ամենավերինն է. երրորդից տարբերվում է նրանով, որ այստեղ նկատվում են օրական ջերմաստիճանային տատանումները, քարաբեկորները լուսավորվում են արեգակի ուղիղ ճառագայթների միջոցով և ենթարկվում լիթոֆիլ քարաքոսների ու այլ միկրոօրգանիզմների ինտենսիվ ներգործությանը: Վերոհիշյալ հորիզոնների հզորությունը կախված է կլիմայական պայմաններից, լանջի դիրքագրումից, թեքությունից, լիթոլոգիայից, ճեղքերում շրջանառություն կատարող ջրի քանակից, դելյուվիի շարժման արագությունից և այլ պայմաններից: Վերին երեք հորիզոնների զուամրային հզորությունը հասնում է 3—4 մետրի և ավելի, բացառությամբ այն շինգիլների, որոնք փլման հետևանքով են գոյացել: Վերջին տպում հզորությունը մեծ է: Այն շինգիլներում, որտեղ շարժումը ինտենսիվ է, շինգիլների վերին շերտերի հզորությունը փոքր է, չի անցնում 50—100 սմ-ից: Փաստորեն վերին երկու հորիզոնները ձուլվում են մի հորիզոնի մեջ: Անհրաժեշտ է հիշատակել, որ անկախ ապարների սկզբնական դիրքագրումից, սալիկներն ու շերտիկները չորրորդ հորիզոնում դասավորվում են լանջին զուգահեռ ուղղությամբ, այսինքն՝ պակաս լիճակում են, որը նպաստում է արագ դրավիտացիոն տեղաշարժմանը. օրինակ՝ սալիկավոր անջատումներով ապարները Արագածում առաջացնում են այնպիսի շինգիլներ, որոնք կղմինդրի տպավորություն են թողնում, և լանջի թեքությունը 17—20°-ից մեծ չէ:

Չինգիլների տարածման մեջ նկատելի է որոշակի օրինաչափություն: Նախալեռներում ու լանջերում, մինչև 1500—1700 մ բարձրությունները, շինգիլներն արտահայտված են մեծ մասամբ հարավահայաց լանջերում. քարաբեկորները մեծ չեն, որոշ տեղերում հանդես են գալիս խճի ձևով ու հասնում բռունցքի մեծության քարակտորների, շատ է մանրահորի պարունակությունը: Հրաբխային զանգվածների նախալեռներում մեծ զարգացում ունի կարբոնատային կեղևը, որտեղ քարաբեկորները ցեմենտացած են:

Տափաստանային ու մերձալպյան գոտիներում մինչև

2800—3200 մ շինգիլներն արտահայտված են տիպիկ ձևերով՝ որպես քարային ծովեր: Քարաբեկորների մեծութունը բազմաթիվ մեծանում է, խճի և մանրահողի քանակն աստիճանաբար պակասում է, և տիրապետում են բազմակյուն բեկորները՝ 0,3—1 մ մեծությամբ: Այս գոտում շինգիլներն ավելի մեծ զարգացում ունեն հարավահայաց լանջերում: Չինգիլներում սեղոնային սառցույթի վրա մանրահատիկ նյութերի առկայության պայմաններում (որոնց մեջ զգալի տեղ են գրավում կոլոիդալ մասնիկները) զարգացած են սոլիֆլյուկցիոն երևույթները: Այնտեղ, որտեղ մանրահողը շատ է, առաջանում են այսպես կոչված քարային օղեր, որոնք առաջին անգամ Արագածի վրա նկարագրվել են Բ. Ա. Կլոպոտովսկու կողմից (1948):

Քարձր լեռնային-ալպյան գոտում 2800—3200 մետրից բարձր քարաբեկորները մեծանում են, խիճն ու մանրահողը այնքան են պակասում, որ նույնիսկ լրիվ վերանում են: Այսպես, օրինակ՝ Արագածի արևմտյան գագաթը կազմված է ամուր դացիտներից, առանձին քարաբեկորների մեծությունը հասնում է 2—3 մ-ի, որոնց մեջ 3500 մ-ից բարձր խիճն ու մանրահողը բացակայում են: Այսպիսի շինգիլներում սառը օդը ազատ շրջանառություն է կատարում և զարնանային ամիսներին պայմաններ են ստեղծվում ենթաշինգիլային սառցի ստեղծման համար:

Հայկական լեռնաշխարհում տարածված շինգիլները հանդես են գալիս շատ տարբեր ձևերով: Բ. Ա. Լիշկովը Արագածի շինգիլները բաժանում է երկու տիպի՝ պլատոնների և լանջերի շինգիլների (քարացրոններ և թափվածքներ): Հաշվի առնելով շինգիլների ծագումն ու շարժման բնույթը, մենք Հայկական հրաբխային բարձրավանդակի շինգիլները բաժանում ենք երեք տիպի՝ էլյուվիալ, դելյուվիալ և սառցադաշտային շինգիլների:

էլյուվիալ ենք համարում այն շինգիլները, որոնք գոյացել են տեղում, առանց քարաբեկորների նշանակալի տեղաշարժի. շինգիլը կազմող քարաբեկորների և մայր ապարների միջև կապը լրիվ կտրված չէ: Այսպիսի շինգիլները յուրահատուկ են հարթ տեղերին, որտեղ գրավիտացիոն տեղա-

շարժ չկա: Այսպիսի շինգիլներում մակերևույթի ձևերը ժառանգված են սառցադաշտային պերիոդից, առանց նշանակալի փոփոխությունների: Էլյուվիալ շինգիլներում սրածայր քարաբեկորներ գրեթե չկան, նրանց մակերևույթը կարծես մասամբ հղկված է: Հազարամյակներ շարունակ նրանք կրում են դեստրուկցիոն ուժերի ազդեցությունը և որքան էլ ապարը ամուր ու հոծ լինի, այնուամենայնիվ, մաշվում է՝ արեգակի ճառագայթների, անձրևի ու միկրոօրգանիզմների միջոցով: Հողմնահարման հիմնական ձևը էլյուվիալ շինգիլներում դեակվամացիան է: Որոշ տեղերում այդպիսի շինգիլները թողնում են հղկված մորենների կեղծ տեսք. բարենպաստ պայմաններում էլյուվիալ շինգիլները բուսապատվում են: Ըստ էություն բարձր լեռնային մերձալպյան ու ալպյան մարգագետինները իրենց սուբստրատում ունեն էլյուվիալ շինգիլներ:

Դելյուվիալ են կոչվում այն շինգիլները, որոնք տեղաշարժված են իրենց առաջացման վայրից՝ զանազան ուժերի միջոցով. նրանց յուրահատուկ է շարժումը: Սակայն զարգացման ընթացքում նրանք հաճախ չեն կարողանում հալթահարել շփման դիմադրությունը և դադարում են շարժվելուց՝ վերածվելով անշարժ-կոլյուվիալ շինգիլների: Վերջիններս արտաքին տեսքով նման են էլյուվիալ շինգիլներին, այսինքն՝ երկար ժամանակ նույն դիրքում մնալով, քարաբեկորների սրածայր մասերը կորանում են:

Դելյուվիալ շինգիլները, կախված շարժման բնույթից ու գեոմորֆոլոգիական պայմաններից, հանդես են գալիս տարբեր մորֆոլոգիական ձևերով՝ որպես համատարած ծածկոց, քարային գլետչերների ձևով, որպես ստորոտների թափվածքներ, քարային ժապավեններ, փեշերի (շլեյֆ) ձևով և այլն: Բոլոր ձևերի մեջ ամենամեծ տարածում ունեն ծածկոցային շինգիլները, որ ծածկում են ամբողջ հրաբխային զանգվածներ:

Սառցադաշտային շինգիլները առաջացել են սառցադաշտերի էկզարացիոն ու տրանսպորտային աշխատանքի շնորհիվ: Այսպիսի շինգիլներ կան Աբուլ-Սամսարի, Արսիանի, Հայկական Պարի, Խոնավ լեռների, Բյուրականի, Արա-

գածի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի լեռնաշղթաներում ու բարձրավանդակներում: Նրանք հանդես են գալիս որպես վերջնամորենային կուտակումներ, ափի մորեններ և այլն: Այլ տիպի շինգիլներից տարբերվում են նրանով, որ զգալի չափով հղկված են, իրենց վրա կրում են սառցադաշտային խազվածքներ, խառնված են մանրահատիկ կավաավազային նյութի հետ:

Սառցադաշտերի նշանակությունը քարացրոնների առաջացման մեջ մինչև վերջին ժամանակներս գերազնահատվում էր: Կ. Կ. Մարկովի (1946), Գ. Ա. Ավսյուկի (1950), Մ. Ի. Իվերոնովայի (1950), Մ. Ա. Գլազովսկայայի (1952) և ուրիշների ուսումնասիրությունները Միջին Ասիայի լեռներում ցույց են տալիս, որ քարացրոններում հատակային մորենների նշանակությունը չնչին է, որ քարային ծովերը առաջանում են մեխանիկական հողմնահարման հետևանքով: Վերահիշյալ կարծիքը բնդունելի է նաև ողջ Հայկական հրաբխային բարձրավանդակի շինգիլների ստեղծման վերաբերյալ:

Ինչպես նշել ենք, շինգիլների մի մասը դանդաղորեն շարժվում է և այդ շարժումը բնորոշ է դելյուվիալ շինգիլներին: Ծանրության ուժը և այն բոլոր ֆիզիկա-աշխարհագրական պրոցեսները, որոնք առաջացնում են քարային դանդաժների ծավալի փոփոխություն և շփման դիմադրություն թուլացում, նպաստում են շինգիլների շարժմանը: Լեռնալանջերի այն հատվածներում, որտեղ շարժումն ավելի ինտենսիվ է, առաջանում են գոգավոր փոսեր, որոնք կոչվում են դելլի: Սրանք յուրահատուկ են նախկին սառցադաշտային կրկեսներին, ձգվում են քարային ժապավենների ձևով՝ վերևից դեպի ներքև:

Գելյուվիալ շինգիլների շարժման արագությունը տատանվում է լայն սահմաններում: Արագությունը կախված է լանջերի թեքությունից, շարժվող մարմնի ձևից, ջրի և սառցի առկայությունից, մանրահողի քանակից, ջերմաստիճանային փոփոխություններից և այլն: Փոքրաթեք լանջերում շինգիլների շարժումն այնքան փոքր է, որ շարժման արագությունը հնարավոր չէ որսալ: Շարժման փաստը հաստատվում է նրանով, որ շինգիլների տակ տեղադրված ա-

պարնեբրի կազմը շատ տեղերում չի համապատասխանում չինգիլներին լիթուոգրական կազմին. նշանակում է՝ նրանք բերված են ավելի բարձր հիպսոմետրիկ բարձրությունից: Այսպես, օրինակ՝ Արագածի հարավային լանջում Քյուրական գյուղից վերև հողմնահարման կեղևի ուղղաձիգ կտրվածքում չինգիլների վերին հորիզոնը ներկայացված է բեկորավոր դացիտներով, իսկ ներքին հորիզոնը կազմված է սալիկավոր անջատումներ ունեցող անգեզիտներից և նույնատիպ մայր ապարներից: Տեղանքի բացարձակ բարձրությունն ու մորֆոլոգիական պայմանները բացառում են չինգիլների սառցադաշտային, սելավային կամ այլ ծագումը: Մնում է ենթադրել, որ նրանք գրավիտացիոն ուժի ազդեցության տակ 5—8<sup>0</sup> թեքության լանջով դանդաղորեն շարժվում են ցած:

Արագ շարժման դեպքում լեռնալանջերում չինգիլներին շարժման արագությունը հասնում է տարեկան մի քանի տասնյակ սանտիմետրի: Սակայն Հայկական լեռնաշխարհում քարային գլետչերներն այնքան բնորոշ չեն, որքան, ասենք, Միջին Ասիայի լեռներում, որո՞ք նկարագրված են Մ. Ն. Իվերտնովայի կողմից (1950): Հայկական հրաբխային բարձրավանդակում քարային գլետչերները շատ սահմանափակ են և փոքր չափերի, ուստի շարժման մեծ արագություն ունեցող չինգիլները քիչ են:

Սառցադաշտային կրկեսներում ու տրոգներում, կանխոնների քարափներում սառնամանիքային հողմնահարման հետևանքով հաճախ տեղի է ունենում լանջերի փլուզում: Այս դեպքում զանգվածների տեղաշարժը կատարվում է շատ արագ՝ վայրկյանական: Գրավիտացիոն տեղաշարժի ժամանակ տեղի է ունենում զանգվածների տեսակավորում՝ մանրահատիկ մատերիալը մնում է տեղում, իսկ խոշորաբեկորավորները հեռանում են, առաջացնելով թափվածքների փիշեր шлейфы осепей: Թափվածքների բնական թեքության անկյունը կախված է մասնիկների մեծությունից ու ձևից: Խոշորաբեկոր թափվածքներում դիտվում է մինչև 50<sup>0</sup> թեքություն. ամենափոքր թեքությունը յուրահատուկ է խարամային նյութերին՝ ու այն չինգիլներին, որոնք կազմված են սալիկներից, ոչ ավելի, քան 20<sup>0</sup>-ով: Մերձալպյան ու ալպ-

յան գոտիներում, որտեղ շատ է մանրահողը, չինգիլների շարժման մեջ մեծ նշանակություն են ստանում սոլիֆլուկցիոն պրոցեսները, որոնք զարգանում են սեզոնային սառցույթի վրա:

## ՍԱՌՅԱԳՍՇՏԱՅԻՆ ՀՈՂՄՆԱՀԱՐՄԱՆ ՁԵՎԵՐ

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակում ժամանակակից տիպիկ սառցապատում չկա: Դիտվում են միայն ոչ մեծ ֆիոնային դաշտեր Արագածի վրա: Ջյան ավելի մանր բծեր կան Խոնավ, Գեղամա, Վարդենիսի լեռնաշղթաներում և Ղարաբաղի բարձրավանդակի վրա:

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի գեոմորֆոլոգիական ուսումնասիրություններում զգալի տեղ է հատկացված սառցապատման հարցերին, որոնց ուսումնասիրությունն ունի մոտ մեկ դարի պատմություն: Հնագույն սառցապատման մասին հետազոտություններ են կատարել՝ Հ. Աբխիբ, Ա. Վ. Պաստուխովը, Ա. Լ. Ռեյնգարդը, Կ. Ն. Պաֆֆենհոլցը, Լ. Ա. Վարդանյանցը, Բ. Լ. Լիշկովը, Լ. Ի. Մարուաշվիլին, Ն. Վ. Դոմիտորաշկոն, Ա. Հ. Գաբրիելյանը, Ա. Տ. Ասլանյանը, Ս. Պ. Բալյանը, Ե. Ա. Նեֆեդևան, Հ. Կ. Գաբրիելյանը և ուրիշները: Չորրորդական սառցապատման շափերի ու մասշտաբների հարցում միասնություն չկա: Նույնիսկ տեսակետները հակասական են:

Գրական աղբյուրների, ինչպես նաև անձնական գիտումների հիման վրա գալիս ենք այն եզրակացություն, որ Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակը ենթարկվել է առնվազն երկու սառցապատման: Արագածի արևելյան և հյուսիս-արևելյան լանջին պարզորոշ նշվում է ֆլուվիոգլյացիալ նստվածքների երկու հորիզոն, որոնք միմյանցից անջատված են միջսառցադաշտային կոնտինենտալ նստվածքների շերտով ու լավաներով, որոնցից ստորինը ժամանակագրական առումով ավելի հին է և ամենայն հավանականությամբ ունի ռիասի, իսկ վերինը՝ ավելի երիտասարդ վյուրմի հասակ: Այս փաստը նշվել է Ս. Ի. Լուկաշևիչի, Վ. Ա. Մորպա-

խովի, Ա. Լ. Ռեյնգարդի կողմից: Ա. Լ. Ռեյնգարդը Արագածի հյուսիսային ստորոտի ջրհորներում Ֆլյուվիոլյացիալ նստվածքների երկու հորիզոն է հայտնաբերել: Վարդենիսի լեռնաշղթայում մեր դիտողութուններով եղել է սառցապատման երկու դարաշրջան, որոնցից առաջինը ավելի հզոր էր և ձյան դժի դեպրեսիան 300—400 մետրով ավելին, քան վերջին սառցապատման դեպրեսիան: Կարանլուզ գետի ձախ ափին, խճուղային ճանապարհի մոտ հանդես է գալիս հարուստ մորենային մատերիալ. մորենները կազմված են գրանոզիորիտներից, որոնց արմատական ելքերը տեղադրված են գետի ափունքում: Վալունները ունեն մինչև 2 մետր տրամագիծ և մասամբ հղկված են: Նրանց մակերևույթը ենթարկվում է դեակվամացիայի, սակայն այն վալունները, որոնք նոր են մերկացել, իրենց վրա կրում են սառցադաշտային խաղվածքներ: Բացի վալուններից, նկատվում են հրային ծագման տարբեր մեծության լիթոկլաստիկ նյութեր, խիճ, կավաավազ և այլն, որոնք խառը վիճակում կուտակված են և կասկած չեն հարուցում սառցադաշտային ծագման վերաբերյալ: Գարավանդի հիմքը կազմում են բարակ շերտավոր առանձնութուններով հրային ապարները և ոչ մի կապ չունեն մորենային ծածկոցի հետ: Մորենային մատերիալը հանդես է գալիս 2100 մ բացարձակ բարձրության վրա, մինչդեռ վերջին սառցապատման վերջնամորենները փոքր թմբերի ձևով հանդես են գալիս գետի հովտում, ավելի քան 2200 մ բարձրության վրա: Այսպիսով, միայն ավելի հզոր սառցապատման շնորհիվ կարող էին Կարանլուզի ափունքի գրանոզիորիտները հասնել Վարդենիսի լեռնաշղթայի ստորոտները և ծածկել գետի դարավանդը: Կարանլուզ գետը այժմ հոսում է մինչև 20—30 մ խորության հովտով, որ ստեղծվել է մորենային մատերիալի կուտակումից հետո, իսկ վերջին սառցապատման վերջնամորենները կուտակվել են արդեն մշակված հովտի մեջ, ավելի բարձր հիպսոմետրիկ բարձրություններում:

Սառցադաշտային ծագման հղկված մորեններ նկատվում են նաև Վարդենիսի լեռների այլ հատվածներում, մասնավորապես Չինգիլ, Գյուլգարա գետերի ավազանում, Հայոց Չորի

լեռնանցքի շրջանում, Ալազելլարի գոգավորութեան մեջ և այլն: Վարդենիս գետի ավազանում հղկված վալուններ հանդես են գալիս ջրբաժան պլատոյի 2340 մ բարձրութեան վրա, նույն լայնութեան տակ տրոգային խորը հովտում նշվում է վերջին սառցապատման մաքսիմում ստադիայի վերջնամորենային թումբը: Անտարակույս է, որ ջրբաժան պլատոյի վրա հանդես եկող վալունները բնականորէ ոչինչ շունեն հովտում տեղադրված վերջնամորենների հետ և հանդիսանում են ավելի վաղ սառցապատման արդյունք: Նույն պատկերը տեսնում ենք Խոնավ լեռներում ու Ախալքալաքի սարահարթում: Խոնավ լեռների արևմտյան ստորոտում վերջնամորենային թումբը, որի վրա գտնվում է Դարագյուղը, ավելի բարձր հիպսոմետրիկ բարձրութեան վրա է գտնվում, քան Բավրա գյուղի շրջանում հանդես եկող հարուստ և հզոր մորենային ու Ֆլյուվիոգլաացիալ մատերիալը: Վերջինս ունի տեսանելի՝ 20—30 մ հզորութուն և մասնատված է ձորակներով ու գետահովիտներով. վերին դարավանդի շարունակութունը արտահայտված է լավաներով, որոնք Դարագյուղից ցած տրոգի մի թևն են ստեղծում և ունեն գլաացիալ մորֆոլոգիա, մինչդեռ վերջին սառցապատման վերջնամորենային թումբը տեղադրված է արդեն իսկ մշակված լայն հովտի հատակին: Տարակույս չի կարող լինել, որ այդ լայն հովիտը ավելի հին սառցապատման տրոգ է ներկայացնում, որից դուրս եկած մորենները կազմում են Բավրայի Ֆլյուվիոգլաացիալ դարավանդը: Այս դարավանդը ետսառցադաշտային դարաշրջանում ենթարկվել է դիֆերենցիալ շարժումների ու էրոզիոն մասնատման: Այսպիսով, ջրբաժաններում հանդես եկող կոպիճը կարելի է վերագրել ավելի վաղ սառցապատման: Մեր կարծիքով, նախավերջին սառցապատմւմը եղել է սկանդինավյան տիպի: Մորենային կուտակումները նշված բարձրութունների վրա՝ Սևանի ավազանում, Վերին-Ախուրյանի գոգավորութունում և այլուր, այդ սառցապատման վերջնամորեններն են: Ռելիեֆի ձևերի թարմութեան տեսակետից մեզ համար ավելի կարևոր նշանակութուն ունեն վերջին սառցապատման հետքերը:

Վերջին սառցապատման ժամանակ ձյան գծի զեպրե-

սիան հետազոտողների մեծ մասի կողմից գնահատվում է շուրջ 1000 մետր, սակայն այստեղ մի թյուրիմացություն կա: Պարզվում է, որ վերջին սառցապատման ժամանակ ձյան գծի ունեցած բարձրությունն այժմ ավելի ճիշտ են որոշում, քան ժամանակակից ձյան գծի բարձրությունը, որի հետևանքով էլ տարբեր հեղինակների մոտ դեպրեսիան տարբեր արժեք է ստանում: Ժամանակակից ձյան գծի բարձրության տվյալները տատանվում են մինչև 500 մետր (4300—3800 մ): Վերջին ժամանակներս գիողեզիական եղանակով կատարած դիտումների հիման վրա մենք գալիս ենք այն եզրակացության, որ կլիմայական ձյան գծի բարձրությունը Արարատի հյուսիսային լանջին պետք է ընդունել 4250 մ: Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի հյուսիսային, ավելի խոնավ մասերում ձյան գծի բարձրությունը ներկայումս պետք է ընդունել 4000 մ<sup>1</sup>, իսկ հարավային, ավելի չոր շրջանների համար՝ 4200—4400 մ: Նույն թիվն ստացվում է, երբ ուղղաձիգ գոտիականության մեջ բարձրության կազմում ենք անձյուն օրերի քանակի գրաֆիկը (գծ. 18): Գրաֆիկի կորը 4000 մ բարձրության վրա հասնում է ձյան գծին: Այս տրվյալները համընկնում են Բոբեկի տվյալներին (1937), որոնց համաձայն ձյան գծի դեպրեսիան վերջին սառցապատման ժամանակ եղել է 1000—1200 մ:

Հայկական լեռնաշխարհի շորորդական վերջին սառցապատումը եղել է կարա-հովտային բնույթի. խոշոր սառցադաշտերը ունեցել են մինչև 10—12 կմ երկարություն, նրանց լեվզակները հասել են մինչև 2200—2300 մ բարձրության: Խորը կրկեսներում սառցադաշտի հզորություն եղել է մինչև 200—300 մ և ավելի: Սառցապատման ընդհանուր տարածությունը Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի սահմաններում կազմել է ոչ պակաս՝ 300—350 կմ<sup>2</sup>. սառցապատման օջախները մի քանիսն են եղել՝ Արագածի զանգվածը, Խոնավ, Ղուկասյանի, Գեղամա, Վարդենիսի լեռնաշղթաները, Սյունիքի (Ղարաբաղի) բարձրավանդակը:

Սառցադաշտային հոգմահարման տիպիկ ձևերից են

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ-ում և ոչ մի գագաթ ձյան գծին չի հասնում, նշված բարձրությունը տեսական նշանակություն ունի:

սառցադաշտային կրկեսները, արոզները, կարիողները, որոշ դեպքերում նաև խոշան ձակատները: Կան նաև սառցադաշտային կուտակման ձևեր՝ վերջնամորեններ, ֆլյուվիոգլյացիալ նստվածքներ:

Սառցադաշտերի լավ արտահայտված կրկեսներ կան վերոհիշյալ լեռնաշղթաներում ու զանգվածներում: Կրկեսների տրամագիծը հասնում է 1—4 կմ-ի, խորությունը՝ 200—600 մ-ի: Երբեմն նրանք ունեն շատ տիպիկ պնակի ձև, որոնցից սկիզբ են առնում լայն տրոզները: Կրկեսների հետին պատերը խիստ զառիվեր են, հաճախ նույնիսկ՝ ուղղաձիգ, տեղ-տեղ ստրուկտուրային դարավանդներով: Հատակը թմբային հարթություն է ներկայացնում, երբեմն կենտրոնում մանր լճեր կան, տեղ-տեղ բուսածածկ է, հզրերում քարային թափվածքներ են: Լեռնաշղթաների հակադիր լանջերին համապատասխան բարձրությունների վրա զարգացած կրկեսներում սառցադաշտային պերիոդում ինտենսիվ պայքար է տեղի ունեցել ջրբաժանի համար և վերջինս շատ տեղերում արտահայտված է սրածայր, ատամնավոր տեսքով: Կրկեսների եզրերում 3000 մետրից բարձր արտահայտված են ավելի մանր կարեր, որոնց անվանում են կարոիդներ: Նրանք շատ մեծ չեն և կազմում են վերին յարուսը, ունեն կիսալուսնաձև տեսք, հետին պատը խիստ զառիվեր է, հաճախ ծածկված հողմնահարման արգասիքներով, իսկ կենտրոնում լինում են մանր լճեր. կարոիդները ավելի լայն ելք ունեն. կան հրաբխային խառնարաններ, որոնք սառցապատման պերիոդում ծածկված են եղել սացե գլխարկով և ելքը եղել է մի կողմի վրա, որտեղից սառույցը բեռնաթափվել է:

Սառցադաշտային հողմնահարման մյուս սկուլպտուր ձևվերից են տրոզները: Սրանք ամենայն հավանականությամբ նախկինում ոչ խորը գետահովիտներ են եղել, որոնք հետագայում մշակվել են սառցադաշտի էկզարացիոն աշխատանքի շնորհիվ: Տրոզները սկիզբ են առնում կրկեսներից և ունեն 3—10 կմ երկարություն. սրանք զարգացած են այն վայրերում, որտեղ կան կրկեսներ: Տիպիկ տրոզներում հովտի լանջերը հարթ են, շմասնատված և քրպես միկրոձևեր հանդես են գալիս զելլիները, որտեղ շինգիլների շարժումն ավե-

յի ինտենսիվ է: Տրոզները տաշտակաձև են, լանջերի թեքու-  
թյունները սովորաբար հասնում են 25—40—45<sup>0</sup>-ի: Տրոզներն  
ավելի շատ բուսածածկ են, քան կրկեսները, հատակը հարթ  
է, միայն տեղ-տեղ մորենային մանր թմբեր կան, որոնց ա-  
րանքներում է՛լ մանր լճեր: Տրոզների հատակը ամբողջովին  
ծածկված է մորենային մատերիալով, շատ են կավերն ու  
կավաավազները, որոնք առանց տեսակավորման խառնված  
են վալունների հետ: Այս նստվածքները որոշ տրոզներում  
հասնում են մի քանի տասնյակ մետր հաստության: Տրոզների  
լանջերին ամենուրեք կարելի է հանդիպել մորե-  
նային կուտակումների: Քարաբեկորների հղկված մակերե-  
վույթին հանդես եկող խազվածքները ոչ մի կասկած չեն  
թողնում նրանց սառցադաշտային ծագման վերաբերյալ:  
Շատ սառցադաշտային տրոզներում հանդիպում են ռիզել-  
ներ, երբեմն նույնիսկ ռիզելների կասկադներ, որոնք այժմ  
արտահայտված են ջրվեժներով, ինչպես, օրինակ՝ Գեղարո-  
տի, Մանթաշի հովիտներում (Արագած):

Սառցադաշտային էկզարացիայի բնորոշ ձևերից են խո-  
յան ճակատները: Մրանք ամենուրեք չէ, որ տարածված են:  
Խոյան ճակատներ Բ. Լ. Լիշկովը (1931) նկարագրում է Արա-  
գածում: Մենք խոյան ճակատներ դիտել ենք Ամբերտի ա-  
կունքներում ու Գեղամա լեռնաշղթայի մերձկատարային  
պլատոյի վրա՝ Աժդահակից արևելք: Խոյան ճակատները մեծ  
չեն, ունեն մինչև 2—3 տասնյակ մետր երկարություն, մա-  
կերևույթը ժամանակին սահուն, կոր տեսք է ունեցել, սա-  
կայն այժմ սառնամանիքային հողմնահարման հետևանքով  
մասամբ կորցրել է կոր տեսքը, առանձին քարաբեկորներ  
բարձրացել են, ճեղքերը լայնացել են մինչև 15—20 սմ և  
քարաբեկորից քարաբեկոր անցնող բնորոշ խազվածքներով  
կարելի է վերականգնել նրա սկզբնական տեսքը:

Որոշ խոյան ճակատներ այնքան են ձևափոխվել ետ-  
սառցադաշտային սառնամանիքային հողմնահարման հետե-  
վանքով, որ սկզբնական սահուն տեսքը բոլորովին կորցրել  
են և միայն խազվածքներով կարելի է կռահել նրանց ծագ-  
ման մասին: Սառցադաշտային ռելիեֆի զարգացման շրջ-

ջաններում ամենուրեք հանդիպում են մորեններ: Հատակա-  
յինները համեմատաբար հղկված են:

## ԲԻՈՔԻՄԻԱԿԱՆ ՀՈՂՄՆԱՀԱՐՈՒՄ

Մինչև XX դարի առաջին տասնամյակները հողմնահար-  
ման պրոցեսներում կենդանի օրգանիզմների, հատկապես  
միկրոօրգանիզմների մասնակցությունը թերազնահատվել է,  
սակայն վերջին ժամանակներս միկրոբիոլոգիայի ինտենսիվ  
զարգացման շնորհիվ հսկայական փաստացի նյութ է կու-  
տակվել, որը հնարավորություն է ընդձեռում ցույց տալու  
այն խոշոր դերը, որ ունեն մանր օրգանիզմները մեր մոլո-  
րակի երկրաբանական կյանքում:

Ժայռային ապարների քայքայման ու հողմնահարման  
սկզբնական ստադիայի ուսումնասիրման գործում խոշոր ա-  
վանդ են մտցրել ուս մեծ գիտնականները՝ բիոքիմիկոսնե-  
րը, գեոքիմիկոսները, հողագետները: Վ. Բ. Վերնադսկին, Վ.  
Ռ. Վիլյամսը, Բ. Բ. Պոլինովը և շատ ուրիշներ զարգացրին  
մի տեսություն, որի մեջ հողմնահարման պրոցեսների շար-  
քում մեծ տեղ է տրվում կենդանի օրգանիզմների գործու-  
նեությունը: Բ. Բ. Պոլինովը գրում էր. «Մենք կարող ենք  
ամեն պարագայում պնդել, որ ապարի վերածումը փխրուկի  
ստեբիլ պրոցես է, և փխրուկի առաջացումը տեղի է ունե-  
նում օրգանիզմների ակտիվ մասնակցությամբ»<sup>1</sup>:

Ժամանակակից պատկերացմամբ՝ երկրի մակերևույթի  
վրա չկա մի այնպիսի տեղ, որտեղ հողմնահարման պրոցես-  
ներն ընթանան առանց միկրոօրգանիզմների մասնակցու-  
թյան: Դեռևս անցյալ դարի վերջին (1887) Մ. Տրեյբը նշում  
էր, որ Կրակատաուի ժայթքումից շորս տարի հետո նա ա-  
պարների վրա հայտնաբերել է կապտա-կանաչ ջրիմուռների  
6 տեսակ:

Բազմաթիվ գիտնականների ուսումնասիրություններով  
(Բ. Բ. Պոլինով, Գ. Մ. Նովոգրուդսկի, Վ. Գ. Ալեքսանդրով,

<sup>1</sup> В. Б. Полюнов, Геоморфологические условия распре-  
деления продуктов выветривания, Тр. I Всесоюзн. Геогр. съезда,  
Л., 1934, стр. 331.

Ն. Ա. Կրասիլնիկով, Ե. Ա. Յարիլովա, Ե. Ն. Միշուտին, Վ. Ա. Միրզոևա, Բ. Վ. Գրոմով, Ն. Ն. Չենս-Լիտովսկի, Ա. Գ. Վոլոզդին, Բ. Լ. Իսաչենկո, Վ. Օ. Տաուսոն, Ս. Վ. Օդինցովա, Մ. Ա. Գլազովսկայա և ուրիշներ) պարզվել է, որ մերկ ժայռերի մակերևույթը նույնիսկ բարձր լեռնային նիվացիոն գոտում բնակեցված է ավտոտրոֆ, կապտա-կանաչ ջրիմուռներով, նիտրոֆիկացնող բակտերիաներով, որոնց հաջորդում են հետերոտրոֆ սնկերը, ճառագայթասնկերը: Սրանք մշակում են ապարի մակերևույթը, հող են նախապատրաստում ավելի բարձրակարգ օրգանիզմների՝ քարաքոսների, մամուռների, ծաղկավոր բույսերի աճման համար:

Հրաբխային շրջանների մերկ ժայռերի միկրոօրգանիզմների առաջին պիոներները հանդիսանում են կապտա-կանաչ ջրիմուռները: Նրանց գործունեության շնորհիվ ապարների թարմ կոտրվածքների մակերևույթը կարճ ժամանակամիջոցում «մշակվում է» և գունափոխվում: Սրանք հող են նախապատրաստում քարաքոսների զարգացման համար: Բակտերիաները քարաժայռերի վրա ամենից ավելի զարգացած են Արարատյան գաշտի եզրային մասերում, Արագածի նախալեռներում ու այլ հրաբխային զանգվածների նախալեռներում: Ամենից շատ միկրոօրգանիզմները հանդես են գալիս ապարների մակերևույթին. ըստ խորության՝ նրանք պակասում են: Նշանակություն ունի նաև ապարների քիմիական կազմը, ծակոտկենությունը, հոծությունը: Ն. Ա. Կրասիլնիկովը (1949) բակտերիաների քանակի հետևյալ տվյալներն է բերում այս կապակցությամբ:

Աղյուսակ 10

Պորութ. մմ	Քարաքոսներով ծածկված			Քարաքոսներով չծածկված	
	բազալտ	տուֆ	զրանիտ	բազալտ	տուֆ
0-2	100000	10000	150000	5000	1700
3-5	45000	5000	65000	100	0
7-10	5000	100	10000	0	0
20-30	0	0	0	0	0

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակում տարբեր ապարների վրա բակտերիաները տարբեր ինտենսիվությամբ են աճում: Բակտերիաներն ու այլ միկրոօրգանիզմները գերադասում են բազալտները: Այսպես, օրինակ՝ Ն. Ա. Կրասիլնիկովի դիտողությունների համաձայն՝ բազալտների վրա միկրոօրգանիզմների քանակը շուրջ 10 անգամով ավելի է, քան տուֆերի վրա. ընդ որում ամենից մեծ քանակական հարաբերություն ունեն բակտերիաները, այնուհետև՝ ճառագայթասնկերը, սնկերը:

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի ապարների բիոքիմիական հողմնահարման մեջ որպես կարևոր գործոն իրենց ուրույն տեղն ունեն քարաքոսները: Սրանք կապատկանում են միկրոօրգանիզմների շարքին, միջին ու բարձր լեռներում խոնավության առկայության պայմաններում մեծ զարգացման են հասնում: Նրանք հանդիպում են բոլոր դիրքադրման լանջերում. մերձալպյան գոտում նրանք սովորաբար համատարած ծածկոց են գոյացնում ապարի մակերևույթին: Նույն քարաբեկորի վրա երբեմն հնարավոր է զանազանել տարբեր երանգների մեկ տասնյակից ավելի քարաքոսների տեսակներ, որոնք քարաբեկորին տալիս են ասեղնագործ բարձի տեսք: Այնտեղ, որտեղ պայմանները բարենպաստ չեն քարաքոսների զարգացման համար, վերջիններս հանդես են գալիս առանձին բծերով՝ օջախներով: Այդպես է պատկերը 3400—3500 մետրից բարձր լեռնային շրջաններում: Նկատված է նաև, որ քարաքոսներ չեն աճում չափից ավելի խոնավության ու ջրի առկայության պայմաններում, օրինակ՝ այն տեղերում, որտեղ ապարի մակերևույթը պարբերաբար ծածկվում է ջրով: Հայկական ՍՍՌ-ում հանդիպող քարաքոսների մեջ ամենից տարածվածը կեղևային քարաքոսներն են (накипные), որոնք սերտաճում են սուբստրատի հետ և դժվարությամբ են պոկվում նրանից:

Բ. Բ. Պոլինովը հանգում է այն եզրակացության, որ լիթոֆիլ բուսականությանը և մասնավորապես լիթոֆիլ քարաքոսային բուսականությանը պատկանում է խոշոր երկրաբանական դեր: Նա հանդիսանում է դենուդացիայի ուղղակի

և անփոփոխ գործոն: Հումուսային նյութերի գոյացումը քարաքոսային մարմիններից կազմում է երկրի վրա կյանքի զարգացման կարևոր պրոցեսներից մեկը:

Քարաքոսներն իրենց սուբստրատի վրա ներգործում են թե՛ մեխանիկական ճանապարհով և թե՛ բիոքիմիական: Ապարի մակերևույթը, որ ծածկված է քարաքոսներով, նշանակալից չափով տարբերվում է մնացած զանգվածներից: Մեր դիտումները հրաբխային զանգվածների վրա ցույց են տալիս, որ քարաքոսների տակ ապարը 3—7 մմ շերտով ունի գորշ գույն: Եթե զանգվածային բազալտների մոտ սեղմման ժամանակավոր դիմադրությունը հասնում է սովորաբար մինչև 2000 կգ/սմ<sup>2</sup>, ապա քարաքոսների միջոցով հողմնահարված շերտում այդ դիմադրությունը մի քանի անգամ փոքրանում է, հեշտությամբ փշրվում է. այն ավելի փխրուն է, ունի մեծ մազականություն և միկրոժելիվացիայի համար ավելի նպաստավոր պայմաններ:

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի քարաքոսները շատ դանդաղ են աճում: Երբեմն քարաբեկորի բուսակալման պրոցեսը տևում է հարյուրավոր տարիներ. կեղևվային քարաքոսների ստադիան ապարների հողմնահարման մեջ կարող է տևել հարյուրավոր ու հազարավոր տարիներ: Վերջին սառցապատումից անցել է 12—15 հազար տարի, սակայն սառցադաշտային կրկեսների լանջերին դեռևս բուսապատման քարաքոսային ստադիան է հանդես գալիս:

Քարաքոսները ամենից մեծ տարածում ունեն ալպյան գոտում, որտեղ ապարների մակերևույթը համատարած ծածկված է նրանցով: Նրանք չեն սիրում հողմնահարված մակերևույթ, գերազասում են թարմ ապարներ: Ամենից առավել քարաքոսները աճում են հիմքային ապարների վրա, ավելի թույլ՝ տուֆերի և օբսիդիանների վրա: Քարաքոսները քայքայելով ապարի մակերևույթը, միևնույն ժամանակ պահպանում են այն՝ ջերմաստիճանային տատանումներից: Քարաքոսներով ծածկված ապարի վրա ջերմաստիճանային տատանումները շատ ավելի թույլ են, քան մերկ ապարի վրա:

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի հողմնա-

հարման մնացորդային կեղևի մեջ մեծ զարգացման է հասել կալցիումի կարբոնատը, որպես կարբոնատային հողմնահարման կեղև: Այն ամենից լավ զարգացած է հրաբխային զանգվածների նախալեռնային գոտում՝ 1000—1500 մ բարձրությունների վրա: Նույնատիպ կարբոնատային կեղևի մասին հիշատակում է Բ. Բ. Պոլինովը (1935), որ գիտել է Մոնղոլիայում, ցամաքային պայմաններում գտնվող լեռների նախալեռներում: Այդպիսի կեղևը յուրահատուկ է նաև անապատային կլիմայական պայմաններ ունեցող երկրներին (Իրան, Եգիպտոս, Փոքր Ասիա):

Հայկական ՍՍՏ կարբոնատային հողմնահարման կեղևի ուսումնասիրման հարցերով զբաղվել են Հ. Աբիխը, Ֆ. Յու. Լեվինսոն-Լեսսինգը, Ս. Ա. Զախարովը, Ա. Ա. Զավալիշինը, Ս. Գ. Խլեբնիկովը, Կ. Ն. Պաֆֆենհոլցը, Ա. Պ. Գեմյոխինը, Օ. Տ. Կարապետյանը, Ն. Ա. Կրասիլնիկովը, Պ. Ս. Բոշնաղյանը և ուրիշներ: Կարբոնատային կեղևի ծագման հարցի տեսակետից հետազոտողների կարծիքները տարբեր են: Երկրաբանները այն կապում են ապարի մեջ տեղի ունեցող բիմիական պրոցեսների հետ, կենսաբանները՝ միկրոօրգանիզմների:

Կարբոնատային կեղևը հանդես է գալիս տարբեր տարբերակներով, որոնց դասակարգման հարցով զբաղվել է Պ. Ս. Բոշնաղյանը: Փոշու-ալյուրի ձևով՝ խառնված կավի, կավաավազի, խճի հետ, մեկ այլ դեպքում խճի ու կոպիճի վրա առաջացնում է ամուր կեղև, հանդես է գալիս որպես ցեմենտացնող նյութ, երբեմն ամուր սալերի ձևով և այլն: Այդ կարբոնատային կեղևի հոտրությունը հասնում է մի քանի մետրի: Շատ հեղինակներ նրան սպիտակահոզ են անվանում:

Կարբոնատային կեղևի բիմիական անալիզները ցույց են տալիս, որ այն հիմնականում կազմված է  $\text{CaCO}_3$ -ից, մասամբ խառնված է  $\text{MgCO}_3$ -ով և այլն: Օրինակ՝ Ս. Ս. Կուզնեցովի (1929) ավյալներով կարբոնատային կեղևի բիմիական կազմը հետևյալն է՝  $\text{Ca}$ —35,34 %,  $\text{Mg}$ —0,81 %, մեկուկես օքսիդներ—1,16,  $\text{CO}_3$ —56,03 %, շիկացման կորուստ—2,95 %, շլտվող մնացորդ—3,80 %: Կարբոնատա-

յին կեղևը հանդիպում է խիստ տարբեր գեոմորֆոլոգիական պայմաններում և տեղադրման տեսակետից որոշակի օրինաչափություն չունի: Որպես կանոն նա յուրահատուկ է հրային ծագման ապարներին: Արարատյան դաշտում նստվածքային ծագման ապարներում այն թույլ է զարգացած կամ բացակայում է: Ամենից լավ զարգացած է մերձերևանյան շրջանում:

Քիմիական ճանապարհով կարբոնատային հողմնահարման կեղևի առաջացման մեխանիզմը հանգում է հետևյալին. միևնույն տային ջրերը, իրենց մեջ լուծելով կալցիումի կարբոնատը կամ, ավելի հավանական է՝ կալցիումի բիկարբոնատը, մազական անցքերով բարձրանում են երկրի մակերևույթ ու այնտեղ գոլորշիանում. կալցիումի կարբոնատը կուտակվում է այս կամ այն ձևով: Բարձր հիպսոմետրիկ բարձրություններից նախալեռները իջնող մակերևույթային ջրերը ևս իրենց հետ բերում են կարբոնատներ, որոնք նույնպես կուտակվում են: Միայն քիմիական ճանապարհով կարբոնատային կեղևի առաջացումը անհավանական է թվում, եթե հաշվի առնենք հետևյալ հանգամանքները.

1. Եթե կարբոնատային կեղևի առաջացման մեխանիզմը նման լիներ սալանշակների առաջացման մեխանիզմին, ապա պետք է այդ կեղևը ստեղծվեր ուղղակի երկրի մակերևույթին, սակայն և ոչ մի տեղ այն ապարների մակերևույթին չի գոյանում, այլ ստեղծվում է հողաշերտի մեջ՝ այնտեղ, որտեղ արեգակի ուղիղ ճառագայթներ չկան:

2. Հրային ապարների շերտախումբը Հայկական ՍՍՌ-ում աչքի է ընկնում ջրաթափանցիկությամբ, եկած տեղումները ներծծվում են, ուստի ջրի մեջ լուծված կարբոնատները ավելի շատ միգրացիոն հատկանիշներով են օժտված, քան ակումուլացիոն. գրունտային ջրերն այնքան խորն են, որ մազական բարձրացումը բացառվում է, ուստի կարբոնատների հեռացումն ավելի ինտենսիվ պետք է լիներ, քան կուտակումը:

3. Քիմիական ճանապարհով կարբոնատային կեղևի առաջացման դեպքում ջրբաժաններում այն պետք է ավելի պակաս հզորություն ունենար, քան ջրահավաքներում ու ջրով

առատ մասերում, սակայն այդպիսի օրինաչափություն չի նկատվում, հաճախ նկատվում է հակառակը:

4. Միայն քիմիական ճանապարհով կարբոնատային կեղևի ստեղծման դեպքում այդ կեղևը հզոր պետք է լիներ այնտեղ, որտեղ կարբոնատները տոկոսային մեծ հարաբերություն ունեն ապարների մեջ. այդպիսի օրինաչափություն չի նկատվում, երբեմն հակառակ պատկեր ենք տեսնում:

Մենք հետու ենք այն մտքից, թե կարբոնատային հողմնահարման կեղևի ստեղծման մեջ քիմիական պրոցեսներ տեղի չեն ունենում: Քիմիական պրոցեսներ անշուշտ կան, սակայն նրանք անբավարար են կուտակել այդքան հզոր կեղև: Այստեղ քիմիական պրոցեսների հետ միաժամանակ տեղի է ունենում բարդ միկրոբիոլոգիական պրոցես, որը օժանդակում է կարբոնատների կուտակման պրոցեսին:

Վ. Բ. Վերնադսկին (1934) գրում էր. «Այժմ մենք չգիտենք կալցիումի կարբոնատի կուտակման վաղուցային քիմիական ռեակցիա, որը կյանքից կախված չլինի: Անկասկած կան դեպքեր, երբ կալցիումի կարբոնատը գոյացել է մաքուր քիմիական ռեակցիաներով, բայց նա այդ դեպքում ցրված է, ստեղծում է ոչ մեծ փոշիացած կուտակումներ, որոնք գրեթե միշտ անմիջապես նորից կլանվում են օրգանիզմների կողմից»<sup>1</sup>:

Բիոլիտների ստեղծման գործում միկրոօրգանիզմների մասնակցությունը հարցը, ինչպես նշում է Բ. Լ. Իսաչենկոն (1948), առաջին անգամ արծարծվել է Դրյուի կողմից. նա նկարագրել է *Bacterium calcis*-ը, որը տաք ծովերում կարբոնատ է կուտակում: Այս եղանակով են առաջացել Բահամյան կղզիները: Բրուսովը ուսումնասիրելով Ախենի տաք աղբյուրները, այնտեղ գոյացող տրավերտինին միկրոբիոլոգիական ծագում տվեց: Պ. Բ. Քալանթարյանը և Ա. Պ. Պետրոսյանը 1934 թ. ուսումնասիրելով Սևանի հատակի կարբոնատային կուտակումները, դրանք վերագրեցին *B. Sema-nense*-ի գործունեությանը: Լ. Ա. Երզնկյանը (1949) ուսումնասիրելով Սևանի հատակի կրի շերտը, գալիս է այն

<sup>1</sup> В. И. Вернадский, Очерки геохимии, ОНТИ, М.—Л., 1934, стр. 204.

եղրակացութեան, որ այն աբդուլունք է ինչպես քիմիական, այնպես էլ բակտերիաների կենսագործունեության պրոցեսներին:

Բազմաթիվ ուսումնասիրություններով պարզվում է, որ կալցիտի մասսայական կուտակումը կապվում է կանաչ և կապտա-կանաչ ջրիմուռների, ճառագայթասնկերի, սնկերի և այլ բազմաթիվ բակտերիաների կենսագործունեության հետ: Զրիմուռները ֆոտոսինթեզի պրոցեսում կլանում են ջրի մեջ պարունակված ածխաթթուն և պայմաններ են ստեղծում քի-կարբոնատներից՝ ջրի մեջ ավելի վատ լուծվող կարբոնատների անցման համար: Բ. Լ. Իսաչենկոն գալիս է այն եղրակացու-թյան, որ ամբողջ կենդանական աշխարհում կարբոնատի կուտակումը կատարվում է մի սխեմայով՝ սկզբում նկատ-վում է ամորֆ կարբոնատ, այնուհետև՝ կալցիտի կոլոիդ, վերջում՝ բյուրեղային կալցիտ: Բնության մեջ ածխաթթվա-յին կալցիումի՝ կոլոիդ վիճակից բյուրեղայինի անցնելիս, հանդես է գալիս ցեմենտացնող հատկանիշ: Կարբոնատների կուտակումը բնության մեջ կատարվում է այնտեղ, որտեղ ջրի մեջ ածխաթթու շատ քիչ է լուծված:

Երևանից Գառնի տանող ճանապարհին հանդիպում են կարբոնատային կեղևի բազմաթիվ մերկացումներ: Բազմա-թիվ նմուշների կտրվածքում նկատում ենք հետևյալը. նախ կարբոնատային կեղևը միատարր չէ, այն պարզորոշ արտա-հայտված շերտայնություն ունի: Նկատվում է, որ կարբոնա-տային նյութը հոսել է և քարացել: Մակերևույթային շերտը փխրուն է, կազմված է սպիտակավուն ամորֆ կրից, որը հեշտությամբ քայքայվում է: Ապարին կպած շերտը ունի մուգ գույն (կեղտոտ սպիտակավուն), ամուր է, բյուրեղա-ցած, հնարավոր չէ անջատել ապարից: Այդ շերտը նույն-պես միատարր չէ: Նման պատկերը ցույց է տալիս, որ կար-բոնատային կեղևը ապարի մակերևույթին աճում է կոնցեն-տրիկ սֆերաներով. կեղևի մատերիալը աճում է դրսից և ոչ թե ապարի խորքում գտնվող կալցիումի կարբոնատի հաշ-վին: Շլիֆներում ապարի և կարբոնատային կեղևի կոն-տակտը շատ ցայտուն է արտահայտված, և ապարի հողմ-նահարման հետքեր չեն երևում: Նույնիսկ հաճախ թարմ

պլազիոկլազների բյուրեղների մի մասը գտնվում է ապարի, իսկ մյուս մասը՝ կարբոնատային շերտի մեջ:

Կարբոնատային կեղևի ստեղծման բիոքիմիական տեսությունը պատասխանում է այն հարցերին, որոնք հնարավոր չէր պարզել քիմիական տեսության միջոցով: Այսպես, օրինակ՝ ապարների ազատ մակերևույթին կարբոնատային կեղևի բացակայությունը բացատրվում է նրանով, որ արեգակի ուղիղ և ցրված ճառագայթները հնարավորություն չեն տալիս բակտերիաներին զարգանալու, հետևաբար, կարբոնատը կուտակվում է այնտեղ, որտեղ չկան այդ ճառագայթները: Բիոքիմիական տեսությունը բացատրում է նաև գեոմորֆոլոգիական տարբեր պայմաններում գտնվող և տարբեր հզորություն ունեցող կարբոնատային հողմնահարման կեղևի առաջացումը:

Բիոքիմիական ճանապարհով կալցիումի կարբոնատի կուտակումը ապացուցվում է նաև լաբորատոր հզանակով: Արարատյան դաշտի նախալեռներից մինչև Արագածի գագաթը անցնող գծով տարբեր բարձրություններից վերցրել ենք կարբոնատային կեղևի նմուշներ, որոնք Ա. Պ. Պետրոսյանի ղեկավարությամբ ՀՍՍՄ Գիտ. Ակադեմիայի Միկրոբիոլոգիական ինստիտուտում ենթարկվել են լաբորատոր ուսումնասիրությունների (Լ. Ա. Աբրահամյանի և Յ. Ս. Մաթևոսյանի մասնակցությամբ), որոնց արդյունքները տրվում են ներքոհիշյալ սխեմայում (տե՛ս աղյուսակ 10):


Անալիզների արդյունքները ցույց են տալիս, որ Արարատյան դաշտից մինչև Արագածի գագաթը զրունտների բակտերիալ բնակչության մեջ զգալի տեղ են գրավում  $\text{CaCO}_3$  նստեցնողները. ընդ որում նրանց ամենամեծ քանակը համընկնում է այն շրջանների հետ, որտեղ ամենից ինտենսիվ է զարգացած կարբոնատային կեղևը: Այսպես, օրինակ՝ կարբոնատային կեղևի մեծ հզորություն տեսնում ենք Երեանից ոչ հեռու Ավանի մոտ: Այստեղից վերցրած նմուշի մեջ (նմուշ 15)՝ կալցիումի կարբոնատ նստեցնող բակտերիաների քանակը 1 գր ապարի մեջ կազմում է 130000:

Միկրոսկոպիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մոլիբդի և ՄՊԱ (մսա-պեպտոնային ազար) միջա-

Արագածի և Գեղամա լեռնալանջերի տարբեր բարձրություններից վերցրած ապարների նմուշների  
միկրոբիոլոգիական անալիզների արդյունքները

Նմուշների №-ը	Ապարների նմուշների վայրը	Բարձրութ. ձովի մակ.-ից	Միկրոբոզանիզմների քանակը 1 գր ապարում				CaCO <sub>3</sub> նստեցնող բակտե- րիաներ 1 գր ապարում	
			Մուլիշ ազար		Մ Պ Ա.		Մուլիշ ազար	Մ Պ Ա.
			բակտերիա- ններ	սնկեր	բակտերիա- ններ	սնկեր		
1	Արագած	3200	40000	10000	30000	10000	—	1000
2	Արագած	2900	4780000	—	50000	20000	—	10000
3	Արագած	2650	1600000	—	2820000	—	10000	30000
4	Արագած	2650	670000	30000	680000	—	40000	100000
5	Արագած	2550	5400000	10000	8000000	10000	40000	200000
6	Արագած	1900	970000	40000	430000	20000	40000	10000
7	Արագած	1900	1500000	10000	600000	—	100000	10000
8	Բյուրահան	1600	8300000	10000	720000	40000	60000	—
9	Բյուրահան	1600	340000	—	130000	—	10000	—
10	Բյուրահան	1600	1900000	40000	650000	10000	2000	10000
12	Եղվարդի պլատո	1300	1300000000	30000	1160000000	30000	40000	3000
15	Ավան	1200	5400000	20000	5800000	30000	130000	130000
16	Գառնի	1500	2800000	50000	300000	70000	40000	120000

վայրերում բակտերիալ ցանք կատարելուց ընդամենը 1—3 օր հետո գոյանում են կանոնավոր սֆերոլիտներ 0,003—0,03 մմ մեծությամբ: Կալցիտի կոնկրեցիաները աճում են մի կենտրոնից ճառագայթաձև. սկզբնական շրջանում շատ փխրուն են, թեթև հպումից սֆերոլիտները փշրվում են ճառագայթաձև ուղղությամբ: Մի քանի օր անցնելուց հետո սֆերոլիտները միանալով կազմում են խմբեր և ավելի հոծ զանգվածներ (գծ. 21): Սֆերոլիտների խմբերից ստեղծվում



Գծ. 21. Միկրոօրգանիզմների միջոցով ստեղծված կալցիտի բյուրեղներ՝ 1. ցանքի 2-րդ օրը, 2. ցանքի 4-րդ օրը, 3. ցանքի 10-րդ օրը, 4. ցանքից մեկ ամիս անց

են տձև զանգվածներ, որոնք որևէ կանոնավոր երկրաչափական ձև չունեն: Աղաթթվի ազդեցությամբ անմիջապես քայքայվում են, արձակելով ածխաթթու գազ:

Բնության մեջ կալցիումի կարբոնատի կուտակման աս-

պարեզում՝ բախտերիաների դերը կայանում է նրանում, որ կայում են կալցիումի կարբոնատը այնտեղ, որտեղ կալցիումի միացություններ կան: Չնչին խոնավության առկայության պայմաններում բախտերիաները ծավալում են իրենց կենսազործունեությունը, կուտակելով կարբոնատային կեղև: Հնարավոր է, որ նրանք ածխաթթուն վերցնում են օդից, իսկ կալցիումը ստանում են թե՛ ապարներից և թե՛ օդից՝ փոշու ձևով:

Ինչպես քարաքոսները, այնպես էլ բախտերիաները գերադասում են հիմքային ապարները: Տուֆերի տարածման շրջաններում կարբոնատային կեղևը թույլ է զարգացած: Այսպիսով, կարբոնատային հողմնահարման կեղևի առաջացման մեջ միկրոօրգանիզմների դերը հսկայական է. քիմիական ռեակցիաների հետևանքով առաջացած կարբոնատներն ու բիկարբոնատները արագությամբ հեռացած կլինեին, եթե միկրոօրգանիզմները չկապեին նրանց: Հնարավոր է, որ կարբոնատային կեղևի մի մասը երկրաբանական ոչ վաղ անցյալում տրավերտինի կուտակման արդյունք է (ինչպես նշում են մի շարք երկրաբաններ), սակայն տրավերտինի կուտակման պրոցեսը ևս գերծ չի եղել միկրոօրգանիզմների գործունեությունից:

\* \* \*

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակում ապարների հողմնահարման մեջ զգալի դեր է կատարում քիմիական հողմնահարումը: Վերջինս հանգում է նրան, որ մայր ապարը, դուրս գալով երկրի մակերևույթ, գառնում է անկայուն նոր քիմիական միջավայրում և նրա հետ փոխհարաբերության մեջ մտնելով, ենթարկվում է քիմիական կարգի փոփոխությունների: Փոփոխությունների վերջնական արդյունքը լինում է այն, որ այդ ապարները վեր են ածվում տվյալ միջավայրի համար ավելի կայուն ապարների: Մասշտաբի տեսակետից՝ ուսումնասիրվող տերիտորիայում քիմիական հողմնահարումը ավելի թույլ է, քան մեխանիկական հողմնահարումը, սակայն զգալի դեր ունի: Ամենից ինտենսիվ կերպով այն հանդես է գալիս ցածրադիր

մասերում, սակայն խոնավության պակասը կաշկանդում է քիմիական պրոցեսների ավելի լայն դարգացմանը: Ըստ բարձրությունների քիմիական հողմնահարումը թուլանում է, շնորհիվ ջերմաստիճանի իջեցման և հողմնահարման ակտիվ պերիոդի կրճատման: Պետք է նշել, որ Հայկական ՍՍՌ արտաժայթուկները հողմնահարման նկատմամբ մեծ զիմազրույականությունը օժտված ապարներ են: Ենթալավային աղբյուրների ջրերը շատ քիչ քանակի լուծված նյութեր են պարունակում: Այնուամենայնիվ, որոշ քանակի նյութեր լուծվում են ջրում և դանդաղ կերպով միգրացիա կատարում: Տուֆերի լարորատոր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեկ տարի նրանց ջրի մեջ պահելուց հետո ծավալի 0,02—0,06 % -ը լուծվում է ջրում (Չ. Ա. Հացագործյան, 1960):

Արտաժայթուկների քիմիական քայքայումը ամենից ինտենսիվ է մակերևույթային շերտում՝ արեգակի ճառագայթների ու մթնոլորտային ազդակների ազդեցության տակ: Արտաժայթուկների քիմիական հողմնահարման մեջ ամենաանկաշունը դաշտային շպտոներն են: Սրանք քայքայվում են մթնոլորտային ջրերի ու նրանց մեջ պարունակվող ածխաթթու գազի ներգործությամբ՝  $K_2Al_2Si_6O_{18} + CO_2 + 2H_2O = K_2CO_3 + H_2Al_2Si_2O_8 + 4SiO_2$ :

Այստեղ օրթոկլազը վերածվում է կաոլինի, նրանից անջատվում են սիլիկահողն ու ածխաթթվային կալիումը և միգրացիայի ենթարկվում: Ապարների կաոլինացման պրոցեսը համեմատաբար արագ է ընթանում թթու հումուսային ջրերի ներգործության տակ: Շատ միկրոօրգանիզմներ իրենց կենսական պրոցեսների ընթացքում արտաթորում են ածխաթթու, որը ջրի հետ միասին արագությամբ ներգործում է դաշտային շպտոների վրա: Դաշտային շպտոների կաոլինացման հետևանքով հաճախ արտաժայթուկների բավական հաստ շերտ ամբողջովին վերածվում է կավային մատերիալի, պահպանելով արտաքին տեսքը: Նկատված է, որ խոնավության և ջրի առկայության պայմաններում արտաժայթուկները փափկում են:

Արտաժայթուկների քիմիական հողմնահարման ինտեն-

սիլվոթյունը կախված է ապարների գումարային մակերեսի մեծությունից: Որքան ապարը շփման մեծ մակերես ունենա մթնոլորտի ու ջրի հետ, այնքան քիմիական հողմնահարումը ինտենսիվ կընթանա: Որքան ապարը բեկորահատվում է, այնքան մեխանիկական մանրացման պրոցեսը թուլանում է, մինչդեռ մեծանում է նրա մակերեսը և քիմիական ներգործության հնարավորությունը: Հասնում է մի այնպիսի վիճակ, երբ այլևս ապարը չի մանրանում, այլ ենթարկվում է քիմիական քայքայման:

Արտածայթուկներում պլագիոկլազները արտահայտված են ալբիտի ( $\text{Na}_2 \text{Al}_2 \text{Si}_6 \text{O}_{16}$ ) ու անորթիտի ( $\text{CaAl}_2 \text{Si}_2 \text{O}_8$ ) իզոմորֆ խառնուրդներով (օլիգոկլազ, անդեզին, լաբրադոր, բիտովնիտ): Պլագիոկլազների կազմում գտնվող անորթիտը քայքայվելով, տալիս է կաոլին ու կալցիումի կարբոնատ, իսկ վերջինս կուտակվելով՝ առաջացնում է կարբոնատային կեղև, որի մասին արդեն խոսվել է: Այդ սեպտիան ընթացում է հետևյալ կերպ՝  $\text{CaAl}_2 \text{Si}_2 \text{O}_8 + \text{CO}_2 + \text{H}_2\text{O} = \text{H}_2 \text{Al}_2 \text{Si}_2 \text{O}_8 + \text{CaCO}_3$ : Ջրի մեջ գտնվող ածխածինը մեծացնում է նրա լուծունակությունը և նպաստում է կալցիումի կարբոնատի միզրացիային՝  $\text{CaCO}_3 + \text{CO}_2 + \text{H}_2\text{O} \rightleftharpoons \text{Ca}(\text{HCO}_3)_2$ :

Ինչպես հայտնի է, կալցիումի բիկարբոնատը 30 անգամ ավելի մեծ միզրացիոն ունակություն ունի, քան կալցիումի կարբոնատը, և արագությամբ հեռանում է:

Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի արտածայթուկների քիմիական քայքայումից ստացված արգասիքները տարբեր շափով են հեռանում, ունեն տարբեր միզրացիոն հատկանիշներ: Այսպես, օրինակ՝ Արագածի կատարային գոտուց վերցրած թարմ անդեզիտա-գուցիտը մանրացրել ենք փոշու աստիճան և պատրաստել ջրային քաշվածք 1:10 հարաբերությամբ, որի քիմիական բաղադրության և ապարի քիմիական կազմի համեմատությունը ցույց է տալիս, որ ապարի կազմի համեմատ ամենից բարձր տոկոսային հարաբերություն ջրային քաշվածքում ունի բլորը: Նրա քանակը այնքան քիչ է ապարում, որ հազվադեպ են նշում և ըստ Պ. Ի. Լեբեդևի՝ 0,04 %-ից չի անցնում, մինչդեռ ջրային քաշվածքում նա զգալի տեղ է գրավում: Այնու-

հետև դալիս են պլազիոկլազների կազմի մեջ մտնող ալկալի-  
ներն ու սիլիկաթուն: Երկաթի ու ալյումինիումի օքսիդների  
ջրային քաշվածքում շկան: Ապարի կազմում գտնվող կվար-  
ցը այն միներալների շարքին է դասվում, որոնք ամենից ուշ  
են քայքայվում ու լուծվում, ուստի կազմում են մնացորդա-  
յին հողմնահարման կեղևի ամենակարևոր բաղադրիչը:

Ջրային քաշվածքի արդյունքները միանգամայն համա-  
պատասխանում են Բ. Բ. Պոլինովի (1948) կողմից մշակ-  
ված էլեմենտների ու միացությունների միգրացիոն կարգին  
(տե՛ս ներածական բաժինը), որտեղ ամենից շուտ միգրա-  
ցիա են կատարում քլորի ու ծծմբի միացությունները, այնու-  
հետև, ալկալիները՝ այլ անիոնների հետ միասին, ալեյի ուշ՝  
ալյումինիումի, երկաթի, սիլիցիումի օքսիդները:

Հալկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի վրա-  
թափված մթնոլորտային տեղումների զգալի մասը ներծծվե-  
լով, հետագայում հանդես է գալիս հզոր աղբյուրների ձե-  
վով: Այդ աղբյուրների ջրերի քիմիական բաղադրությունը  
պարզորոշ կերպով ցույց է տալիս ապարների կազմում  
գտնվող տարբեր քիմիական էլեմենտների ու միացություն-  
ների միգրացիոն ունակությունը: Տարբեր աղբյուրների քի-  
միական կազմի տվյալները համեմատելով, նկատում ենք,  
որ ենթալավային ջրերը փոքր միներալիզացիա ունեն և  
նման են միմյանց, չոր մնացորդի քանակը չի հասնում 200  
մգ/լ: Քիմիական կազմում ամենից մեծ տեղ զբաղում են  
 $\text{HCO}_3^-$ ,  $\text{Ca}^{++}$ ,  $\text{Cl}^-$  իոնները: Պեսք է նշել, որ ըստ ծովի մա-  
կերևույթից ունեցած բարձրության՝ աղբյուրների միներալիզա-  
ցիան սովորաբար փոքրանում է: Օրինակ՝ Այդր լճի շրջանում  
զուրս եկող աղբյուրների միներալիզացիան հասնում է 164  
մգ/լ-ի, իսկ Արագածի մերձկատարային աղբյուրների ջրինը՝  
ուշ ալեյի, քան 60—80 մգ/լ-ի: Ելնելով տարբեր քիմիական  
միացությունների միգրացիոն ունակություններից, պեսք է  
ենթադրել, որ տեղում մնացած հիմնական միացությունները  
հանդիսանում են ալյումինիումի, երկաթի և սիլիցիումի օք-  
սիդները, որպես կավերի բաղադրության ամենակարևոր բա-  
ղադրիչները:

Քիմիական հողմնահարման վերաբերյալ հետաքրքիր

տվյալներ է տալիս հրային ապարների շրջանում ձևավորվող գետերի ջրի բաղադրության ուսումնասիրությունը: Մենք ուսումնասիրել ենք հրաբխային բարձրավանդակով հոսող յոթ գետերի քիմիական հոսքը (Ախուրյան, Քասաղ, Զորագետ, Արգիճի, Վարդենիկ, Գավառագետ): Մշակելով Հիդրոմետ ծառայության վարչության 10 տարվա գրեթե բոլոր ամիսներին կատարած քիմիական անալիզների տվյալները (1946—1957 թթ.), մենք հնարավորություն ունենք նշելու քիմիական հոսքի մի շարք օրինաչափություններ: Բարձրավանդակով հոսող գետերի ջրի տարեկան միջին միներալիզացիան հետևյալ պատկերն է ներկայացնում (աղյուսակ 12).


Աղյուսակ 12

Գետի և ջրաչափ. կայանի անվանումը	Միջին բալիզ. մգ/լ	Գետի և ջրաչափ. կայանի անվանումը	Միջին բալիզ. մգ/լ
Ախուրյան—Կապս	175	Ագատ—Զովաշեն	169
Ախուրյան—Հայկաձոր	269	Արգիճի—Վերին Գետաշեն	127
Զորագետ—Գերգերի գետարեբան	166	Վարդենիկ—Վարդենիկ	66
Քասաղ—Աշտարակ	177	Փավառագետ—Նորադուզ	174

Ինչպես երևում է աղյուսակից, բացի Ախուրյան—Հայկաձոր և Վարդենիկ գետերից, մնացած գետերի ջրի ընդհանուր միներալիզացիան միմյանց շատ նման է: Այդ ցույց է տալիս, որ գետերի ձևավորման պայմանները նույնն են: Մինչև Կապս Ախուրյանը ունի այն հատկանիշները, ինչ մնացած գետերը, սակայն ավելի ցած՝ Հայկաձորի մոտ միներալիզացիան մեծանում է: Այդ պետք է բացատրել, մեր կարծիքով, նրանով, որ Լենինականի հաստվածքի սահմաններում Ախուրյանի մեջ թափվող ջրերը այդ հաստվածքի փխրուն նստվածքներից դուրս են բերում մեծ քանակությամբ զանազան աղեր և մեծացնում միներալիզացիան: Ինչ վերաբերում է Վարդենիկ գետին, ապա այստեղ ըստ երևույթին գետավազանի ջրերը արագությամբ են հեռանում, ապարները ավելի կա-

յուն են քիմիական հողմնահարման նկատմամբ, ուստի լուծման պրոցեսը թույլ է:


Գետերի ջրի միներալիզացիայի<sup>1</sup> տարեկան ընթացքը հետևյալ պատկերն է ներկայացնում (գծ. 22, 23): Գրաֆիկ-



Գծ. 22. Ախուրյան, Ջորագետ և Քասաղ գետերի քիմիական հոսքը 10 տարվա ավալներով

ներից պարզ նկատում ենք, որ գետերի ջրի միներալիզացիան տարվա ընթացքում անընդհատ փոփոխվում է, ընդ որում այն աճում է ամառային և ձմեռային ամիսներին, իսկ զարնանը ապրիլ-մայիս ամիսներին հասնում է մինիմումի: Այդ բացատրվում է նրանով, որ զարնանային ամիսներին գետի ծախսը խիստ մեծանում է ձնհալքի և անձրևների

<sup>1</sup> Միներալիզացիայի մեջ հաշվի են առնված հիմնական 7 իոնները՝  $\text{Ca}^{++}$ ,  $\text{Mg}^{++}$ ,  $\text{Na}^{+}$  +  $\text{K}^{+}$ ,  $\text{HCO}_3^{-}$ ,  $\text{SO}_4^{--}$ ,  $\text{Cl}^{-}$ :



Պժ. 23. Աղատ, Արզիճի, Վարդենիկ և Չավառագետ գետերի քիմիական հոսքը 10 տարվա տվյալներով

մաքսիմումի հետևանքով, իսկ սակավաջուր պերիոդներում, բացառապես ստորերկրյա ջրերից, միներալիզացիան մեծանում է: Սակայն գետերի քիմիական ծախսը, այնուամենայնիվ, մեծ է զարնանք՝ ջրառատ պերիոդում, որովհետև գետի ջրի ծախսի աճը՝ մեծանում է տասնյակ անգամ, մինչդեռ միներալիզացիան պակասում է ոչ ավելի 2—3 անգամ: Միներալիզացիայի տարեկան ընթացքում նկատում ենք նաև այն, որ բացարձակ մաքսիմումի և բացարձակ մինիմումի հարաբերությունը մեծ թիվ չի կազմում այնպես, ինչպես, ասենք, գետի ծախսի մեջ (աղյուսակ 15):

Գետի ջրում առանձին իոնների քանակի փոփոխությունը տարվա ընթացքում՝ մեր կողմից ուսումնասիրվել է երկու՝ Ախուրյան—Կապս և Քասաղ—Աշտարակ գետերի նկատմամբ, որոնք առավել բնորոշ են: Տարբեր իոնների բացարձակ մաք-

Գետի անվանումը	Միներալիզացիան մգ/լ	
	մաքսիմում	մինիմում
Ախուրյան—Կապս	260	95
Ախուրյան—Հայկաձոր	362	133
Զորազետա—Գերգերի գետաբերանից ցած	259	58
Քասաղ—Աշտարակ	285	74
Ազատ—Զովաշեն	246	84
Արգիճի—Վերին Գետաշեն	155	67
Վարդենիկ—Վարդենիկ	100	32
Գավառագետ—Նորաղուզ	233	89

սիմումի և մինիմումի փոխհարաբերությունը ակնառու է ստորև բերվող աղյուսակում (10 տարվա տվյալներով):

Աղյուսակ 16


Իոնները	Ախուրյան			Քասաղ		
	մաքս. մգ/լ	մին. մգ/լ	հարաբ.	մաքս. մգ/լ	մին. մգ/լ	հարաբ.
Ca <sup>++</sup>	43	10	2,7	30	15	2
Mg <sup>++</sup>	14	2	7	14	1	14
Na <sup>+</sup> +K <sup>+</sup>	35	0,2	175	31	1	31
HCO <sub>3</sub> '	183	61	3	139	50	2,7
SO <sub>4</sub> '	40	4	10	47	5	9,4
Cl'	13,5	0,1	185	24	2	12

Ինչպես Ախուրյան, այնպես էլ Քասաղի համար ամենից մեծ տատանումներ ունենում են Na<sup>+</sup> և K<sup>+</sup> իոնները, իսկ Ախուրյան գետի համար՝ նաև Cl' իոնը: Համեմատաբար քիչ տատանումներ նկատում ենք Ca<sup>++</sup> և HCO<sub>3</sub>' իոնների մաս: Բացի այդ, նկատում ենք, որ Ախուրյանի ավազանում իոնների քանակի բացարձակ մաքսիմումի և մինիմումի հարա-


բերությունն անհամեմատ ավելի մեծ է, քան Քասաղի ավազանում: Ըստ երևույթին Քասաղի ավազանում ստորերկրյա ջրերը համեմատաբար կայուն քանակի աղեր են պարունակում:

Գետերի ջրերի քիմիական անալիզները ցույց են տալիս, որ բացի հիմնական իոններից, ջրի մեջ լուծված են նաև այլ էլեմենտներ ու միացություններ, որոնցից կարևորը սիլիկաթթուն է: Ախուրյան գետում այն հասնում է 5 մգ/լ-ի (տարեկան միջինը), ձմռանը ավելանալով, հասնում է 10—12-ի, իսկ գարնանը՝ 3—4 մգ/լ-ի: Մոտավորապես նույն պատկերը տեսնում ենք նաև Քասաղ ու այլ գետերում: Երբեմն  $\text{SiO}_2$ -ի քանակը կարող է հասնել մինչև 24—17 մգ/լ-ի: Գետի ջրում լուծված է նաև երկաթ, ալյումինիում, սակայն նրանց քանակը շատ քիչ է: Այսպես, օրինակ՝ Ախուրյանի ջրում ամենից շատ երկաթ լուծված է աշնանային և ձմեռային ամիսներին, մինչև 0,2 մգ/լ: Գրեթե նույն պատկերն ենք տեսնում մյուս գետերում:

Ուշագրավ է այն, որ ակունքից հեռանալով, գետի միներալիզացիան մեծանում է: Եթե բարձրավանդակի բարձրադիր մասերում միներալիզացիան հասնում է 60—130 մգ/լ-ի (Վարդենիկ, Արգիճի), ապա Արաքս գետում՝ 400 մգ/լ-ի (Կարակալա): Դուրս գալով ՀՍՍՌ սահմաններից, Արաքսի միներալիզացիան հասնում է 600—800 մգ/լ-ի: Միներալիզացիայի փոփոխման հետ միասին փոխվում է նաև իոնների փոխհարաբերությունը.  $\text{Cl}'$ ,  $\text{SO}''_4$ ,  $\text{Mg}''$  իոնները զգալի չափով ավելանում են, իսկ  $\text{Ca}''$ ,  $\text{HCO}'_3$  իոնները պակասում: Այսպես, օրինակ՝ 1949 թ. մարտ ամսին Ախուրյանի վրա  $\text{Ca}''$  և  $\text{Cl}'$  իոնների հարաբերությունը եղել է 9:1, մինչդեռ Արաքսի վրա կարակալալում՝ 1,1:1: Ավելի ցած՝ Կարադոնլիում քլորը գերազանցում է կալցիումին: Եթե գետի վերին հոսանքներում  $\text{SO}''_4$  իոնը  $\text{Ca}''$ -ի համեմատությունը մի քանի անգամ պակաս է, ապա Արաքս գետում  $\text{SO}''_4$  իոնը գերազանցում է  $\text{Ca}''$ -ին: Այսակերպ պարզ է պատկերվում, որ կալցիումի իոնը ուղղաձիգ գոտիականության մեջ հասնելով որոշ բարձրության, կուտակվում է: Մինչդեռ  $\text{Cl}'$ ,  $\text{SO}''_4$  իոնները անհնալով միգրացիոն մեծ ունակություն, հեռանում են:



Քձ. 24. Ախուրյան գետի բիմիական հոսքում տարբեր իոնների քանակի դրաֆիկ (10 տարվա միջինը)



Քձ. 25. Քասաղ գետի հոսքում տարբեր իոնների քանակի դրաֆիկ (10 տարվա միջինը)

Հետևելով Բ. Բ. Պոլինովի (1935) կողմից առաջարկած սխեմային, Հայկական ՍՍՌ հրաբխային բարձրավանդակի բարձրադիր մասերը պետք է դասվեն մնացորդային հողմնահարման կեղևի (օրթոէլյուվիի) առաջին-բեկորահատման ստադիայի մեջ: Նախալեռնային շրջանները դասվում են երկրորդ ստադիայի մեջ, որը կոչվում է կրակավման կամ հագեցման ստադիա: Այստեղ կուտակվում են մեխանիկական հողմնահարման պրոդուկտները և կարբոնատները: Համեմատաբար ցածրադիր մասերում (Արարատյան դաշտ) թույլ մակերևութային հոսքի պատճառով քլորիդներն ու սուլֆատները մնում են տեղում, հնարավորութուն չունեն միգրացիայի ենթարկվելու, ուստի առաջացնում են աղուներ:

